11393

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ III

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1929

3(02)
Ք-16

Ca1414
3(02)
Բ-16
25 SEP 2006
1 DEC 2009

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բ. ՈԼ'ԽՈՎՈՅ

Հանձնարարված է Լենկոմյերիտմիության
Կենտկոմի Ագիտ-Պրոպ բաժնի կողմից

ՊՐԱԿ III

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1929

29 AUG 2013

Այս դասագիրքը կազմել են՝ ԲՐՈՆԻՆ, ԿԱՑԻՄԵՆԿՈ, ԿՈԼԵՍՆԻԿՈՎ, ՌԵԶՆԻԿ յեվ ԼԵՈՆՏԻՅԵՎ. ընդհանուր խմբագրությունը՝ Բ. ՈԼ'ԽՈՎՈՅԻ:

Հայերեն թարգմանությունը (փոխադրությունը) հրատարակում ենք յերեք պրակով:

Դասագիրքը կազմված է համաձայն այն ծրագրի (1928—29 ուս. տար.), վոր Լենկոմյերիտմիության Կենտկոմը հաստատել է քաղդպրոցների համար:

ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
59713·66

Главлит № А 13349 Заказ № 2169 Тираж 5000
Книжная ф-ка Центр. Издат. Народов СССР. Москва, Шлюзовый пр., 6

ՀԱՄ. ԿՈՄ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (Բ) ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՎՈՐ ՋՈԿԱՏՆ Է

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Բանվոր դասակարգը — բոլոր ճնշվածների յեվ շահագործվածների ղեկավարն է. — *Կապիտալիստական հասարակակարգում միայն բանվոր դասակարգը չէ, վոր ճնշվում և շահագործվում է։ Կապիտալի ճնշման տակ տառապում է նաև մանր բուրժուական մասսայի խոշոր մասը, այն է՝ տնայնագործները և արհեստավորները, վորոնք չեն շահագործում ոտարի աշխատանքը, մանր առևտրականները, և վոր գլխավորն է՝ աղքատ և միջակ գյուղացիության մասսաները։ Խոշոր կապիտալն իր տիրապետությանն է յենթարկում գյուղացիական մանր տնտեսությունը. կապիտալիստական արտադրության կենտրոնացումը շարունակում է տանել դեպի մանր տնտեսության քայքայումը. և գյուղացիության մի մասը դառնում են պրոլետարներ (հիշիր, թե ինչ եր այդ մասին գրված I պրակի II գլուխում)։ Տնտեսական ճնշմանը համապատասխանում է և քաղաքական ճնշումը։ Չնայած կարծեցյալ քաղաքական «ազատություններին», գյուղացիության մասսաները ևս բանվորների նման զուրկ են քաղաքական իրավունքներից։ Բուրժուական պետության ղեկը գտնվում է խոշոր կապիտալիստների մի փոքրիկ խմբակի ձեռքը, վորը աշխատավոր մասսաներին ստիպում է ծառայել հօգուտ կապիտալի։*

Սակայն կապիտալիստական հասարակակարգում միայն բանվոր դասակարգն է, վոր վճռականորեն և հետևողաբար պայքարում է՝ բուրժուազիային տապալելու համար։ Ընդհակառակը, աշխատավոր գյուղացիությունը կապիտալի դեմ պայքարելու գործում ավելի պակաս կայունություն է ցույց տալիս։ Դրա պատճառն այն է, վոր բանվոր դասակարգը և գյուղացիությունը հանրային արտադրության մեջ տարբեր դեր են բռնում և տարբեր դեր են խաղում աշխատանքի համայնական կազմակերպման գործում։

«Գյուղացիները, — ասում է ընկ. Լենինը, — հավաքված չեն մեծ գործարաններում, այլ ցրված են և ունեն մանր, մեկուսացած տնտեսություններ։ Գյուղացիները չեն տեսնում իրենց առաջ բացարձակ, հայտնի միակ թշնամուն՝ կապիտալիստին, այնպես, ինչպես բանվորները։ Ահա թե ինչու չքավոր գյուղացիության ամբողջ մասսան բոլոր յերկրներում էլ, ազատության և սոցիալիզմի համար պայքարելու գործում, ավելի անկայուն դուրս յեկավ, քան բանվորները»։

Գյուղացին ինքն է աշխատում հողի վրա. և այդ հանգամանքը նրան մոտեցնում է պրոլետարիատին։ Բայց գյուղացին միևնույն ժամանակ մանր սեփականատեր է — իսկ այդ հանգամանքը նրան մոտեցնում է բուրժուազիային։ Գյուղացիության դրության այդպիսի յերկվությունն առաջ է բերում նրա մեջ տատանում և անկայունություն։ Ցել նույնը պիտի ասել ամբողջ մանր բուրժուազիայի մասին, այսինքն տնայնագործների, արհեստավորների և այլն մասին։

Իսկ բանվորը չունի սեփականություն, չունի արտադրության գործիքներ։ Նրա միակ սեփականությունը՝ նրա բանվորական ուժն է, վորը նա ծախում է կապիտալիստին։ Կապիտալիստական գործարաններում, վորտեղ հազարավոր բանվորներ են հավաքված, պրոլետարիատն «անցնում է աշխատանքի կռող-կոփող դպրոց» (Լենին)։ Այստեղ բանվորներին միացնում և համախմբում են գոյության միատեսակ պայմանները, կարգապահության և վարժեցնում կոլեկտիվ աշխատանքը, այստեղ բանվորները հակադրվում են մի թշնամու — կապիտալիստին։ Այդ հանգամանքը դաստիարակում է բանվորների մեջ համերաշխության զգացմունք և նրանց մղում դեպի իրենց ուժերի կազմակերպումը՝ բուրժուազիայի դեմ պայքարելու համար։ Բանվոր դասակարգին «վարժեցրել, համախմբել, դաստիարակել և կռել ու կոփել են կապիտալի դեմ մղած գործադուլային և քաղաքական պայքարի տասնյակ տարիները» (Լենին)։

Ահա թե ինչու կապիտալիստական հասարակության առաջավոր դասակարգը հանդիսանում է պրոլետարիատը։ Ահա թե ինչու բանվոր դասակարգը հանդես է գալիս վորպես ճնշվողների և շահագործվողների ղեկավար՝ շահագործողների դեմ պայքարելու գործում։ Այդպես եր 1905 թվին, յերբ բանվոր դասակարգը գլխավորեց հեղափոխական պայքարը՝ ցարական ռեժիմը տապալելու և կալվածատերերի հողատիրությանը վերջ տալու համար։ Այդպես եր և 1917 թվին, յերբ բանվոր դասակարգը գլխավորեց պայքարը բուրժուազիայի դեմ։ Քաղաքացիական կռիվները հաղթությամբ վերջացան այն պատճառով, վոր ղեկավարը բանվոր դասակարգն եր։ Նույն պատկերը մենք տեսնում ենք նաև ուրիշ յերկրներում։ Այնտեղ էլ հարստահարվողների դեմ մղվող պայքարի ղեկավարը բանվոր դասակարգն է։ Բավական է վերցնել Չինաստանի օրինակը. հեղափոխական պայքարը գլխավորում են բանվորները։ Վերջին տարվա ընթացքում քանի՜ հազար բանվորներ ընկան Շանհայում, Կանտոնում, Խանկոյում և ուրիշ քաղաքներում։

Այնտեղ, վորտեղ գյուղացիությունը փորձել է ինքնուրույն կերպով պայքարել՝ մերժելով բանվոր դասակարգի ղեկավարությունը, շարունակ պարտություն է կրել։ Դա մենք տեսանք Բուլղարիայի օրինակի վրա, վորտեղ մի ժամանակ իշխանության գլխին կանգնած եր գյուղացիական կուսակցությունը («Գյուղացիական միությունը»)։ Այդ կուսակցության մանր բուրժուական ղեկավարները վոչ միայն բանվոր դասակարգի հետ դաշինք չկնքեցին, այլ նույնիսկ սկսեցին հալածել բանվորական կազմակերպությունները։ Հենվելով գյուղացիության հարուստ խավերի վրա, նրանք բոլորովին անուժ հանդիսացան բուրժուազիայի դեմ պայքարելու համար։ Ցել բուրժուազիան, շատ շուտով տապալելով գյուղացիական կուսակցության իշխանությունը (1923 թ), սահմանեց տեռորի ամենակատաղի ռեժիմ։

«Ճնշված դասակարգերի բոլոր շարժումների փորձը, սոցիալիստական համաշխարհային շարժման փորձը մեզ սովորեցնում է, վոր միայն պրոլետարիատը կարող է ի մի համախմբել աշխատավոր և շահագործվող ազգաբնակչության ցրված ու յետամնաց խավերը և նրանց տանել յուր յետևից» (Լենին)։

Կուսակցությունը բանվոր դասակարգի առաջավոր ջոկատն է. — Պրոլետարիատի պայքարը կապիտալի դեմ գլխավորում է նրա կուսակցությունը — Համկոմկուսը, վորը հանդիսանում է բանվոր դասակարգի առաջավոր ջոկատը։ «Մեր կուսակցությունը, — ասում է ընկ. Լենինը, — բանվոր դասակարգի ազատագրման գիտակից և առաջավոր մարտիկների միությունն է»։

Բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի կոչումը նվաճվում է դասակարգային պայքարի ընթացքում և այդ պայքարի փորձի

շնորհիվ։ Բացի մեր կուսակցությունից, ուրիշ կուսակցություններ էլ դուրս են յեկել և խոսել բանվորների անունից։ Մենշևիկներն էլ բանվորական կուսակցություն էյին իրենց անվանում։ Էսէռներն էլ բանվորների պաշտպան էյին հայտարարում իրենց։ Սակայն պայքարի փորձի վրա բանվոր դասակարգը համոզվեց, վոր գործով միայն բոլշևիկներն են կռվում բանվոր դասակարգի շահերի համար, վոր բոլշևիկների կուսակցությունը — դա իսկապես պրոլետարիատին նվիրված ամենալավ, անձնվեր և համարձակ մարտիկների ջոկատն է։

«Բոլշևիզմը, վոր առաջ է յեկել այդ գրանիտային թեորետիկ բազայի վրա (այսինքն մարքսիզմի բազայի վրա), — ասում է ընկ. Լենինը, — 15 տարվա (1903—1917) փորձի պատմություն ունի և իր փորձառության հարստությամբ աշխարհումս հավասարը չունի»։ Այդ 15 տարվա ընթացքում բոլշևիկները չորս ռազմական քննություն են անցել։ Առաջինը — 1905 թվի հեղափոխությունն է։

Այդ հեղափոխության սկիզբը կազմում են «Արյունոտ կիրակի»-ի դեպքերը, վորոնք տեղի ունեցան 1905 թ. հունվարի 9-ին։ Պետերբուրգի բանվորները, վոր արդեն գիտակցում էյին տիրող կարգերի ծանրությունը, բայց դեռ չէյին դադարել ցարին հավատալուց, գնացին նրա մոտ խնդրելու, վորպեսզի նա թեթևացնի իրենց անտանելի և ծանր դրությունը։ Բայց ցարը նրանց գնդակներով դիմավորեց։ Հազարից ավելի բանվորներ սպանվեցին։ Այդ գնդակները վերջնականապես խորտակեցին դեպի ցարն ունեցած հավատի մնացորդները։ Հունվարի 9-ի դեպքը ցնցեց կուտակված հեղափոխական ուժերը և շարժեց բանվորական մասսաները։ Հունվարի 9-ի գնդակահարությանը բանվոր դասակարգը պատասխանեց գործադուլներով և հրապարակային ցույցերով։ Հունվար և փետրվար ամիսներին գործադուլ արին 737.000 բանվոր, մինչդեռ նախորդ տասնամյակում — 432.000 բանվոր։

Կուսակցությունը հենց առաջին որերից անցնում է հեղափոխության գլուխ։ Ընկ. Լենինի բերանով կուսակցությունը հունվարի 9-ի դեպքերի մասին ասում է. «Բանվոր դասակարգը քաղաքացիական կռվի մեծ դաս ստացավ... Ժողովրդի զինման խնդիրը դառնում է հեղափոխական մոմենտի խնդիրներից մեկը»։ Բոլշևիկները գործադուլների և հրապարակային ցույցերի գլուխ են անցնում։ Կուսակցության յերրորդ համագումարը (ապրիլ — մայիս 1905 թ.) գտնում է, վոր կուսակցության ամենագլխավոր և անհետաձգելի խնդիրներից մեկն է — կազմակերպել պրոլետարիատը՝ միապետության դեմ զինված ապստամբություն կատարելու համար։

Մենշևիկներն ագիտացիա էյին մղում բանվորների զինման դեմ։ Իրենց դավաճանական տակտիկան նրանք աշխատում էյին քողարկել, ասելով, թե բանվորներին հարկավոր է զինել վոչ թե հրացաններով, այլ... զինվելու ցանկությամբ։ Բոլշևիկների և մենշևիկների դեպի զինված ապստամբությունն ունեցած տարբեր վերաբերմունքը բացատրվում է նրանով, վոր նրանք տարբեր կերպով էյին գնահատում հեղափոխության շարժիչ ուժերը, այն է՝ պրոլետարիատի, գյուղացիության և բուրժուազիայի դերը հեղափոխության մեջ։

Բոլշևիկները 1905 թ. բանվոր դասակարգի առաջ չէյին դնում սոցիալիստական հեղափոխության խնդիրը։ Դրա համար այն ժամանակ պայմանները դեռ չէյին հասունացել։ Հեղափոխությունն այն ժամանակ իր համար անմիջական նպատակ չէր դնում՝ իսկույն և յեթ հաստատել պրոլետարական դիկտատուրա, վոչնչացնել բուրժուական սեփականությունը՝ ազգայնացնելով գործարանները, բանկերը և այլն։ Հեղափոխությունը պիտի տապալեր ցարական իշխանությունը և նրա կառավարության բյուրոկրատիկ-վոստիկանական ապպարատը։ Հեղափոխությունը պիտի ազատեր գյուղացիությունը կալվածատերերի լծից, տալով նրան վերջիններիս հողը։ Բանվորներին հեղափոխությունը պիտի տար 8-ժամյա բանվորական որ, աշխատանքի պայմանների ընդհանուր բարելավում, քաղաքական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների գոյության լայն հնարավորություն, վորպեսզի բանվոր դասակարգը կարողանար իր ուժերը պատրաստել հաջորդ պայքարի համար՝ հանուն սոցիալիստական հեղափոխության։ Այդ պատճառով էլ հեղափոխությունը բուրժուական-դեմոկրատական էր։

Մենշևիկները հեղափոխության վճռական շարժիչ ուժ էյին համարում միմիայն բուրժուազիային, և այդ — անխուսափելի յեր ոպպորտունիստների համար, վորոնք շտապում էյին գնալ բուրժուազիայի յետևից։ Մենշևիկները գյուղացիության հեղափոխական դերը ժխտում էյին, իսկ բանվոր դասակարգին համարում էյին բուրժուազիայի ոգնականը։ Բոլշևիկները, հակառակ մենշե-

վիկների, ասում եյին, վոր հեղափոխության հեգեմոնը պրոլետարիատն է լինելու, այսինքն բանվոր դասակարգը պիտի ղեկավարե ցարական իշխանությունը տապալելու գործը, և նա գյուղացիության հետ պիտի դաշինք կնքի։ Բոլշևիկները գտնում եյին, վոր բանվոր դասակարգը յուր հեղափոխական պայքարում պիտի դաշնակից ընտրի գյուղացիությանը։ Բուրժուազիան հեղափոխական ալիքների առաջին վերելքի և ցարական իշխանության առաջին զիջումների ժամանակ իսկույն թողնելու յե մասսաներին և վերջիններիս հաշվին ցարիզմի հետ դաշն ե կնքելու։ Հեղափոխության փորձը ցույց տվեց, վոր բոլշևիկները միանգամայն իրավացի եյին։

Կուսակցությունը, յերբ հավաքում եր յուր ուժերը զինված ապստամբության համար, աշխատում եր, վոր բանվորական և գյուղացիական յելույթները համաձայնեցվեն, վոր հեղափոխական անջատ յելույթները միացվեն։

«Մենք լավ գիտենք — ասում եր ընկ. Լենինը, — վոր գիտակից բանվորը և պայքարելու բարձրացող գյուղացին իրար կհասկանան յերկու խոսքով, և վոր լույսի յուրաքանչյուր ճառագայթը նրանց ավելի սերտ կմոտեցնի՝ կռվելու ազատության համար»։

Հեղափոխության գերագույն նվաճումը — 1905 թվի դեկտեմբերի բանվորական ապստամբությունն եր, վորին ղեկավարում եյին բոլշևիկները։ Մոսկվայի բանվորները 10 որ կռվում եյին ցարական ռազմական ուժերի դեմ։

«Հարկավոր չեր զենքի դիմել», — ասում եյին մենշևիկները դեկտեմբերյան ապստամբության պարտությունից հետո։ — «Ընդհակառակը, պատասխանում եյին բոլշևիկները Լենինի բերանով, հարկավոր եր ավելի վճռականորեն, յեռանդուն և հարձակողական ձևով զենքի դիմել»։ Դեկտեմբերյան ապստամբությունը տվեց զինված պայքարի առաջին և խոշոր դասը։ Հետագայում պրոլետարիատն այդ դասը հմտությամբ ոգտագործեց։

Դեկտեմբերյան ապստամբության պարտությունը նշանակում եր 1905 թվի հեղափոխության պարտությունը։ Ճիշտ է, դեռ գործադուլները շարունակվում եյին. որինակի համար 1906 թ. 1.108.406 բանվոր է գործադուլ արել, իսկ 1907 թվին — 740.100։ Սակայն, ինչպես տեսնում ենք, գործադուլավորների թիվը պակ-

սում է։ Հակահեղափոխական ուժերի գերակշռությունը պարզվեց դեկտեմբերյան ապստամբությունը խեղդելուց հետո։ Յեվ քանի գնում, այնքան ավելի պարզ կերպով յերևան եր գալիս ցարիզմի հաղթանակը։ Հեղափոխության ընթացքն ամբողջապես արդարացրեց բոլշևիկների գործելակերպը, ցույց տալով, վոր հեղափոխության ղեկավարը եր և կարող է լինել միայն բանվոր դասակարգը, և վոր գյուղացիությունն իսկապես հեղափոխական ուժ է, և իսկապես վոր բուրժուազիան ցարիզմի հենց առաջին զիջումներից հետո դավաճանեց հեղափոխությանը։ Հեղափոխության պարտության գլխավոր պատճառը կայանում եր նրանում, վոր բանվոր դասակարգին գյուղացիությունը պետք յեղած ոգնությունը ցույց չտվեց և վոր բանվորների ու գյուղացիների հեղափոխական յելույթներն իրար հետ համաձայնեցված չեյին։ Ամենագլխավոր դասը, վոր տվեց 1905 թվի հեղափոխությունը, այն է, վոր անհրաժեշտ է բանվորների և գյուղացիների ռազմական դաշինք և վոր գյուղացիությանը պետք է ղեկավարի բանվոր դասակարգը։

«Առանց 1904 թվի ,գլխավոր փորձի,' — ասում է ընկ. Լենինը, — 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունն անկարելի յեր»։ Բոլշևիկները 1905 թ. բռնեցին առաջին քննությունը, բոլշևիկները գլխավորելով հեղափոխական պայքարը՝ կռվում եյին առաջին շարքերում։ Նրանք պաշտպանում եյին պրոլետարիատի հեգեմոնիան հեղափոխության մեջ, պրոլետարիատի ռազմական դաշինքը գյուղացիության հետ։

1905 թվի պարտությունից հետո ոպորտունիստները սկսում են հեղափոխության թաղման յերգը յերգել։ Մենշևիկները և եսերները, ոգտվելով բանվորների հիասթափված և ընկճված տրամադրությունից, վորն անխուսափելի յեր պարտությունից հետո, աշխատում եյին բանվորներին ներշնչել, վոր Ռուսաստանում հեղափոխությունը վերջացել է, վոր հարկավոր է ձեռք քաշել ցարիզմի տապալման մտքից և հարմարվել նրա կարգերին։ Մենշևիկները կոչ եյին անում լիկվիդացիայի յենթարկել (լուծարքի յենթարկել, այստեղից ել «լիկվիդատորներ» անունը) կուսակցական ընդհատակյա կազմակերպությունները, այսինքն զինաթափ լինել դասակարգային թշնամու առաջ։ Նրանցից շատերը,

վորոնք հեղափոխության վերելքի օրերին միացել էին հեղափոխական հոսանքին (առանձնապես ինտելիգենցիան), այժմ ամոթալի կերպով հեռանում էին հեղափոխությունից և լքում նրան: «Ընկճված վիճակ, բարոյալքում, պառակտում, դասալքություն, ռենեգատություն»—այսպես էր բնութագրում ընկ. Լենինը հեղափոխության պարտությունից հետո ստեղծված դրությունը:

Այդ ծանր պայմաններում միայն բոլշևիկներն էին, վոր չդավաճանեցին հեղափոխական դրոշակին: Նրանք այն ժամանակ շատ սակավաթիվ էին. նրանց շարքերից հեռացան հեղափոխության «ուղեկիցները»: Չնայած այն հանգամանքին, վոր ցարիզմը դիմել էր շատ խիստ միջոցների, բոլշևիկներն անդուլ կերպով շարունակում էին կազմակերպել կուսակցական ընդհատակյա կազմակերպություններ և օգտագործում էին ամենափոքր հնարավորությունները՝ բանվորական մասսայի մեջ աշխատելու համար: Բոլշևիկներն անխնա մերկացնում էին լիկվիդատորներին, նրանք անխոնջ կերպով բացատրում էին բանվորներին, վոր հարկավոր է պատրաստվել նոր հեղափոխական պայքարի համար: Լիկվիդատորների և մյուս օպորտունիստ հոսանքների (տրոցկիստներ և այլն) սուտերի ու զրպարտությունների տարափի տակ կուսակցությունն իր ղեկավարի բերանով ասում էր բանվորներին. «Ռուս պրոլետարիատը կարող է հպարտանալ նրանով, վոր 1905 թվին նրա ղեկավարությամբ ստրուկ ազգը դարձավ ցարիզմի վրա հարձակվող միլիոնների բանակ, հեղափոխության բանակ...

Ծանր դասերն իզուր չեն կորչելու: Ռուս ժողովուրդն այլևս այն չէ, ինչ վոր էր՝ մինչև 1905 թ.: Պրոլետարիատը նրան սովորեցրեց պայքարել: Պրոլետարիատը նրան կտանի դեպի հաղթանակ»:

1905 թվին հաջորդող ռեակցիայի տարիներին բոլշևիկները տվին իրենց ռազմական յերկրորդ քննությունը: Ինչպես հեղափոխության հարձակման, այնպես էլ նահանջի պայմաններում բոլշևիկները հանդիսացան բանվոր դասակարգի միակ անհողդողդ մարտիկները:

Բոլշևիկների աշխատանքն իզուր չանցավ: Հեղափոխական շարժումը մի քանի տարվա անկումից հետո, սկսած 1911 թվից,

նորից է սկսում կենդանանալ: Գործադուլային ալիքը բարձրանում է: 1911 թվին գործադուլ անող բանվորների թիվը հասնում է 105.100-ի, մինչդեռ 1910 թվին 46.600 բանվորներ էին գործադուլ արել: 1912 թվին գործադուլավորների թիվը հասնում է 725.500-ի, 1913-ին — 887.000-ի, իսկ 1914 թվին — 1.337.500: Պրոլետարական խոշոր կենտրոններում գործադուլները տեղի յեն ունենում բոլշևիկների ղեկավարությամբ: Այդ կենտրոններում բոլշևիկների ազդեցությունն անկասկած ուժեղ էր: Կուսակցական շարքերը լցվում են հազարավոր նոր բանվորներով:

Իմպերիալիստական պատերազմը հեղափոխական բանվորական շարժման ծավալումը և վերելքն ընդհատեց: Պատերազմի գիշատիչ նպատակները քողարկվում էին «ազատության» և «արդարության» սուտ խոսքերով: Բոլոր տեսակի և բոլոր յերկրների օպորտունիստներն իրենց ուժերը լարել էին՝ բանվորներին խաբելու համար, կոչ անելով պաշտպանել «հայրենիքը»: Ռուսաստանի օպորտունիստներն էլ կաշվից դուրս էին գալիս, վորպեսզի բանվորներին համոզեն, թե հարկավոր է պաշտպանել ցարին: Միայն բոլշևիկները պատերազմի հենց առաջին իսկ օրից սկսեցին բացատրել մասսաներին պատերազմի իսկական նպատակները: Բոլշևիկները տալիս են լոզունգ՝ «իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիականի»: Ամեն մի հեղափոխական պիտի աշխատի, վորպեսզի յուր յերկրի կառավարությունը պարտվի: Բոլշևիկները մերկացնում էին օպորտունիստական կուսակցությունների դավաճանությունը և այն կիսահեղափոխական հոսանքները (օրինակի համար՝ տրոցկիզմը), վորոնք ծածկում էին այդ դավաճանությունը: Պատերազմի սկզբում պատերազմական տենդը բանվորներից շատերին գրավեց, իսկ բոլշևիկների ագիտացիան քիչ արձագանք էր գտնում: Սակայն հետո մասսաներն «իրենց սեփական փորձի վրա ավելի և ավելի՛ համոզվեցին բոլշևիկների հայացքների ճշտության մեջ» (Լենին):

Իմպերիալիստական պատերազմը բոլշևիզմի համար ծառայեց վորպես յերրորդ ստուգում: Այն պայմաններում, յերբ պատերազմի տենդը բռնել էր բանվորական մասսաներին, յերբ այսպես կոչված սոցիալիստական կուսակցությունները ամբողջապես անցել էին բուրժուազիայի կողմը, միայն բոլշևիկ-

ները հեղափոխական ճանապարհից չշեղվեցին և վճռականորեն շարունակեցին պայքարը հանուն բանվոր դասակարգի շահերի։

1917 թվի Փետրվարյան հեղափոխությունը տապալեց ցարական կարգերը և փաստական իշխանությունն անցավ խորհուրդների ձեռքը։ Սակայն խորհուրդներում համաձայնողականների թիվը մեծ էր։ Համաձայնողականներն աշխատում էին իշխանությունն հանձնել բուրժուազիային։ Բոլշևիկները հեղափոխության հենց առաջին օրից առաջադրում են այն լոզունգը, որ բանվոր դասակարգը պետք է պատրաստվի իշխանությունը գրավելու համար։ «Կեցցե սոցիալիստական հեղափոխությունը» — կանչեց ընկ. Լենինը, յերբ առաջին անգամ զրահապատի վրա ճառ արտասանեց Ռուսաստանում, արտասահմանից վերադառնալուց հետո։ Բոլշևիկները ստիպված տանում էին իշխանության գլուխ կանգնած բուրժուազիայի և համաձայնողականների դաժան հալածանքները և պայքարում թշնամիների տարածած հրեշային ստերի ու զրպարտությունների դեմ։ Բոլշևիկները պետք է հաղթահարեյին և ցրեյին համաձայնողականներին դեռևս հավատացող բանվոր դասակարգի մեծ մասի մոլորությունները։ Չնայած այդպիսի մեծ դժվարություններին, բոլշևիկները մեծ յեռանդով շարունակում էին պատրաստել բանվոր դասակարգի ուժերը՝ իշխանությունը զենքով խլելու համար։ Նրանք անխոնջ կերպով, բանակում և գյուղացիության լայն խավերի մեջ, ագիտացիա էին մղում։ Դեպքերի ընթացքը օրեցօր համոզում էր մասսաներին, որ բոլշևիկների լոզունգները ճիշտ են և հոկտեմբերյան հեղաշրջման մոմենտին բոլշևիկներն իրենց կողմն ունեյին բանվորության վիթխարի մեծամասնությունը։ Աղքատ գյուղացիության հետ միասին բանվոր դասակարգն իր կուսակցության ղեկավարության տակ խլեց իշխանությունը։

Այդ — չորրորդ ստուգումն էր։ 1917 թվին կուսակցությունը բանվոր դասակարգին առաջնորդեց դեպի ապստամբություն և նրա ղեկավարությամբ 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) սահմանեց պրոլետարիատի դիկտատուրան։

Կուսակցության ղեկավարող դերը Հոկտեմբերից հետո միանգամայն ապահովեց բանվոր դասակարգի հաղթանակը քաղաքացիական պատերազմում։

Հարյուր հազարավոր կոմունիստներ կռվում էին ֆրոնտներում և իրենց սեփական օրինակով զորամասերն ամրացնում ու կուռ էին դարձնում։ Այդ մասին ասում է հետևյալ աղյուսակը՝ կարմիր բանակում յեղած կոմունիստների թվի մասին.

Հոկտեմբեր	1919 թ. — 121.681,	որ կազմում էր ամբողջ կուսակցության	19%
Օգոստոս	1920 թ. — 278.040,	» » » » »	34%

Զորամասերի ռազմունակությունը վորոշվում էր կոմունիստների տոկոսով։ Յերբ ֆրոնտում ծրագրվում էր պատերազմական վորևե կարևոր գործողություն, ապա այդ գործողությունը կատարող զորամասերն էին ուղարկվում, հնարավորության չափ, կոմունիստների մեծ քանակություն։ Կուսակցությունը բանակին տվեց հարյուրավոր և հազարավոր ընկերներ, վորպես ռազմական կոմիսարների, վորոնք բանվոր դասակարգի ղեկավարությունը և կոնտրոլն էին իրականացնում զորամասերում և իրենց օրինակով ամրացնում էին բանակի դրությունը։ Սպիտակները կոմունիստներին գերի չէին վերցնում, այլ իսկույն գնդակահարում էին։ Յերբ գերի էին բռնում, կարմիր բանակայիններին ստիպում էին ասել, թե ով է նրանցից կոմունիստ։ Քաղաքացիական պատերազմի պատմությունը շատ քիչ դեպք գիտե, յերբ կարմիր բանակայինները սպիտակներին հայտնեյին, թե իրենց ռազմական ընկերներից ով է կոմունիստ։ Նույնպես և տնտեսական շինարարական ֆրոնտում, յուր օրինակով, յուր ղեկավարությամբ, կուսակցությունն ավելի յե ամրացնում իրեն ցույց տված՝ բանվոր դասակարգի լիակատար վստահությունը և անձնվեր ոժանդակությունը։

Այն հավատն ու վստահությունը, վոր դեպի մեր կուսակցությունն ունեն բանվոր դասակարգը և աշխատավոր մասսաները — հետևանք են կուսակցության յերկար տարիների պայքարի, վոր նա մղել է սոցիալիզմի համար։

Կուսակցության կապը բանվորական մասսայի հետ. — Բանվոր դասակարգի և կուսակցության մեջ յեղած փոխհարաբերությունները ընկ. Լենինը վորոշում է, վորպես «փոխադարձ վստահություն բանվոր դասակարգի ավանգարդի և բանվորական մասսայի միջև»։ Այդ փոխադարձ վստահությունը հնարավոր է

իհարկե, միայն այն ժամանակ, յեթե դասակարգի և կուսակցության մեջ կա սերտ կապ։ Առանց այդպիսի կապի անկարելի կլիներ ղեկավարել բանվոր դասակարգի պայքարը, առաջնորդել նրան։ Կուսակցությունը կդադարեր բանվոր դասակարգից ստանալ ուժերի նոր լրացում և ամրացում։ Կուսակցությունը և բանվոր դասակարգը ղեկավարում են աշխատավոր մասսաներին — գյուղացիությանը, նրանց քաշում են սոցիալիստական շինարարության գործի մեջ, վերամշակում են նրանց մանր-սեփականատիրական աշխարհայացքը։ Այդ բոլորն իրականացնելու համար կուսակցությունը և բանվոր դասակարգը պետք է շատ ուշիմ կերպով ականջ դնեն գյուղացիական աշխատավոր մասսաների կարիքներին և տրամադրություններին։

«Վորպեսզի մասսաներին բավարարել և արտահայտել նրանց ճիշտ գիտակցված շահերը, — ասում է ընկ. Լենինը, — առաջավոր ջոկատը — կազմակերպությունը պետք է յուր ամբողջ գործնեյությունը կենտրոնացնի մասսաների մեջ, նվաճի առանց բացառության նրա բոլոր լավ ուժերը, յուրաքանչյուր քայլափոխում մանրակրկիտ և օբյեկտիվորեն ստուգի՝ պահպանվում է արդյոք կապը մասսաների հետ»։

Թե ինչ վնասակար հետևանքների կարող է հասցնել կուսակցական կազմակերպությունների՝ բանվոր դասակարգի հետ ունեցած կապի խզումը, ցույց են տալիս Սմոլենսկի և Շախտիի գործերը։ Դոնբասում քարածուխի արդյունագործության զարգացման թշնամիները օգտվեցին այն հանգամանքից, վոր կուսակցական, պրոֆեսիոնալ և տնտեսական կազմակերպությունները անբավարար կերպով եյին կապված բանվորական մասսաների հետ։ Բանվորների բողոքներին և կարիքներին բավարար ուշադրություն չդարձնելն այն հետևանքն ունեցավ, վոր մեր թշնամիներն անպատիժ կերպով վատացնում եյին աշխատանքի այն պայմանները, վոր սահմանված են խորհրդային իշխանության օրենքով։ Նրանք վատացնում եյին բանվորության դրությունը։ Սմոլենսկի գործը ցույց է տալիս, վոր կուսակցական կազմակերպության և բանվորական մասսաների միջև յեղած կապի խզումը կարող եր քայքայել նույնիսկ կուսակցական վորոշ բջիջներ, քանի վոր քննադատելն արգելված եր, բանվորների կա-

րիքներին մոտենում եյին բյուրոկրատորեն։ Դասակարգային թշնամին չեր կարող բաց թողնել այդպիսի հարմար առիթ։ Նրան հաջողվեց իր դիրքերը վորոշ տեղերում ամրացնել։ Պետական ապարատի այս կամ այն բջիջում նա յուր բույնը շինեց։ Համառուսական Կենտգործկոմի դեկրետն այն մասին, թե նախկին կալվածատերերը պետք է հեռացվեն իրենց նախկին կալվածքներից, Սմոլենսկում չեր կիրառվել։ Այնտեղ կային «կոմունիստներ», վորոնց գյուղացիք «կարմիր կուլակներ» եյին անվանում։ Այդպիսիներն ունեյին վորոշ քանակից ավելի հողեր և կուլակների հետ միասին դուրս եյին գալիս գյուղի չքավորության դեմ։

Կուսակցության քաղաքականությունը, նրա կապը բանվորության մասսաների հետ, իրենց արտահայտությունը գտնում են ամենից առաջ կուսակցության՝ մասսայական կազմակերպությունները ղեկավարելու գործի մեջ։ Այդ կազմակերպություններից կարևորագույններն են պրոֆմիությունները, խորհուրդները, կոմյերիտմիությունը, կոոպերացիան և այլն։

Կուսակցությունն իր ղեկավարությունը մասսայական կազմակերպություններում իրականացնում է ֆրակցիաների միջոցով, վորոնք և այդ կազմակերպության մեջ աշխատող բոլոր կոմունիստներին ընդգրկում են։ Այդ կոմունիստները պիտի անցկացնեն կուսակցության գիծը, համոզելով անկուսակցական մասսային, վոր այդ գիծը ճիշտ է։ Կուսակցության կանոնադրությունը պարտավորեցնում է կազմակերպությունների մեջ աշխատող ֆրակցիաներին, առանց այլևայլության յենթարկվել կուսակցական համապատասխան մարմնին և այդպիսով ապահովվում է կոմունիստների գործնեյության միասնականությունը՝ վորտեղ ել վոր նրանք աշխատելու լինեն։

Կուսակցությունը և նրա ղեկավարության տակ գտնվող մասսայական կազմակերպությունները կազմում են պրոլետարական դիկտատուրայի սիստեմը մեր յերկրում։

«Խվոստիզմի» վտանգը. — Յեթե վտանգավոր է կուսակցության կտրվելը մասսայից, ապա վոչ պակաս չափով վտանգավոր է նույնպես մասսայի պոչից քարշ գալը («խվոստիզմ»)։ Կապվելով մասսաներին, կոմունիստը յերբեք չպիտի յուր հայացքը իջեցնե մինչև մասսայի մակարդակը, այլ ընդհակառակը, նա պիտի ամեն կերպ աշխատի, վորպեսզի բանվորական

մասսաները հասնեն դասակարգային ինքնագիտակցության, ձգտեն դեպի կոմունիզմը։

Բանվորների այս կամ այն խմբակը յերբեմն ղեկավարվում է այսօրվա շահերով, իսկ կուսակցությունը միշտ յուր առաջն ունի բանվոր դասակարգի պայքարի վերջնական նպատակը։ Կուսակցությունն յուր ամենօրյա աշխատանքներն այնպես է կազմակերպում, վորպեսզի արագացնի բանվոր դասակարգի և բոլոր աշխատողների շարժումը դեպի սոցիալիզմ։ Բանվորների այս կամ այն խմբակը յերբեմն ղեկավարվում է միայն յուր խմբակային շահերով, այս կամ այն գործարանի զարգացման շահերով։ Իսկ կուսակցությունը միշտ առաջնորդվում է բանվոր դասակարգի շահերով, վորոնց պիտի յենթարկվեն առանձին բանվորական խմբակների շահերը։

Դա պարզենք օրինակներով։ Վերցնենք հենց մեր կուսակցության պատմությունից Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների միջի շրջանը՝ 1917 թվին։ Ի՞նչ դրություն եր տիրում Փետրվարյան հեղափոխությունից հետո։ Բանվորներից շատերն այն ժամանակ հետևում եյին մենշևիկներին, բանվորական մասսաները մոլորված եյին, նրանք հավատ եյին ընծայում այն խաբուսիկ լոզունգներին, վոր համաձայնողականներն եյին տարածում՝ վախենալով, չլինի թե բանվոր դասակարգն իր ձեռքն առնի իշխանությունը։ Մի՞թե բոլշևիկներն ասացին — քանի վոր բանվորները գնում են մենշևիկների յետևից, մենք պետք է յենթարկվենք բանվորների կամքին և հաշտվենք մենշևիկների հետ։ Վո՛չ, բոլշևիկներն այլ կերպ վարվեցին։ Մեր կուսակցությունն ավելի հեռուն եր տեսնում, քան բանվորների մեծամասնությունը։ Նա յուր ամբողջ աշխատանքը կենտրոնացրեց մոլորված բանվորների մասսայի մեջ, բանակում և գյուղում։ Բոլշևիկները գնում եյին բանվորական ամեն մի ժողով, ագիտացիա եյին մղում գործարաններում։ Համաձայնողականները բոլշևիկներին քշում եյին, հալածում, իսկ նրանք, միջոցների առաջ կանգ չառնելով, հասկացնում եյին բանվորին, զինվորին և գյուղացուն մենշևիկների դավաճանությունը և համոզում, վոր պրոլետարիատը պետք է բռնի՛ ուժով իշխանությունը խլի։ Բոլշևիկների տոկուն աշխատանքը վերջացավ հաղթանակով. — բանվորության ճնշող մեծամասնությունը Հոկտեմբերյան հեղափոխության օրերին հետևեց մեր կուսակցությանը։

Վերցնենք մի ուրիշ դեպք մեր օրերից։ Ասենք թե գործարանում տեղի յե ունենում արդյունաբերության ռացիոնալիզացիա։ Այդ ռացիոնալիզացիայի հետևանքով յենթադրենք թե պիտի կրճատվի 50 բանվոր։ Յեթե գործարանում աշխատող բանվորները քաղաքականապես բավարար չափով գիտակից չեն, կարող են ասել, թե կուսակցությունը լավ չի անում, վոր ռացիոնալիզացիայի յե դիմում։ Իսկապես, այդ գործարանի մեջ աշխատող բանվորների ժամանակավոր շահերի տեսակետից, ռացիոնալիզացիան վտանգավոր է, քանի վոր բանվորներից վոմանք մնում են անգործ։ Իսկ բանվոր դասակարգի շահերի տեսակետից — կուսակցությունը միանգամայն իրավացի յե. վորովհետև ռացիոնալիզացիան եժանացնում է արդյունաբերությունը, տալիս է գյուղի համար ավելի եժան գներով ապրանք և ամրացնում բանվորի ու գյուղացու դաշինքը։ Ռացիոնալիզացիայի շնորհիվ հնարավոր է դառնում բանվորների նյութական դրության բարելավումը։ Սոցիալիստական ռացիոնալիզացիայի միջոցով մենք կկարողանանք փոխել մեր արդյունաբերության տեխնիկան, տալ նրան կատարելագործված մեքենաներ, առանց վորոնց — սոցիալիզմն անհնարին է։ Այդպիսով սոցիալիստական ռացիոնալիզացիան, վերջին հաշվով, վոչ թե բանվորների թիվը կրճատում է, այլ ընդհակառակը, արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվն ավելացնում է, բարելավում է նրանց վիճակը և սոցիալիզմ կառուցելու կարևոր պայմաններից մեկն է։

Ի՞նչ պայմաններում ել վոր կոմունիստը աշխատելու լինի, նա միշտ ել պետք է կարողանա պաշտպանել բանվոր դասակարգի շահերի տեսակետը ամբողջությամբ, այսինքն՝ կուսակցության տեսակետը։ Կոմունիստը միշտ ել պետք է պայքարե դասակարգային շահերին հակասող խմբակային շահերի դեմ։

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համ. կոմկուսը (բ) միակ լեգալ քաղաքական կուսակցությունն է ԽՍՀՄ մեջ. — *Բուրժուազիայի իշխանության տապալումը — դա սոցիալիզմի համար մղվող պայքարի միայն սկիզբն է։ Պրոլետարական դիկտատուրայի շրջանը, հասարակությունը սոցիալիստական հիմքի վրա վերակառուցելու շրջանը լեցուն է դասակար-*

597/3-66
Библиотека Института Востоковедения Академии Наук СССР
ՀՍՍՌ-Арм ССР Ա. Մյասնիկյանի անվան

գային սուր պայքարով։ Յերկրի սահմաններում պրոլետարիատի արած ամեն մի քայլը դեպի սոցիալիզմ, կատարվում է յուր դասակարգային թշնամու դեմ մղած պայքարում։ Սոցիալիզմ կառուցող պրոլետարիատին միշտ սպառնում է արտաքին թշնամիների զինված միջամտությունը։ Պրոլետարական դիկտատուրան — համառ պայքար է, արյունոտ և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և վարչական համառ պայքար՝ հին հասարակակարգի ուժերի և տրադիցիաների դեմ» (Լենին)։

Այդ պայքարը պրոլետարիատից պահանջում է ուժերի անպայման կենտրոնացում, գործելակերպի և կամքի անյերեր միասնականություն։

Պրոլետարիատը, շրջապատված լինելով անթիվ թշնամիներով, պետք է միշտ պատրաստ լինի և անխնա ճնշի շահագործողների յուրաքանչյուր ընդդիմադրության փորձը, վորովհետև նման փորձեր անխուսափելիորեն վերածնվելու յեն, քանի դեռ դիկտատուրայի յերկրում կան դասակարգեր, քանի վոր սոցիալիզմ կառուցող յերկիրը գտնվում է կապիտալիստական յերկրների թշնամի ողակի մեջ։ «Առանց մեր կուսակցության, վոր յերկաթի պես կուռ է և պայքարի մեջ ամրացել է, առանց մեր կուսակցության, վորն իր դասակարգի հարգանքն ու վստահությունն է վայելում, առանց մեր կուսակցության, վորը կարող է մասսաների տրամադրությունը հասկանալ և ազդել նրա վրա, — այդպիսի պայքար հաջողությամբ տանել անհնարին է» (Լենին)։

Սոցիալիզմ կառուցելու, ապադասակարգային հասարակության անցնելու համար, կուսակցությունը յուր ամբողջ աշխատանքով հետևողականորեն իրականացնում է բանվորա-գյուղացիական դաշինքի խնդիրը, պրոլետարական ազդեցությունը գյուղացիության աշխատավորական մասսաների վրա շարունակ ուժեղացնելու խնդիրը։ Պրոլետարիատի կուսակցությունն իր ուղիղ քաղաքականությամբ, գործով ու խոսքով համոզելով, հաղթահարում է մանր սեփականատերերին հատուկ տատանումները և այդպիսով գյուղացուն դարձնում սոցիալիստական շինարարության գիտակից մասնակցող։

Շատ հեշտ է համոզվել, վոր ինչ կուսակցություն էլ լինի, յեթե նա իրեն հակադրում է մեր կուսակցության քաղաքակա-

նությանը, ինչ լոզունգներով էլ վոր նա քողարկված լինի, միևնույն է — այդ կուսակցությունը պիտի դառնա կենտրոն՝ պրոլետարիատի դեմ կռվող բոլոր թշնամի ուժերի։ Հասկանալի յե ուրեմն, վոր չի կարելի թույլ տալ, վորպեսզի կազմակերպվի բուրժուական կուսակցություն, սակայն և յուրաքանչյուր մանր-բուրժուական կուսակցություն, ասենք, թեկուզ գյուղացիական կուսակցություն (կամ գյուղացիական միություն), անկասկած դառնալու յե հակահեղափոխական ուժ։ Կուլակները հաճախ «գյուղացիական միության» լոզունգն են առաջադրում։ Յերբ պայքար է տեղի ունենում բուրժուազիայի և պրոլետարիատի միջև, մանր բուրժուազիան չի կարող յերրորդ ուժի ինքնուրույն դեր խաղալ, նա կամ գնալու յե պրոլետարիատի կամ բուրժուազիայի յետևից։ Կապիտալիստական իրավակարգը քայքայում և ցրիվ է տալիս գյուղացիությանը և քաղաքի մանր բուրժուազիային։ Տնտեսական և քաղաքական ճնշումը — մանր բուրժուազիայի մեջ առաջ է բերում հեղափոխական տրամադրություն։ Բայց միևնույն ժամանակ նա իր մանր սեփականատիրությամբ կապված է կապիտալիստական իրավակարգի հետ։ Մանր բուրժուազիան յուր այդպիսի յերկուական դրության հետևանքով միշտ էլ տատանվում է պրոլետարիատի և բուրժոյազիայի միջև։ Նա հետևում է և կարող է հետևել կամ պրոլետարիատին, կամ բուրժուազիային։ «Կամ կալվածատերերի և կապիտալիստների դիկտատուրա (այսինքն՝ յերկաթե իշխանություն), կամ բանվոր դասակարգի դիկտատուրա։ Միջին դրություն չկա։ Միջին յելքի մասին յերազում են այն ինտելիգենտները, ազնվականիկները, պարոնիկները, վորոնք վատ գրքերով վատ են սովորել։ Վոչ մի տեղ աշխարհում միջին յելք չկա և չի յել կարող լինել» (Լենին)։

Բանվոր դասակարգի հեղափոխական փորձառությամբ այդ ամենը հաստատվում է, մասնավորապես և գլխավորապես մեր յերկրի պրոլետարական հեղափոխության փորձով։ Բոլոր մանր բուրժուական կուսակցությունները՝ մենշևիկները, ես-երները և այլն, վոր մեր յերկրում գոյություն ունեյին, դարձան բուրժուական հակահեղափոխության լրացուցիչ մասը։ Այդ կուսակցությունները շատ անգամ դիմել են միջոցների, վորպեսզի միջին տեղ բռնեն պրոլետարիատի և բուրժուազիայի միջև։ Բայց պատ-

մության ընթացքը նրանց ստիպեց անցնել կամ պրոլետարիատի կամ բուրժուազիայի կողմը։ Մանր-բուրժուական կուսակցություններից միայն ձախ ես-երները բոլորից ուշ արին այդ ընտրությունը։ Նրանք կոմունիստների հետ, թեև մեծ տատանումներով, մասնակցեցին Հոկտեմբերյան հեղաշրջման և նույնիսկ խորհրդային իշխանության հաստատվելուց հետո որոշ ժամանակ աշխատում եյին խորհրդային կառավարության մեջ։ Բայց նրանք շատ շուտ անցան մյուս՝ մանր-բուրժուական կուսակցությունների շարքը։ Պրոլետարական հեղափոխության հետ գնալ — ձախ ես-երների համար կնշանակեր՝ ցրել իրենց կուսակցությունը, կռվել կոմկուսի շարքերում, որպես նրա անդամները, ընդունել նրա ծրագիրը, գործելակերպը, նրա կազմակերպչական սկզբունքները։ Իրենց հակադրելով կոմկուսին, նրանք դարձան հակահեղափոխական ուժերի կենտրոն և 1918 թվի հունիսին հակահեղափոխական ապստամբությամբ դուրս յեկան խորհրդային իշխանության դեմ։ Քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանում մանր-բուրժուական կուսակցությունները փորձեցին խաղալ յերրորդ ուժի դեր, իսկ վերջին հաշվով նրանք միայն ճանապարհ եյին բաց անում բուրժուական հակահեղափոխության համար։ Այդպես եր, օրինակ, 1918 թ. Ուրալում, Սիբիրում, Վոլգայի շրջանում։ Այստեղ մանր-բուրժուական կուսակցությունները, գլխավորապես ես-երները, փորձեցին իրենց ղեկավարությամբ կռիվ մղել խորհրդային իշխանության դեմ։ Կազմակերպել եյին «հիմնադիր ժողովի անդամների կոմիտե», հետո «Ուֆայի դիրեկտորիա», կազմակերպել եյին «ժողովրդական բանակ»։ Այդ ամենը հակահեղափոխության առաջնորդ Կոլչակին հեշտացրեց իշխանությունը յուր ձեռքն առնելու։ Իշխանությունը առանց կռվի անցավ Կոլչակի ձեռքը։ Եսերները խորհրդային իշխանության դեմ կռվելիս հենվում եյին կուլակների, քաղաքի բուրժուազիայի վրա, այսինքն այն դասակարգերի վրա, որոնք կազմում եյին բուրժուական-կալվածատիրական հակահեղափոխության ֆրոնտը։

Պրոլետարական դիկտատուրան հաջողությամբ կարելի յե իրականացնել միայն այն ժամանակ, յերբ գոյություն ունի միայն կոմունիստական կուսակցությունը, որն անխնա ճնշում ե հակահեղափոխական ուժերի կազմակերպման ամեն մի փորձ։

Մանր-բուրժուական ազդեցությունը կուսակցության վրա. — Բանվոր դասակարգը ազգաբնակչության մյուս խավերից անանց պարսպով չի անջատված։ Բանվոր դասակարգը շրջապատված ե միլիոնավոր մանր սեփականատեր գյուղացիներով։ Սրա սեփական շարքերն են մշտապես անցնում բազմամիլիոն մանր սեփականատերերից, որոնց «չի կարելի հեռացնել, չի կարելի ճնշել, նրանց հետ հարկավոր ե ապրել, նրանց կարելի յե և պետք ե կերպարանափոխել, կրթել, սակայն յերկար, դանդաղ և զգույշ կազմակերպչական աշխատանքով» (Լենին)։

Պրոլետարիատը ղեկավարում ե գյուղացիությանը, — այդ ինչ ե նշանակում. այդ նշանակում ե, որ բանվոր դասակարգը աշխատավոր գյուղացիությանը վերադաստիարակում ե, իրեն նպատակ ե դնում՝ աշխատավոր գյուղացիական մասսային դարձնել գիտակից մասնակից սոցիալիստական շինարարության։ Մանր ապրանքաարդյունաբերողին կարելի յե այդ ուղղությամբ վերադաստիարակել միայն այն ժամանակ յերբ գյուղական տնտեսությունը կարողանանք կերպարանափոխել, իսկ այդ խնդիրը կարելի յե լուծել տարիների և տասնյակ տարիների ընթացքում։ Մանր սեփականատիրոջը վերադաստիարակելով, բանվոր դասակարգը ինքն յուր վրա շարունակ զգում ե մանր-բուրժուական շրջապատի ճնշումը։ Այդ ուժը որոշ չափով ազդում ե թե կուսակցության և թե բանվոր դասակարգի վրա, ձգտելով առաջացնել այն տատանումները, որ հատուկ են մանր սեփականատիրոջ։

Մանր-բուրժուական ազդեցության հետևանքով կուսակցության մեջ առաջ են գալիս զանազան տեսակի օպպոզիցիոն հոսանքներ։ Մանր բուրժուազիայի տատանումները, նրա ճնշումը կուսակցության և բանվոր դասակարգի վրա ավելի ուժեղ ե լինում այն ժամանակ, յերբ հեղափոխությունը վերապրում ե շինարարության դժվարություններ։

Հեշտությամբ այդպիսի ազդեցությունների տակ կարող են ընկնել կուսակցության այն մասերը, որ տակավին ձեռք չեն բերել պրոլետարական կայունություն։ Կուսակցության մեջ, մանր-բուրժուական տատանումներին յենթարկվողներից կարելի յե հիշել տրոցկիստական օպպոզիցիային, որը կուսակցության մեջ, ոչ-պրոլետարական խավերում, որոշ արձագանք (թեև չնչին)

գտավ։ Միակ յերաշխիքը մանր-բուրժուական ազդեցության դեմ կռվելու, կարող ե լինել կուսակցական միասնականությունը՝ լենինիզմի սկզբունքների հիման վրա։

Կուսակցության միասնականությունը. — *Բոլշևիկյան միասնականության սկզբունքը վոչ մի կապ չունի մյուս համաձայնողական կուսակցությունների նույնանուն լոզունգի հետ, վորովհետև բոլշևիկյան միասնականությունը մարտական գործնեյության և պայքարի միասնականություն ե։*

Ոպպորտունիստական հոսանքները ռուսական բանվորական շարժման մեջ շատ անգամ են առաջադրել միասնականության լոզունգ։ Մասնավորապես այդ ուղղությամբ խոսել և գրել ե, իմպերիալիստական պատերազմից առաջ, այն խմբակը, վորի ղեկավարը Տրոցկին ե յեղել։ Սակայն այդ լոզունգը այլ բովանդակություն ուներ բոլշևիկների մոտ, ուրիշ բովանդակություն — ոպպորտունիստների մոտ։ Հենց ոպպորտունիստների դեմ մղած պայքարի ընթացքում աճեց և ամրապնդվեց բոլշևիկյան յերկաթե միասնականությունը, վորի շնորհիվ բոլշևիկները հաղթում են։ Մենշևիկների, տրոցկիստների և զանազան ոպպորտունիստների համար միասնականությունը նշանակում եր — միասնականություն՝ զանազան հոսանքների, տարբեր խմբակցությունների, վորոնցից յուրաքանչյուրը կարող ե ունենալ իր սեփական լոզունգը և վորոնք իրար հետ համաձայնության են գալիս այս կամ այն հարցի նկատմամբ, թեև յուրաքանչյուր հոսանք կուսակցությանը քարշ ե տալիս զանազան ուղղություններով։ Գլխավորը նա յե, վոր «միասին ապրեն», «ապրիր և ուրիշներին ել թույլ տուր ապրելու» — այդպես եր Տրոցկու գլխավոր լոզունգը կուսակցական շինարարության և միասնականության խնդիրներում։ Պարզ ե, վոր նման «միասնականությունը» նկատի չի առնում կուսակցության հեղափոխական դաստիարակությունը, նկատի չի առնում հեղափոխական վորևե գործողություն։ Այդպիսի միասնականություն ունենալով, կուսակցությունը կլինի փխրուն, նկուն և անկայուն։ Կռվել և հաղթել կարող ե այն կուսակցությունը, վորն ունի միասնական կամք և միասնական նպատակ։

Բոլշևիկները միշտ ել մերժել են մենշևիկյան-տրոցկիական այս խորհուրդը — «ապրիր, և թույլ տուր, վոր ուրիշներն ել ապ-

րեն»։ Լենինը ստեղծել ե մի կուսակցություն, վորը յուր անպայման միասնական հայացքով ամուր ե և յերկաթե դիսցիպլինա ունի։ Կուսակցությունը — միություն ե այն մարտիկների, վորոնք կամավոր կերպով միացել են վորոշ ծրագրի շուրջ՝ կուսակցության գաղափարական հիմունքների վրա։

Մեր կուսակցության ամբողջ պատմությունը լիքն ե գաղափարական պայքարի մի յերկար շարանով, — պայքարի, վոր մղում եր Լենինը հոգուտ կուսակցության հայացքների մաքրության։ Իլյիչը անդադար կռվում եր բոլոր նրանց դեմ, ովքեր փորձում եյին կուսակցությունը շեղել ուղիղ ճանապարհից։ Լենինի այդ տեսակի անխնա մերկացումները մենշևիկները, եսերները և տրոցկիստները բացատրում եյին վորպես բծախնդրություն, վորպես պառակտում։ Լենինի պայքարին (զանազան թեքումների և կուսակցության գծի խեղաթյուրումների դեմ) նրանք հակադրում եյին իրենց կուսակցության «բարենպաստ» վիճակը, վորտեղ խաղաղ կերպով կարող են ապրել զանազան խմբակներ։ «Վոչ մի բոպե, — պատասխանում եր Լենինը, — մենք չեյինք կամենա փոխարինել այդ ծանր ճշմարտությունը ձեր թեթև ստի հետ»։ Վորովհետև ոպպորտունիստական կուսակցությունների արտաքուստ միասնական և «բարենպաստ» դրության տակ թաքնված ե նրանց լիակատար անզորությունը, նրանց հեռացումը հեղափոխությունից և բանվոր դասակարգի գործի համար մղվող պայքարից։ Իսկ պայքարը հանուն բոլշևիկյան կուսակցության իդեյականության, նախադրյալ և պայման հանդիսացավ այն հեղափոխական ավանգարդի ստեղծման, վորպիսին դարձավ կոմ. կուսակցությունը մեր յերկրում։

Միասնականության նշանակությունը դիկտատուրայի պայմաններում. — *Այդպես եր Լենինը պայքարում կուսակցության միասնականության համար այն տարիներում, յերբ կուսակցությունը կազմակերպվում եր և պատրաստվում սոցիալիստական հեղափոխության վճռական պայքարին։ Սակայն ավելի ուժեղ, ավելի մեծ հեղափոխական թափով եր նա պայքարում բոլշևիկյան միասնականության համար այն տարիներին, յերբ կուսակցությունն արդեն իշխանության գլուխ եր անցել։ Յեվ դա հասկանալի յե, վորովհետև բավական ե վոր քայքայվի կուսակցական միասնականությունը, խեղաթյուրվի կուսակցական քաղաքականությունը,*

և պրոլետարական դիկտատուրայի դրությունը կփոխվի։ Ահա թե ինչու Լենինն անխնա պայքարում էր 1917 թվին Զինովևի և Կամենևի օպպոզիցիայի դեմ, Բրեստ-Լիտովսկի պայմանագրի շրջանում — ձախ կոմունիստների դեմ, պրոֆմիությունների դիսկուսիայի ժամանակ — Տրոցկու պլատֆորմի դեմ, բանվորական օպպոզիցիայի դեմ և այլն։

Մենշևիկները, վորպես միջազգային հոսանք բանվորական շարժման մեջ, տարբերվում են գլխավորապես նրանով, վոր նրանք ժխտում են հեղափոխական պայքարը բուրժուազիայի դեմ և կողմնակից են համաձայնության գալ բուրժուազիայի հետ՝ պրոլետարիատի շահերը յենթարկելով բուրժուազիային։ Վոր յերկրում էլ վոր ուզեք, ինչ պայմաններում էլ վոր լինի, մենշևիկները կարողանում են գտնել մի շարք պատճառներ, վորոնց հիման վրա նրանք ձեզ կբացատրեն, թե ինչու անօգուտ է բանվորական պայքարը կապիտալիզմի դեմ։ Զարգացած կապիտալիզմի յերկրներում մենշևիկներն ասում են բանվորներին, թե պայքարել բուրժուազիայի դեմ՝ իմաստ չկա, վորովհետև սոցիալիզմն ինքն իրեն կգա առանց արյուն թափելու, և վոր խաղաղ միջոցներով և համաձայնությամբ բուրժուազիան մեզ կտանի դեպի սոցիալիզմ։ Իսկ այն յերկրներում, վորտեղ դեռ կապիտալիզմը թույլ է, նրանք ասում են, թե սոցիալիզմի համար պայքարը դեռ վաղ է։

Ռուսաստանում, վորտեղ բանվոր դասակարգի մեջ հեղափոխական տրադիցիաները միշտ էլ ուժեղ են յեղել, մենշևիկները սովորաբար աշխատել են իրենց հայացքներին հեղափոխական տեսք տալ։ Բայց խնդիրը դրանից, իհարկե, չէր փոխվի։ 1905 թվին մենշևիկները կամենում էյին բանվոր դասակարգին դարձնել բուրժուազիայի օգնական։ Հեղափոխության պարտությունից հետո նրանք քարոզում էյին հնազանդվել ցարիզմին։ Պատերազմի ժամանակ նրանք դարձան բուրժուական հայրենիքի պաշտպան։ 1917 թվին բուրժուազիայի հետ միասին պայքարում էյին, վորպեսզի պրոլետարիատն իր ձեռքը չառնի իշխանությունը, իսկ յերբ այդ կատարվեց, — հակահեղափոխության հետ միասին նրանք զենքով կռվեցին խորհրդային իշխանության դեմ։

Մենշևիկներն իրենց հայացքները միշտ քողարկում էյին բանվոր դասակարգի շահերով։ Հեղափոխությունից առաջ մենշևիկները վորոշ ազդեցություն ունեյին յետամնաց բանվորների

վրա։ Դեռ 1917 թվին մենշևիկները բանվոր դասակարգի վորոշ մասի վրա ազդեցություն ունեյին։ Բայց բանվոր դասակարգը մի քանի փորձերից հետո (ինչպես, օրինակի համար, իշխանությունը վերցնելիս, քաղաքացիական կռիվներում) տեսավ և վերջնականապես հասկացավ, վոր մենշևիկներն յուր դասակարգային թշնամիներն են, բուրժուական ագենտներն են բանվորների մեջ։ «Մենշևիկ» խոսքն այժմ բանվոր դասակարգի մեջ անպատիվ խոսք է։ Բայց այդ չի նշանակում, թե մենշևիկյան գաղափարները (թեև ծածկված կերպով) չեն կարող թափանցել բանվոր դասակարգի շարքերը, յերբեմն էլ կուսակցության առանձին, թեև շատ չնչին, խավերի մեջ։ Օրինակի համար, տրոցկիստական օպպոզիցիան։ Այդ հնարավոր դարձավ շնորհիվ մեր շինարարական աշխատանքների վերին աստիճանի դժվարության և մանր-բուրժուական ճնշման — այն ժամանակ, յերբ մեր յերկրում մեր կուսակցությունը միակ լեգալ կուսակցությունն է։

Մենշևիզմի ժամանակակից հայացքը դեպի մեր հեղափոխությունը կարելի յե չորս կերպով արտահայտել․

Առաջին։ Չի կարելի սոցիալիզմ կառուցել տնտեսապես յետ մնացած այնպիսի յերկրներում, ինչպիսին է ԽՍՀՄ։ Մենշևիկներն աշխատում են ինչքան կարելի յե չափազանցնել այն, վոր մեր յերկիրը շատ յետամնաց է։ Նրանք չեն տեսնում և չեն էլ կարող տեսնել, վոր բազմամիլիոն մանր տնտեսությունների կողքին, ԽՍՀՄ ունի բավական խոշոր սոցիալիստական տնտեսություն, վորը պրոլետարիատի համար հենարան է հանդիսանում առաջ գնալու դեպի սոցիալիզմը։

Յերկրորդ։ Գյուղացիական մանր տնտեսությունը պիտի անպատճառ զարգանա կապիտալիստական ուղիով։ Մենշևիկները չեն կարող հասկանալ, վոր պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, յերբ պրոլետարիատի ձեռքին են կենտրոնացված տնտեսական հրամայող բարձունքները, ստեղծվում են նոր պայմաններ և զարգացման նոր ուղիներ գյուղական տնտեսության համար։ Մենշևիկները չեն հասկանում, վոր պրոլետարիատը, հենվելով ծանր ինդուստրիայի վրա, տարեց-տարի ուժեղացնում է յուր պլանային ղեկավարող ուժը գյուղում և գյուղական մանր տնտեսությունների տարրերքը ուղղում է դեպի սոցիալիստական շինարարության ուղին։

Յերրորդ։ Վոչ մի սոցիալիստական շինարարություն ԽՍՀՄ մեջ չի կարող լինել, վորովհետև մեր հեղափոխությունը բուրժուական ե։ Այդ հետևանք ե առաջին յերկու կետերի։

Չորրորդ։ Այս կետը բղխում ե նախորդներից և հաստատում ե, վոր իբր թե պրոլետարական դիկտատուրա ԽՍՀՄ մեջ չկա, իսկ խորհրդային իշխանությունը պրոլետարական չե։ Պրոլետարիատին ստիպում են զոհաբերություն անել հոգուտ պետության, վորը շահագործում ե բանվորներին։

Այս բոլորի շնորհիվ մենշևիկները հանգում են հետևյալ յեզրակացության — վերադարձ դեպի «նորմալ» կապիտալիզմ, դեպի բուրժուական դեմոկրատիան և ամբողջ ուժերով պայքար՝ խորհրդային իշխանության դեմ։

Յեթե մենշևիզմը բացարձակ կերպով ոպպորտունիստական հայացքներ ե քարոզել, ապա նրա տեսակներից մեկը — տրոցկիզմը, միշտ ել բաց ե թողել «անմիտ ձախ» և արտաքուստ հեղափոխական լոզունգներ։ Սակայն մենշևիզմի և տրոցկիզմի լոզունգների ոպպորտունիստական եյությունը միևնույն ե, միատեսակ ե։ Դա պարզենք մի քանի որինակներով։

Տրոցկիզմը միշտ ել մեր կուսակցությանը քննադատել ե «ձախից»։ Այսպես, որինակի համար, ինչպես մենք տեսանք, 1905 թվին բոլշևիկների մարտական հիմնական լոզունգն եր՝ պրոլետարիատի հեգեմոնիան բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ և պրոլետարիատի ղեկավարությունը գյուղացիության վրա։ Տրոցկին այն ժամանակ առաջադրեց յուր պերմանենտ հեղափոխության թեորիան, վորի անմիջական լոզունգը սոցիալիստական հեղափոխությունն ե։ Այդ թեորիան ընկ. Լենինն անվանեց «անմիտ ձախ», վորովհետև այն ժամանակ սոցիալիստական հեղափոխության պայմաններ չկային։ Տրոցկու թեորիայի ուղն ու ծուծը կազմում եր մենշևիկյան այն տեսակետը, վորը ժխտում եր գյուղացիության հեղափոխական դերը և պնդում, վոր բանվոր դասակարգը չի կարող առաջնորդել գյուղացիությանը։ Յեվ մենք տեսնում ենք, վոր թե մենշևիկների բացարձակ-լիկվիդատորական դիրքը և թե Տրոցկու ծայրահեղ հեղափոխական թեորիան ունեյին մի նպատակ՝ կռվել բոլշևիկյան տեսակետի դեմ, վորն ընդունում եր պրոլետարիատի հեգեմոնիան բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ։ Ճիշտ ե, Տրոցկին ռեակցիայի շրջանում դուրս չեկավ վորպես

բացարձակ լիկվիդատոր, սակայն նա պաշտպանում եր լիկվիդատորներին։ Նա մենշևիկների մեծամասնության նման չեր առաջարկում արձակել կուսակցության ընդհատակյա կազմակերպությունները։ Բայց նա միևնույն ժամանակ կատաղի պայքար եր մղում բոլշևիկների դեմ, վերջիններիս «պառակտչության» և «լիկվիդատորների հետ համաձայնության» չգալու, հաշտվելուց հրաժարվելու համար, ինչպես դա առաջարկում եր Տրոցկին։ Տրոցկին յուր այդ հաշտեցուցիչ առաջարկներն անում եր բոլշևիկներին «ձախից քննադատելու» տեսակետից։ Տրոցկու կարծիքով հեղափոխության բարձր շահերն են պահանջում համաձայնության գալ լիկվիդատորների հետ, վորոնց նա ոգնում եր։ Ընկ. Լենինն այսպես եր գնահատում Տրոցկու դերը լիկվիդատորների դեմ պայքարելու շրջանում. «Տրոցկին և նման տրոցկիստներն ու համաձայնողականներն ավելի վնասակար են քան լիկվիդատորները, վորովհետև համոզված լիկվիդատորներն ուղղակի կերպով են դուրս տալիս իրենց հայացքները, և բանվորների համար շատ հեշտ ե գտնել նրանց սխալը. իսկ պարոն տրոցկիստները խաբում են բանվորներին, ծածկում են չարիքը և այդպիսով անհնար են դարձնում նրա մերկացումը և նրանից բժշկվելը։ Ամեն վոք, ով պաշտպանում ե Տրոցկու խմբակը, նա պաշտպանում ե ստի և բանվորներին խաբելու քաղաքականությունը, լիկվիդատորներին ծածկելու քաղաքականությունը»։ Իսկ յեթե լավ քննենք տրոցկիզմի այժմյան հայացքները մեր հեղափոխության վրա, ապա հեշտ ե համոզվել, վոր նրանք իրենց եյությամբ մենշևիզմի վերոհիշյալ հայացքներից չեն տարբերվում։

Ճիշտ ե, տրոցկիստները մենշևիկների նման չեն վճռում պարզորեն ասել, վոր մեր յերկրում վոչ մի սոցիալիստական շինարարություն հնարավոր չե, Բայց իսկապես նրանք մենշևիկների խոսքերն են կրկնում։ Հակառակ Լենինի պնդումների, տրոցկիստներն ասում են, վոր մեր յերկրում սոցիալիստական հասարակակարգ ստեղծելու համար նախադրյալներ չկան, և քանի վոր մյուս յերկրներում պրոլետարիատը դեռ չի հաղթել և, հետևապես, նա առայժմ չի կարող մեզ պետական ոգնություն ցույց տալ, ուրեմն մեր յերկրի պրոլետարական դիկտատուրան խորտակվելու յե։ Իսկ դա նշանակում ե ժխտել սոցիալիստական շինարարությունը մեր յերկրում։ Մենշևիկների պես տրոցկիստները ես «ապացուցում» են, վոր մեր գյուղը զարգանում ե իբր թե կա-

պիտալիստական ուղիով։ Նրանք ժխտում են, վոր պրոլետարական դիկտատուրան գյուղացիության զարգացման համար ստեղծում է այնպիսի նոր պայմաններ, վորպիսիք չկան կապիտալիստական կարգերում։ Յեվ տրոցկիստները գալիս են այն յեզրակացության, վոր մեր հեղափոխությունը բուրժուական բնույթ ունի ու ժխտում են մեր պետության պրոլետարական բնույթը։

Տրոցկիզմում, մենշևիզմի այդ այլաձևության մեջ, կա մանր-բուրժուական հեղափոխականության վորոշ մաս, վորի մասին գրել է և ընկ. Լենինը։ Այդ «հեղափոխականության» շնորհիվ, տրոցկիզմի լոզունգները ներկվում են «հեղափոխական գույներով»։ Յեվ մենշևիկների, և՛ տրոցկիստների հայացքները, վոր տարբերվում են միմյանցից և հակադրվում են միմյանց միայն խոսքերով, հիմնված են նրա վրա, վոր նրանք չեն կարող և անընդունակ են հաշվի առնել դասակարգային ուժերի փոխհարաբերությունները, չեն հավատում հեղափոխության ուժերին և վերջապես վախենում են այն դժվարություններից, վորոնց հանդիպում է յուր ճանապարհին բանվոր դասակարգի պայքարը։ Յեթե մենշևիկների և տրոցկիստների լոզունգները պաշտպանություն գտնեյին մասսաների կողմից, միևնույն է, հավասարաչափ տանելու եյին դեպի հեղափոխության կործանումը։ Մեր յերկրի պայմաններում, անկասկած, տրոցկիզմը հանդիսանում է մենշևիզմի ամենավտանգավոր այլաձևությունը, վորովհետև նրա «ձախ» դիմակը շատ հեշտությամբ կարող է մոլորեցնել բանվորների յետամնաց խավերը։

Մանր-բուրժուական մի ուրիշ հոսանք էլ հանդիսանում է անարխիստական (անիշխանական)-սինդիկալիստական ուղղությունը, հոսանքը։ Այդ հոսանքի դեմ բոլշևիկները միշտ էլ պայքարել են։ Այդ հոսանքի ամենակարևոր բնութագրական հատկանիշը հանդիսանում է այն, վոր նա չի հասկանում և ժխտում է կուսակցության դերը բանվոր դասակարգին ղեկավարելու գործում, վոր նա չի հասկանում և ժխտում է պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը, վոր նա, ուրեմն, չի հասկանում և ժխտում է խորհրդային պետություն ստեղծելու անհրաժեշտությունը՝ կապիտալիզմից կոմունիզմին անցնելու անցողական շրջանում։ Անարխո-սինդիկալիստները կուսակցությունը չեն ճանաչում վորպես բանվոր դասակարգին յուր յետևից տանող ավանգարդի, և նրա այդ դերը ժխտում են։ Կուսակցության գո-

յության մեջ նրանք տեսնում են «բռնություն» բանվոր դասակարգի վրա, վորը պետք է ինքն «ազատորեն» արտահայտի յուր կամքը։ Դրանով փաստորեն նրանք զինաթափ են անում բանվոր դասակարգը, վորովհետև նրա ամբողջ ուժը կազմակերպվածության մեջ է, իսկ այդպիսի կազմակերպվածության ամենաբարձր աստիճանը հանդիսանում է բանվոր դասակարգի կուսակցությունը։ Անարխիստները դեմ են նրան, վոր անցողական շրջանում գոյություն ունենա խորհրդային պետություն։ Հենց այդ յելույթով նրանք ասում են, վոր բանվոր դասակարգը չի կարող իշխանությունը պահել յուր ձեռքում, վոր նա մինչև անգամ ,հենվելով նվաճված քաղաքական իշխանության վրա, չի կարող զբաղվել հասարակության սոցիալիստական վերակառուցումով։ Վորովհետև վոչնչացնել պրոլետարական պետությունը, դա նշանակում է պրոլետարիատին զինաթափ անել յուր անթիվ թշնամիների առաջ, թշնամիների, վորոնք չեն կարող հաշտվել այն փաստի հետ, վոր բանվոր դասակարգը խլել է իշխանությունը և կանգնած է յուր խլած իշխանության գլխին։

Անարխիստները ռուսական բանվորական շարժման մեջ նկատելի դեր յերբեք էլ չեն խաղացել։ Սակայն այդ հոսանքը վորոշ արձագանք գտել է մեր կուսակցության ներսում։ Նրան մենք տեսնում ենք կուսակցության համագումարի շրջանում, հանձինս այսպես կոչված բանվորական ոպպոզիցիայի։ Բանվորական ոպպոզիցիայի հիմնական սխալն այն էր, վոր նա հակադրում էր կուսակցությունը բանվոր դասակարգին և բանվոր դասակարգը՝ խորհրդային պետության։ Բանվորական ոպպոզիցիան զարգացնում էր այն հայացքը, թե պրոֆմիությունները ավելի բարձր են կուսակցությունից, ավելի լավ են արտահայտում պրոլետարիատի դասակարգային շահերը, վորովհետև պրոֆմիություններում համախմբված է համարյա ամբողջ բանվոր դասակարգը, իսկ կուսակցության մեջ — բանվոր դասակարգի միայն մի մասն է։ Բանվորական ոպպոզիցիան պահանջում էր՝ ժողովրդական տնտեսության ղեկավարությունն անմիջապես հանձնել արտադրողների համագումարին, այսինքն՝ հակառակ խորհրդային պետության, վորտեղ կազմակերպված է բանվոր դասակարգը. բանվորական ոպպոզիցիան առաջարկում էր՝ արտադրության ղեկավարությունը հանձնել պրոֆմիությունների առանձին մասերին։ Այս պակասությունները, վորոնք գոյություն ունեն պե-

տական ապպարատում և վորոնք անխուսափելի յեն դեռ յերկար տարիների ընթացքում, ոպպոզիցիան վերագրում եր խորհրդային պետության եյությանը, չհասկանալով այդ պետության դերը պրոլետարական դիկտատուրայի իրականացման գործում։

Մեր կուսակցությունն աճել, ամրացել և կոփվել է մանր-բուրժուական այդ բոլոր հոսանքների դեմ մղած պայքարում։ Նա հետևողականորեն և վճռական կերպով կռվել է ամեն մի չնչին շեղման դեմ, նա կռվել է մարքսիզմի-լենինիզմի ամեն մի խեղաթյուրման դեմ, ինչպիսի ցուցանակի տակ էլ այդ խեղաթյուրումները թագնված լինեյին։

3. ՊԱՅՔԱՐ ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

(Համ. Կոմ. Կուս. (բ) Անդրյերկկոմի դիմումից)

Կուսակցության 15-րդ համագումարը, վերջնականապես լիկվիդացիայի յենթարկելով տրոցկիստական ոպպոզիցիան, կուսակցության առաջ իր ամբողջ հասակով դրեց յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլլեկտիվացման խնդիրը, վորով համագումարն առանձին ուժգնությամբ ընդգծեց քաղաքի և գյուղի կուլակային և նեպմանական խավերի վրա ուժեղ հարձակում գործելու անհրաժեշտությունը։ Մեր շինարարության տարբեր ասպարեզներում կուսակցության կողմից ամենայն համառությամբ և բոլշևիկյան վճռականությամբ տարվող քաղաքականությունը, միջազգային իմպերիալիստների կողմից ԽՍՀՄ դեմ միասնական ֆրոնտ կազմակերպելու նոր փորձերի հետևանքով Խորհրդային հանրապետությունների առջև կանգնող արտաքին դժվարությունները, հացամթերման՝ անցած շրջանի տնտեսական ժամանակավոր դժվարությունները, այն արտակարգ ձեռնարկումները, վորոնց հարկադրված եր կուսակցությունը դիմելու՝ հացամթերումների հետևանքով, — ակտիվության աճման պայմաններ են ստեղծել մեր հակառակորդ դասակարգային խմբակների համար, վորոնք վոչ միայն փորձում են ընդդիմանալ կուսակցության կիրառած միջոցներին, այլ և դասակարգային ֆրոնտի բոլոր գծերով — քաղաքական, տնտեսական և իդեոլոգիական ուղղություններով — հարձակման են դիմել մեր սոցիալիստական շինարարության հիմքերի դեմ։ Մեր դասակարգային հակառակորդ

ուժերի այդ հարձակումը չեր կարող չազդել մեր կուսակցության սակավ տոկուն, ավելի շատ տատանվող տարրերի վրա։ Այդ տարրերը, հանդիսանալով մեր դեմ կռվող դասակարգային ուժերի լսափողը, փորձում են կուսակցությունը շարժել հստակ դասակարգային դիրքից, փորձում են ապացուցել, վոր կուսակցությունը պետք է կանգնի մեր յերկրի բուրժուական և մանր-բուրժուական տարրերին անընդհատ զիջումներ կատարելու ճանապարհի վրա։

Տեղի ունեցող խոսակցություններն այն մասին, թե արտակարգ միջոցները հարվածել են վոչ թե կուլակին, այլ ամբողջ գյուղին և առաջին հերթին՝ միջակին, այն առաջարկները, վորոնց համաձայն պետք է կուսակցության գիծը նշել, նկատի ունենալով մանր-բուրժուական տարրերի տատանումների, գյուղի բուրժուական տարրերի ուժի և պահանջների աստիճանը, այն հայտարարությունները, թե անհրաժեշտ է ընթանալ ինդուստրացման տեմպի թուլացման, կապիտալ ներդրումների կրճատման, ծանր ինդուստրիայի զարգացման համար տրվող վարկերի կրճատման ուղիով՝ թեթև տեքստիլ արդյունաբերության զարգացումն արագացնելու համար և նպատակ ունենալով կարելույն չափ արագ հագեցնել շուկան և դադարեցնել ապրանքային սովը, — դրանք պետք է մեր կուսակցության կողմից գնահատվեն վորպես մի ձգտում՝ կուսակցությունն ու պետությունը շեղելու սոցիալիստական ուղիներից դեպի կապիտալիստական զարգացման ռելսերը։ Այդ ձգտումների գնահատությունը, վորպես լիկվիդատորական ձգտումների, և այդ բացահայտ ոպպորտունիստական տենդենցների դեմ մղվող կատաղի պայքարը, — տենդենցներ, վորոնք վարագուրում են մեր յերկրի դասակարգային աճող ներհակությունները և սրվող դասակարգային պայքարը, — հանդիսանում է մեր կուսակցության ներկա մոմենտի հիմնական մարտական խնդիրը։

Անհրաժեշտ է հաշվի առնել, վոր դասակարգային թշնամի խմբակների ակտիվության աճումը ԱՍՖԽՀ պայմաններում զուգակցված է ռազմատենչ նացիոնալիզմի աճման հետ, վորը ձգտում է ռեվանշի՝ մեր կուսակցության ազգային քաղաքականության հիմնական հարցերում։

Այդ տենդենցները չեն կարող չազդել մեր կուսակցության կազմակերպության համապատասխան ողակների վրա և չեն կարող չանդրադառնալ Անդրկովկասի կուսկազմակերպությունների

տատանվող տարրերի տրամադրությունների վրա, կազմակերպությունների, վորոնք հակումն ունեն զիջումներ անելու ազգային ինտելիգենցիայի ձգտումներին և բաղձանքներին։ Այդ ամենն ստիպում է ԱՍՖԽՀ կուսակցական կազմակերպություններին՝ հատուկ զգուշությամբ վերաբերվել մեր կուսակցության մեջ աջ վտանգի հարցին, հարկադրում է հատուկ թափով սրել պայքարը գլուխ բարձրացնող նացիոնալիզմի դեմ։

Սակայն, դասակարգային պայքարի սրման պայմաններում կուսակցական բոլոր կազմակերպությունների ուշադրությունը պետք է կենտրոնացվի նաև այն բանի վրա, վոր անհանդուրժելի յե անտարբեր. հաշտվողական վերաբերմունք ցույց տալ ոպորտունիստական այն տենդենցներին, վորոնց նպատակն է վերաքննել Լենինի ուսմունքը քաղաքականության և տակտիկայի հիմնական հարցերի վերաբերյալ։

Լենինի կուսակցությունը — մարտնչող բոլշևիզմի կուսակցությունը, վորպես իր հիմնական լոզունգներից մեկը՝ միշտ առաջադրել է, վոր գաղափարական լիակատար անհաշտվողականություն պետք է ցուցաբերել դեպի կուսակցական գծի բոլոր ու ամեն տեսակի աղավաղումները և շեղումները։ Լենինը միշտ սովորեցնում եր կուսակցությանը, վոր հաշտվողականը — դա նույն ոպորտունիստն է, վորը գաղափարական տատանումները պաշտպանում է՝ տարաձայնությունները չբորբոքելու դիմակի տակ։

Տրոցկիստական ոպոզիցիայի ջախջախման վերջին փորձով կուսակցությունը մի անգամ ևս ստուգեց այդ դրության ճշտությունը։ Միայն լիակատար և անվերապահ անհաշտվողականությունն եր, վոր անհրաժեշտ պայմաններ ստեղծեց մենշևիզմի այդ մի տեսակը ցրելու համար, վորը փորձում եր ձախ ֆրազի տակ թագցնել իր աջ կերպարանքը։

ԱՍՖԽՀ կուսակցական կազմակերպություններն իրենց ուշադրությունը պետք է կենտրոնացնեն հաշտվողականության հարցի վերաբերմամբ բռնելիք դիրքի վրա։

...Նրա դեմ մղվող պայքարը նույնպիսի մարտական և հիմնական լոզունգ պետք է լինի, ինչպես անսքող ոպորտունիզմի դեմ մղվող պայքարը։

Սակայն, կուսակցական բոլոր կազմակերպությունների ուշադրությունը կենտրոնացնելով այն բանի վրա, վոր անհրաժեշտ է պայքարել աջ թեքման և նրա նկատմամբ ցույց տրվող հաշտվողական վերաբերմունքի դեմ, — Համկոմկուսը բոլոր կազմակերպությունների և կուսակցության բոլոր անդամների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, վոր նախընտրական կամպանիան և կրակը աջ կողմը կենտրոնացնելը կարող է օգտագործվել տրոցկիստական ոպոզիցիայի փշրանքների կողմից։

Կատարյալ անհաջողության դատապարտված՝ տրոցկիստների այդ ձգտումին, վորով նրանք աշխատում են ռեվանշ առնել կուսակցությունից, — պետք է վճռական հակահարված տալ։ Կուսակցությունը լավ պետք է հիշի, վոր մենշևիզմի մի տեսակը հանդիսացող տրոցկիստական ոպոզիցիայի մնացորդների դեմ մղվող պայքարը մեր կուսակցության ակտուալ խնդիրներից մեկն է։

... Սակայն, չթուլացնելով պայքարն ընդդեմ տրոցկիստական ոպոզիցիայի, կուսակցությունն յուր հատուկ ուշադրությունը կենտրոնացնում է աջ թեքման դեմ մղվող պայքարի վրա, կուսակցության մեջ յեղած ակնհայտ ոպորտունիստական տարրերի դեմ մղվող պայքարի վրա, տարրերի, վորոնք ձգտում են կուսակցությունը դեպի յետ տանել 15-րդ համագումարի վորոշումներից և դրանով ճեղք են բանում, վորպեսզի կարելի լինի կուսակցության մեջ բուրժուական-դեմոկրատական տենդենցներ անցկացնել։

... Ընդդեմ աջ տատանումների, ընդդեմ անհիմն խուճապայնության, ընդդեմ տրոցկիստական հարձակումների, ընդդեմ գլուխ բարձրացնող նացիոնալիզմի և շովինիզմի, ընդդեմ բյուրոկրատիզմի, — հանուն լենինյան պարզորոշ գծի, հանուն արշավանքի՝ կուլակի դեմ, հանուն յերկրի ինդուստրացման, հանուն գյուղատնտեսության կոլլեկտիվացման, հանուն Անդրկովկասյան Ֆեդերացիայի՝ վորպես հզոր ԽՍՀՄ մի մասի ամրության, հանուն բանվորագյուղացիական մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության, հանուն Անդրկովկասի ժողովուրդների համերաշխ, յեղբայրական սոցիալիստական աշխատանքի, հանուն մեր կուսակցության լենինյան, բոլշևիկյան ղեկավարության ապահովման։

ՀԱՄ. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (Բ) ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Կուսակցության խնդիրները յեվ նրա կառուցվածքը. — *Կուսակցության կառուցվածքն անխզելիորեն կապված է այն նպատակների և խնդիրների հետ, վոր կուսակցությունը դնում է յուր առաջ։ Բոլշևիկյան կուսակցության կառուցվածքը միշտ ել խիստ կերպով համապատասխանել է և համապատասխանում է կոմունիզմի համար մղվող հեղափոխական պայքարի խնդիրներին։ Մինչև 1917 թիվը կուսակցության առաջ դրված եր ցարիզմը տապալելու խնդիրը, 1917 թվին — բանվոր դասակարգի կողմից իշխանությունը խլելու խնդիրը, 1918—20 թվերին — քաղաքացիական կռվի ֆրոնտներում պայքարելու խնդիրը, հակահեղափոխությունը հաղթելուց հետո — արդեն սոցիալիստական շինարարության խնդիրը՝ թշնամական ողակում։ Մեր կուսակցությունը հանդիսանում է կազմակերպողը կոմունիստների համաշխարհային այն պայքարի, վորը մղվում է հանուն կապիտալիզմի կործանման։ «Մենք չորս կողմից շրջապատված ենք թշնամիներով և ստիպված համարյա միշտ ել գնում ենք նրանց կրակի տակից» — այս խոսքերը, վոր ասել է ընկ. Լենինը 1902 թվին, ամբողջապես վերաբերում են և ներկա ժամանակին։ Թշնամու գնդակների և կրակի տակ մենք պիտի գտնվենք այնքան ժամանակ, մինչև վոր սոցիալիստական հեղափոխությունը չհաղթի կապիտալիզմին՝ գլխավոր և վճռական յերկրներում։ Յեվ մեր կուսակցությունը կառուցված է այնպես, վորպեսզի կարողանա դիմադրել թշնամիների անընդհատ կրակին, վորպեսզի կարողանա պաշտպանվել և հարձակվել, քայլ առ քայլ նվաճելով նոր դիրքեր՝ դեպի սոցիալիզմ տանող ճանապարհի վրա։*

Ընկ. Լենինը միշտ ել ընդգծել է սերտ և անխզելի կապի անհրաժեշտությունը կուսակցության շինարարության հիմքերի և նրա քաղաքական պայքարի միջև։ Ընկ. Մարտինովը պատմում է իր մի հետաքրքրական խոսակցության մասին, վոր ունեցել է ընկ. Լենինի հետ 1901 թվին, այսինքն այն ժամանակ, յերբ Լենինի ղեկավարության տակ արդեն ստեղծվում եր մեր կուսակցությունը։ ***

Մարտինովը և Լենինը խոսել են պրոլետարական հեղափոխության և բանվոր դասակարգի խնդիրների մասին, բանվոր դասակարգի պայքարի նպատակների մասին, այն հիմնական մոմենտների մասին, վորոնք պետք է սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ծրագրի հիմքը դառնային, այդ կուսակցության գործելակերպի մասին և այլն։

«Յեվ ահա — ասում է ընկ. Մարտինովը — մենք ընկ. Լենինի հետ այդ բոլոր կետերի վերաբերյալ միմյանց հետ համաձայն դուրս յեկանք, բոլոր կետերի վերաբերյալ մտածում եյինք միատեսակ։ Բայց ահա զրույցի վերջում նա ինձ հարցնում է.

— Իսկ ինչպես եք դուք վերաբերվում դեպի իմ կազմակերպչական պլանը։

Մարտինովը պատասխանում է.

*— Յես — ասում է — այդ համարում եմ սխալ. դուք ուզում եք ինչ վոր մակեդոնական չետայի*** նման կուսակցություն ստեղծել։ Այդ սկզբունքը չգիտե Արևմտյան սոցիալ-դեմոկրատական*

** Այժմ Համ. Կոմ. Կուս. (բ) անդամ, այն ժամանակ — ոպպորտունիստ։*

*** Կուսակցության առաջին համագումարը տեղի ունեցավ 1898 թ. մարտին. սակայն այդ համագումարը կուսակցություն չստեղծեց, վորովհետև «միասնական և ուժեղ սոցիալ-դեմոկրատական կուսակցություն ստեղծելու համար այն ժամանակ անհրաժեշտ ելեմենտներ դեռ չկային» («Կազմակերպչական Կոմիտեյի» կազմակերպման մասին հաղորդած տեղեկությունից). տակավին հարկավոր եր կազմակերպչական և գաղափարական մեծ աշխատանք՝ նման կուսակցության կադրեր ստեղծելու համար։ Կուսակցության գոյության ամուր հիմքը դրեց II համագումարը (1903 թ.), վորտեղ կուսակցությունը պառակտվեց և առաջ յեկան բոլշևիկներ ու մենշևիկներ։ I համագումարի գլխավոր նշանակությունն այն է, վոր այն ժամանակից ի վեր պրոլետարիատի կազմակերպված քաղաքական կուսակցության իդեյան դարձավ վորպես ուղեցույց աստղ և ցանկալի նպատակ սոցիալ-դեմոկրատական բոլոր գիտակից գործիչների համար (Նույն աղբյուրից)։*

**** «Մակեդոնյան չետաներ» — ապստամբ գյուղացիների ռազմական կազմակերպություններ՝ շատ խիստ կարգապահությամբ։ Մարտինովը դրանով ուզում է ասել, վոր Լենինն առաջարկում է կուսակցությունը կառուցել դավադրական կազմակերպության նման։*

3*

կուսակցություններից և վոչ մեկը. այդ չգիտեն և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատները։

Վորպես պատասխան՝ Լենինը հայտարարում է նրան.

— Նշանակում է այդ կետում ինձ հետ համաձայն չե՞ք։

— Այո։

— Յեթե այդպես է, այն ժամանակ ընդհանրապես ձեզ հետ խոսելու վոչինչ չունենք։

— Յեվ այդ որից սկսած — ասում է ընկ. Մարտինովը — մեր ճանապարհները միմյանցից բաժանվեցին յերկար տարիներով»։ (Մեջբերումը կատարված է ըստ Մ. Վ. Ֆրունզեյի յերկերի ժողովածույի III հատորի)։

Վո՞րն է Լենինի խոսքերի իմաստը։ Ով համաձայն չէ կենտրոնացված, յերկաթե կարգապահությամբ միացված կուսակցություն ստեղծելու հետ (հենց դրանում էլ կայանում է լենինյան «կազմակերպչական պլանը»), նա նշանակում է դեմ է ցարիզմը տապալելու պայքարին, դեմ է պրոլետարիատի հեգեմոնիայի ն բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ, նա, նշանակում է, կուսակցության գործելակերպի և ստրատեգիայի հիմնական հարցերում համաձայն չէ Լենինի հետ և դրա համար էլ նրա հետ «խոսելու վոչինչ չունենք»։ Վորովհետև կազմակերպչական հարցն անբաժան է կուսակցության հեղափոխական պայքարի խնդիրներից և նպատակներից։

Կուսակցության անպայման կենտրոնացումը յեվ խստագույն դիսցիպլինան. — Մեր պրոլետարական կուսակցության հեղափոխական բնույթը պահանջում է, վոր կուսակցությունն ամենախիստ կերպով յենթարկված լինի կենտրոնացման և նրա շարքերում գոյություն ունենա յերկաթե կարգապահություն։ «Կուսակցության կազմակերպչական կառուցվածքի ղեկավարող սկզբունքը, ասում է կանոնադրությունը, հանդիսանում է դեմոկրատական կենտրոնացումը»։

Կուսակցական կազմակերպության կենտրոնացումը յուր արտահայտությունը գտնում է նրանում, վոր կուսակցական վարի կազմակերպությունը պարտավոր է անպայմանորեն յենթարկվել բարձրին և արագ ու ճշգրիտ կերպով իրագործել վերջինիս վորոշումները։ Նույնը վերաբերում է կուսակցության յուրաքանչյուր անդամին։ Կուսակցական յուրաքանչյուր կազմակերպություն,

վորոշ ժամանակի համար, ընտրում է ղեկավարող կուսակցական մարմին։ Կուսակցության համագումարի ընտրած կուսակցական բարձրագույն մարմինը հանդիսանում է Համ. Կոմ. Կուս. (բ) Կենտրոնական Կոմիտեն։ Կենտկոմը — դա միակ կենտրոնն է, վոր ուղղություն է տալիս կուսակցության ամբողջ աշխատանքին. նրա վորոշումները պարտադիր են հանդիսանում կուսակցության յուրաքանչյուր անդամի և կազմակերպության համար։

Կենտրոնացման հիմքը հանդիսանում է կուսակցական կարգապահությունը։ «Կուսակցական խստագույն կարգապահությունը, ասում է կուսակցության կանոնադրությունը, հանդիսանում է կուսակցության բոլոր անդամների և կուսակցական բոլոր կազմակերպությունների ամենաառաջնակարգ պարտականությունը»։ Առանց կարգապահության չկա կազմակերպվածություն։ Հենց կարգապահությունն է, վոր առանձին մարտիկներին վերածում է կոմունիզմի հզոր բանակի։ Միայն կարգապահությունն է, վոր ապահովում է կուսակցության գործողությունների միասնականությունը, հնարավորություն է տալիս կուսակցությանը — բաշխել յուր ուժերն այնպես, ինչպես դա պահանջում է հեղափոխական պայքարը։ Կարգապահություն, փոքրամասնության յենթարկվելը մեծամասնությանը — ահա կուսակցության ռազմունակության գլխավորագույն պայմանը։ Կուսակցությունը պահանջում է յուր անդամից, վորպեսզի նա առանց այլևայլության իրագործի կուսակցության ամեն մի վորոշումը, յեթե անգամ նա այդ վորոշմանը համաձայն չէ։ Կարգապահությունը հենց նրանում է կայանում, վորպեսզի յենթարկել յուր սեփական, անձնական կամքը կոլլեկտիվի կամքին, կուսակցական մեծամասնության կամքին, կատարել և անել այն, ինչ վոր կուսակցությունը համարում է հարկավոր, անհրաժեշտ։ Կարգապահությունը խանգարելու համար կուսակցության կանոնադրությունը սահանում է մի շարք պատժիչ միջոցներ, մինչև իսկ կուսակցությունից հեռացնելը։ Սակայն բոլշևիկյան կուսակցության մեջ կարգապահությունը կույր հնազանդության վրա չէ, վոր պահվում է։ Կարգապահությունը, վորով հպարտանում է մեր կուսակցությունը, վորով սովորում են բոլոր յերկրների կոմունիստական կուսակցությունները, կռվել ու կոփվել է կուսակցության՝ բանվոր դասակարգի գործի համար մղվող յերկար, հերոսական պայքարի շնորհիվ և հետևանքով։ «Ջախության» յերեխայական հիվանդությունները»

գրքույկում ընկ. Լենինը քննում է հետևյալ հարցերը՝ «Ինչո՞վ է պահվում պրոլետարիատի հեղափոխական կուսակցության կարգապահությունը։ Ինչո՞վ է նա ստուգվում։ Ինչո՞վ է նա ամրացվում»։ Ընկ. Լենինը ցույց է տալիս յերեք պայման, առանց վորոնց բոլոր «փորձերը՝ ստեղծելու կարգապահություն, անխուսափելիորեն վերածվելու յեն դատարկության, ֆրազայի և ծամածռության»։

Առաջին պայմանը — «Պրոլետարական ավանգարդի գիտակցականությունը և նրա նվիրվածությունը հեղափոխությանը, նրա տոկունությունը, ինքնազոհությունը, հերոսությունը»։ Յուր պայքարի ընթացքում կուսակցությունը և նրա առանձին անդամները ցույց են տվել հեղափոխության նվիրվածության անթիվ ու անհամար օրինակներ։ Ուժեղ պրոլետարական դասակարգային գիտակցությամբ, ցարական պոդպոլիայի պայմաններում, բոլշևիկները գնում էյին բանտ, կախաղանի վրա։ Հազարավոր կոմունիստներ ընկան քաղաքացիական կռվի ֆրոնտներում, սպիտակ-գվարդիական պոդպոլիայում։ Յեվ ներկայումս էլ կոմունիստներն անձնվիրությամբ աշխատում են այն բոլոր դիրքերի վրա, վորտեղ նրանց գործի յեն դրել կուսակցությունը և հեղափոխության շահերը։

Յերկրորդ պայմանը — «Հմտությամբ կապվել, մոտենալ, մինչև վորոշ աստիճան, յեթե ուզում եք — ձուլվել աշխատավորության ամենալայն մասսաների հետ, և առաջին հերթին պրոլետարական մասսաների հետ»։ Բոլշևիկներն այդ հմտությունը ցույց տվին և՛ պոդպոլիայի պայմաններում և՛ պրոլետարական դիկտատուրայի պայմաններում՝ արդեն վորպես իշխող կուսակցություն։

Յերրորդ պայմանը — «Այդ ավանգարդի ստրատեգիայի և տակտիկայի, քաղաքական ղեկավարության ճշտությունը, այն պայմանով, վոր ամենալայն մասսաներն իրենք իրենց սեփական փորձով համոզվեն այդ ճշտության մեջ»։ Բոլշևիզմի ստրատեգիան և տակտիկան բռնել են պատմական բազմաթիվ քննություններ։ Մի քանի տասնյակ տարիների ընթացքում, անօրինակ հեղափոխական պայքարի փորձի հիման վրա, բանվոր դասակարգը և աշխատավոր լայն մասսաները համոզվեցին, վոր միայն կոմունիստական կուսակցությունն է, վոր պայքարում է իրենց դասակարգային շահերի համար։

Մեր բոլշևիկյան կարգապահության նման կարգապահություն — կարող է ստեղծել միայն պրոլետարական կուսակցությունը։ Աշխատանքի հենց պայմաններն են պրոլետարիատին դաստիարակում կոլեկտիվիզմի վոգով և կարգապահության ու կազմակերպվածության անհրաժեշտության գիտակցությամբ։ Մանր բուրժուայի համար, ընդհակառակը, բնորոշ է ձգտումը դեպի ինդիվիդուալիզմ, դեպի անջատվածություն։

1904 թվին Տրոցկին, բոլշևիկների դեմ ուղղած գրքույկում*, զայրացել էր Լենինի խոսքերից այն մասին, վոր ինտելիգենցիային բանվորները կսովորեցնեն կարգապահության։ «Նշանակում է — գրում էր Տրոցկին — Լենինի նոր փիլիսոփայության համաձայն... պրոլետարին բավական է անցնել «ֆաբրիկայի» դպրոցը, վորպեսզի կարողանա ինտելիգենցիային, վորն առայժմ յուր կուսակցության մեջ ղեկավարի դեր է խաղում, քաղաքական կարգապահության դաս տալ»։

«Կարգապահությունը և կազմակերպվածությունը — պատասխանում է նրան Լենինը — վորոնց այդքան դժվարությամբ է վարժվում բուրժուական ինտելիգենտը, առանձնապես հեշտ է յուրացվում պրոլետարիատի կողմից, հենց այդ ֆաբրիկային «դպրոցի» շնորհիվ։ Ընկ. Լենինն այնուհետև մատնանշում է, վոր մանր-բուրժուական ինտելիգենտին, վորը չի յուրացրել բանվոր դասակարգի տեսակետը, հատուկ է «աղայական անարխիզմը». մի մասի յենթարկվելն ամբողջին և փոքրամասնության յենթարկվելն մեծամասնությանը — պատկերանում է նրան վորպես «ճորտացում»։

Հեղափոխական պրոլետարական կարգապահությունը հանդիսանում է կուսակցության միասնականության ամենակարևոր պայմանն ու նախադրյալը և ամենալավ զրահը՝ նրա վրա գործադրվող մանր-բուրժուական տարերքի ճնշման դեմ։ «Պրոլետարիատի դիկտատուրայի հաղթական փորձը Ռուսաստանում, պարզորեն ցույց տվեց... վոր պրոլետարիատի անպայման կենտրո-

* Գրքույկը կոչվում էր «Մեր քաղաքական խնդիրները»։ Դա այն ժամանակվա ամենակոպիտ և ամենազրպարտողական մենշևիկյան գրական արտադրությունն էր՝ բոլշևիկների դեմ ուղղված։ Յեվ 1904 թվից հետո յել, այն պայքարում, վոր մղում էր մենշևիզմը Լենինի և բոլշևիկների դեմ, Տրոցկին շատ անգամ է բռնել «ամենակռվարար դիրք», — ինչպես, հավանություն տալով, մենշևիկների պարագլուխ Մարտովն է ասում Տրոցկու մասին։

նացումը և խստագույն կարգապահությունը հանդիսանում են բուրժուազիային հաղթելու հիմնական պայմաններից մեկը»։

«Ով, թեկուզ մի քիչ, թուլացնում է պրոլետարիատի կուսակցության յերկաթե կարգապահությունը (առանձնապես նրա դիկտատուրայի ժամանակ), նա փաստորեն օգնում է բուրժուազիային ընդդեմ պրոլետարիատի» (Լենին)։

Ներկուսակցական դեմոկրատիա. — Կուսակցության կենտրոնացումը դեմոկրատական է։ Մեր կուսակցության մեջ խստագույն կարգապահությունը միացվում է ներկուսակցական լայն դեմոկրատիայի հետ։

Վարից վեր — բջիջի բյուրոյից մինչև Կենտկոմը — կուսակցական բոլոր մարմիններն ընտրվում են։ Նրանք պատասխանատու յեն իրենց կուսակցական կազմակերպության առաջ և պարտավոր են կանոնավոր կերպով հաշիվ տալ նրան։ Այն կուսակցական կոմիտեն, կամ առանձին ընտրովի անհատները, վորոնք չեն արդարացնում կուս-կազմակերպության վստահությունը, անմիջապես հեռացվում են գործից և նրանց տեղ ընտրվում են ուրիշ ընկերներ։ Այսպես կատարրվեց՝ օրինակի համար՝ Սմոլենսկում, վորտեղ աշխատանքից հեռացվեցին կուսակցության նահանգային կոմիտեյի բոլոր պատասխանատու ղեկավարները, վորտեղ կուսակցական նահանգային արտակարգ կոնֆերենցիան վերընտրեց նահանգային կոմիտեյի ամբողջ կազմը։ Կուսակցությունը աշխատում է, վորպեսզի և՛ կուսակցական մարմինների և՛ յուրաքանչյուր ընտրովի կուսակցական ընկերոջ վրա փաստորեն լինի կուսակցական մասսայի հսկողությունը, վորպեսզի կուսակցական կազմակերպությունը միշտ էլ գիտենա ղեկավարների աշխատանքը և, յերբ հարկ լինի, ուղղի նրանց սխալները։

Ներկուսակցական դեմոկրատիան ապահովում է կուսակցության յուրաքանչյուր անդամի գործոն մասնակցությունը կուսկյանքում, կոմունիստների ամբողջ մասսայի մասնակցությունը կուսակցության քաղաքականության և պայքարին վերաբերվող կարևորագույն հարցերի քննությանը։ Դա նպաստում է կուսակցության անդամների ակտիվության և գիտակցականության սիստեմատիկ բարձրացմանը։ Բանվոր դասա-

կարգի ամբողջ մասսայի և գյուղացիության լայն խավերի քաղաքական ակտիվությունն անընդհատ աճում է։ Վորպեսզի շարունակ ամրացնել կուսակցության կապը և ղեկավարությունը բանվոր դասակարգի վրա, վորպեսզի ուժեղացնել պրոլետարական ղեկավարությունը գյուղացիության վրա, կուսակցության անդամների ակտիվությունը պետք է աճի ավելի արագ, քան անկուսակցական մասսաների ակտիվությունը։ Կուսակցության առաջ կանգնած խնդիրները գնալով ավելի և ավելի յեն բարդանում և նրանց հաջող իրագործումը նմանապես պահանջում է, վոր կուսակցության ակտիվությունը շարունակ բարձրանա։

Ներկուսակցական դեմոկրատիայի իրականացումը միևնույն ժամանակ կուսակցության ինքնաքննադատության ծավալում է նշանակում։

Նախընթաց զրույցներում արդեն պարզված է, թե սոցիալիստական շինարարության ճանապարհին ինչպիսի դժվարությունների յե հանդիպում պրոլետարիատը։ Յերկրի տեխնիկական յետամնացությունը ՆԵՊ-ի պայմաններում, յերկրի տնտեսության մեջ մասնավոր-կապիտալիստական տարրերի անխուսափելի աճումը, կուլտուրական յետամնացությունը, ղեկավարելու և կառուցելու փորձի ու հմտության անբավարարությունը, — այդ բոլորը կուսակցության աշխատանքի համար ստեղծում են արտակարգ դժվարություններ։ Մանր-բուրժուական ճնշումը կուսակցության վրա, կուսակցության առանձին բջիջների կազմալուծման վտանգը, բյուրոկրատիզմը, վորը ներս է սողում կուսակցական օրգաններում, — այդ բոլորը պահանջում են վճռական պայքար մեր աշխատանքում յեղած թերությունների դեմ։ Դա ավելի կարևոր է հենց այն պատճառով, վոր մեր կուսակցությունը — միակն է մեր յերկրում։ Դա ստեղծում է վորոշ նախադրյալներ գոռոզանալու և սեփական սխալների վրա բարձրից նայելու համար։

Բաց անել մեր պակասությունները կարելի յե միայն կուսակցության անդամների ամբողջ մասսայի օժանդակության և գործոն մասնակցության դեպքում։ Այն կոմունիստը, վորը նկատում է աշխատանքում յեղած թերությունները և ծածկում է նրանց, կուսակցական հանցագործություն է կատարում։ Ինքնաքննադատության բնագավառում էլ կուսակցության յուրաքանչյուր անդամ պետք է մեր

շինարարության բոլոր թերությունների և հիվանդոտ կողմերի յուր անվախ մերկացումով որինակ ցույց տա անկուսակցական բանվորներին։ Այդ՛ գործում կոմունիստը չի կարող և չպետք ե կանգ առնի վոչ մի խոչընդոտի առաջ։ Հանդիպելով դիմադրության, իսկ յերբեմն ել թերությունները քննադատելու հետևանքով յենթարկվելով հալածանքի, կոմունիստն իրավունք չունի վհատվելու, թուլանալու և պայքարից հրաժարվելու. Նա պետք ե ոգնի կուսակցությանը՝ դուրս բերելու և մերկացնելու այն քյալլագողներին և բյուրոկրատներին, վորոնք ձգտում են արգելք հանդիսանալ և խանգարել կուսակցության գծի անցկացումն ինքնաքննադատության բնագավառում։ Սմոլենսկու, Արտյոմովսկու և ուրիշ տեղերի որինակները ցույց են տալիս, թե կուսակցությունն ինչպիսի վճռականությամբ ե մոտենում նկատված թերությունների վերացմանը, թե ինչպես նա «հաշվի չառնելով անձերը», պայքարում ե կուսակցության շարքերում նկատվող կազմալուծման և բյուրոկրատական լճացման բոլոր տեսակի յերևույթների դեմ։

Վորքան ավելի յե լայնանում մեր շինարարության թափը, այնքան ավելի յեն շատանում սխալների և թերությունների հնարավորությունները, այնքան ավելի յե մեծանում կուսակցական ինքնաքննադատության նշանակությունը։

Մենք քննեցինք ներկուսակցական դեմոկրատիայի յերեք «սյուները», այն ե՝ կուսակցական որգանների ընտրողականությունը և պատասխանատվությունը, կուսակցության քաղաքականության հարցերի քննության մասնակցելը, կուսակցական ինքնաքննադատությունը։ Սակայն սխալ կլիներ մտածել, վոր ամեն տեսակ պայմաններում ներկուսակցական դեմոկրատիան կարող ե լրիվին իրականացվել։

Ներկուսակցական դեմոկրատիայի հնարավորությունները և շրջանակները կախում ունեն մեր պայքարի պայմաններից։ Որինակ, քաղաքացիական կռվի շրջանում պետք յեղավ ներկուսակցական դեմոկրատիայի շրջանակներն ուժեղ կերպով նեղացնել։ Այն ժամանակ կուսակցության բոլոր ուժերը կենտրոնացված եյին հակահեղափոխության դեմ զենքով կռվելու գործի վրա։ Ամբողջ կուսակցությունը դարձել եր մի ռազմական բանակատեղի։ Պահանջվում եր կուսակցության պայքարի ղեկավարության ամենախիստ կենտրոնացում։

Յեվ մենք տեսնում ենք, վոր կենտրոնացումը ռազմական հրամանների ձևով այն ժամանակ գերակշռում եր։ Կուսակցական շատ որգաններ նշանակվում եյին վերևից։ Յեվ յեթե իմպերիալիստները մեզ նորից քաշեն պատերազմի մեջ, կուսակցությունը, ստիպված, կրկին պիտի նշանակալի կերպով սահմանափակի ներկուսակցական դեմոկրատիան։ Լիովին հասկանալի յե, վոր կուսակրության աշխատանքի ավելի վաղ շրջանում — պոդպոլիայի պայմաններում — ներկուսակցական դեմոկրատիայի շրջանակները նմանապես պետք ե արտակարգ կերպով նեղացվեյին, վորովհետև դա պահանջում եյին հեղափոխական պայքարի շահերը։

Այժմյան պայմաններում — սոցիալիստական շինարարության խաղաղ պայմաններում — ներկուսակցական դեմոկրատիայի լայն կիրառումը համառ անհրաժեշտությամբ թելադրում են շինարարության պահանջներն ու կարիքները։

Կուսակցության XV համագումարն ասում ե.

«Համագումարն անհրաժեշտ ե համարում, առանձնապես ի նկատի ունենալով կուսակցության առաջ կանգնած խնդիրների բարդությունը և կուսակցության անդամների ամբողջ մասսայի ակտիվությունը բարձրացնելու նպատակը, զարգացնել ներկուսակցական դեմոկրատիան, զարգացնել ինչպես խորհրդային ապարատի, այնպես ել կուսակցության ներսում գտնվող թերությունների գործնական քննադատությունը, ուժեղացնել պայքարը կարյերիզմի դեմ և այլն, և այլն»։

Մանր-բուրժուական ոպպոզիցիոն հոսանքները կուսակցության մեջ շատ անգամ են ձգնել ներկուսակցական դեմոկրատիան ոգտագործել՝ կուսակցության ներսում կարգապահությունը խանգարելու, դեմոկրատիան հակադրելով կարգապահությանը։ Կուսակցությունը տվեց անհրաժեշտ հակահարված ոպպոզիցիոներների այդ ձգտումներին, ոպպոզիցիոներներին, վորոնք խեղաթյուրում եյին կուսակցական շինարարության բոլշևիկյան հիմքերը։

Ներկուսակցական դեմոկրատիան, նպատակ ունենալով ամրացնելու կուսակցական շարքերը, պետք ե ոժանդակի կուսակցության կարգապահության ամրացմանը։ Կուսակցության անդամները կարող են քննել նրա քաղաքականության հարցերը միայն մինչև կուսակցական վորոշման ընդունվելը։ Հարցերի նման քըն-

նումը պետք է ապահովի ավելի ճիշտ վորոշում ընդունելը, ընդունված վորոշումների գիտակից և անտրտունջ իրագործելը։ Կուսակցության կարգապահության ամրության գլխավոր պայմաններից մեկը ընկ. Լենինը, ինչպես վերևում ասացինք, համարում է «պրոլետարական ավանգարդի գիտակցականությունը» և «կուսակցության հմտությունը՝ կապվելու, մոտենալու մինչև վորոշ աստիճան, յեթե ուզում եք — ձուլվելու աշխատավորության ամենալայն մասսաների հետ»։ Ներկուսակցական դեմոկրատիան բարձրացնում է «պրոլետարական ավանգարդի գիտակցականությունը»։ Նա միևնույն ժամանակ նպաստում է կուսակցության կապվելուն անկուսակցականների հետ, վորովհետև վորքան ավելի գիտակից է կուսակցության անդամը, այնքան ավելի լավ նա կարող է անցկացնել կուսակցության գիծն անկուսակցականների շրջանում։ Ներկուսակցական դեմոկրատիան այսպիսով ամրացնում է կարգապահությունը կուսակցության ներսում։

Կուսակցության կառուցվածքը՝ բջիջից սկսած մինչեվ Կենտկոմ. — *Կուսակցության կանոնադրությունը կուսակցության կազմակերպության հետևյալ սխեման է տալիս.*

ա) ԽՍՀՄ տերիտորիա — Համամիութենական համագումար — Կենտկոմ։

բ) Շրջաններ, հանրապետություններ, նահանգներ — շրջանային (կամ յերկրային) կոնֆերենցիաներ, ազգային կոմկուսների համագումարներ, նահանգային կոնֆերենցիաներ — շրջանային կոմիտեներ (յերկրային կոմիտեներ), ազգային կոմկուսների կենտկոմներ, նահանգային կոմիտեներ։

գ) Վիճակներ, գավառներ, վիճակային, գավառային կոնֆերենցիաներ — վիճակային, գավառային կոմիտեներ։

դ) Գավառամասեր (ռայոններ) — գավառամասային (ռայոնական) կոնֆերենցիաներ — գավառամասային (ռայոնական) կոմիտեներ։

ե) Ձեռնարկություններ, գյուղեր, կարմիր բանակայինների մասեր, հիմնարկություններ — բջիջների ընդհանուր ժողովներ — բջիջների բյուրոներ։

Կուսակցական հիմնական կազմակերպությունը հանդիսանում է բջիջը։ Կուսակցության հենարանը և ամրոցը հանդիսանում է ֆաբրիկ-գործարանային բջիջը, վորովհետև նա ավելի

մոտ է բանվորական մասսային և հանդիսանում է կուսակցության ազդեցության գլխավոր տարածողն անկուսակցական բանվորների վրա։ Ֆաբրիկ-գործարանային բջիջների միջոցով կուսակցությունը հաշվի յե առնում բանվորական մասսայի պահանջներն ու տրամադրությունները և լրացնում յուր շարքերը բանվորների միջից դուրս յեկած նոր անդամներով։ Ֆաբրիկ-գործարանային բջիջներում հավաքված է կուսակցության հիմնական, բանվորական մասը։ Իրենց բջիջների միջոցով բանվոր կոմունիստները մասնակցում են կուսակցության քաղաքականության բոլոր հարցերի քննությանը և լուծմանը։

«Յուրաքանչյուր գործարան պետք է դառնա մեր ամրոցը» — գրում եր Լենինը դեռ 1902 թվին։ Կուսակցության կառուցումը բջիջների հիման վրա, բղխում է մեր կուսակցության հեղափոխական բնույթից։ Վորովհետև միայն գործարանային բջիջներն են հնարավորություն տալիս մշտապես կապվել բանվորական մասսաների հետ և անհրաժեշտ ժամին մոբիլիզեյի յենթարկել բանվոր դասակարգի ուժերը։ Այժմ Համ. Կոմ. Կուս. (բ) որինակով բոլոր կոմունիստական կուսակցությունները վերակառուցվում են ֆաբրիկ-գործարանային բջիջների հիման վրա։

Կուսակցական մարմինների մեջ կուսակցությունն ընտրում է յուր ամենալավ և փորձված անդամներին։ Ճնշող մեծամասնությամբ, կուսակցական կոմիտեների գլուխ են կանգնած բոլշևիկյան հին գվարդիայի ներկայացուցիչները։ Իսկ ամենալավերին, ամենաարժանավորներին և կոփված մարտիկներին կուսակցությունն ընտրում է Կենտրոնական Կոմիտեյի մեջ։

Մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի մասին Լենինն ասում եր, վոր նա «դարձել է խիստ կենտրոնացված և բարձր հեղինակություն ունեցող մի խմբակ»։ Կենտրոնական Կոմիտեյի մեջ կուսակցությունն ընտրում է այնպիսի մարդկանց, վորոնք ոգտվում են առանձին վստահությամբ, վորոնք իրենց յերկարամյա հեղափոխական աշխատանքով փորձված են, ինչպես կուսակցության փորձառու ղեկավարներ և առաջնորդներ։

Կուսակցության պատմությունը — կենտրոնացման յեվ դիսցիպլինայի համար մղված պայքարի պատմություն է. — *Կուսակցության պայքարը մանր-բուրժուական թեքումների դեմ միևնույն ժամանակ պայքար եր՝ կուսակցության շինարարության*

բոլշևիկյան հիմունքների համար։ Այն խմբերը և հոսանքները, վորոնք ջանում եյին կուսակցության մեջ մտցնել մանր-բուրժուական հայացքներ, միևնույն ժամանակ դուրս եյին գալիս կուսակցության շինարարության այն հիմունքների դեմ, վորոնք միակն են, վոր հնարավոր են դարձնում հեղափոխական պայքարի իրականացումը։

Բոլշևիկների և մենշևիկների միջև սկզբում բաժանում տեղի ունեցավ գլխավորապես կազմակերպչական հարցերի շուրջ։ Վեճը կուսակցության մասին բորբոքվեց II համագումարում կանոնադրության առաջին կետի շուրջը, վորը վորոշում է, թե ում պետք է համարել կուսակցության անդամ։

Լենինի ձևակերպումն ասում եր. «*Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության անդամ համարվում է ամեն վոք, ով ընդունում է նրա ծրագիրը, ոժանդակում է կուսակցությանը՝ անձամբ մասնակցելով կուսակցական վորևե կազմակերպությանը*»։ Մարտովի ձևակերպումը պնդում եր. «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության անդամ համարվում է ամեն վոք, ով ընդունում է նրա ծրագիրը, ոժանդակում է կուսակցությանը նյութական միջոցներով և ցույց է տալիս նրան կանոնավոր անձնական ոգնություն, կուսակցության կազմակերպություններից մեկի ղեկավարության տակ»։

Մարտովը վերին աստիճանի լայնացված և շատ անորոշ կերպով եր բացատրում կուսակցության անդամ լինելու հարցը, վորովհետև, ըստ Մարտովի, կուսակցության անդամ լինելու կոչումը չեր պարտադրում դառնալ կուսակցության վորևե կազմակերպության անդամ։ «Վորքան ավելի լայն տարածվի կուսակցության անդամի անունը, այնքան լավ», — ասում է Մարտովը համագումարում։ Մենշևիկների մի ուրիշ ղեկավար, Աքսելրոդը, այդ նույն հարցի մասին համագումարում ասում է. «Վերցնենք, որինակի համար, մի պրոֆեսորի, վորն ինքն իրեն համարում է սոցիալ-դեմոկրատ և հայտարարում է այդ մասին։ Յեթե մենք ընդունենք Լենինի ձևակերպումը, ապա մենք դուրս կձգենք մի մասն այն մարդկանց, վորոնք թեկուզ չեն կարող անմիջականորեն ընդունվել կազմակերպության մեջ, բայց այնուամենայնիվ հանդիսանում են կուսակցության անդամներ»։ Պարզ է, վոր վոչ

մի խումբ անդամ լինել չեր կարող այն կուսակցության հեղափոխական կարգապահության մասին, վորտեղ նրա անդամները չեն մտնում կազմակերպության մեջ և վորոնց վրա, հենց դրա համար էլ, կուսակցությունը հնարավորություն չունի իսկական հսկողություն իրականացնելու և կարգադրություններ անելու՝ յելնելով կուսակցության շահերից։

Լենինի ձևակերպումը, ընդհակառակը, կուսակցության անդամ լինելու հասկացողությունը սեղմում եր։ Պահանջելով, վորպեսզի կուսակցության յուրաքանչյուր անդամ մտնի կուսակցական կազմակերպության մեջ, Լենինը հենց դրանով ստեղծեց գլխավորագույն նախադրյալն այն մարտական կենտրոնացված կուսակցության, վորտեղ ընդունվում են միմիայն նրանք, ովքեր իսկապես պատրաստ են ամբողջապես և լիովին իրենց նվիրել բանվոր դասակարգի գործի համար մղվող պայքարին։ «Այս ձևակերպումը, այսինքն Մարտովի ձևակերպումը, — ասում է Լենինը համագումարում արտասանած ճառում, — անխուսափելիորեն ձգտում է բոլորին և յուրաքանչյուրին դարձնել կուսակցության անդամ. ինքը Մարտովը ստիպված պիտի խոստովաներ այդ, վերապահումով. «Յեթե ուզում եք, այո», ասաց նա։ Յեվ հենց այդ մենք չեյինք ուզում։ Յեվ հենց դրա համար էլ մենք այսպես վճռականորեն ենք դուրս գալիս Մարտովի ձևակերպության դեմ։ Ավելի լավ է, վորպեսզի տաս աշխատող իրենց չանվանեն կուսակցության անդամ (իսկական աշխատողներն աստիճաններից չեն վազում), քան, վորպեսզի մի շատախոս իրավունք և հնարավորություն ունենա կուսակցության անդամ լինելու»։

Այսպիսով, II համագումարում վիճում եյին այն մասին, թե ինչ պետք է հասկանալ կուսակցություն անվան տակ։ Մենշևիկները կուսակցության վրա նայում եյին, վորպես լայն, փխրուն մի կազմակերպության վրա, վորն ընդունում է յուր մեջ բոլոր համակրողներին, կուսակցությանը հարողներին և այլն։ Նման կազմակերպություն, իհարկե, ընդունակ չեր լինի իսկապես ղեկավարելու բանվոր դասակարգի պայքարը։ Լենինն, ընդհակառակը, յելնում եր նրանից, վոր «կուսակցությունը պետք է լինի միայն առաջավոր ջոկատ, ղեկավարը բանվոր դասակարգի վիթխարի մասսաների, վորն ամբողջությամբ (կամ համարյա ամբողջությամբ) աշխատում է կուսակցական կազմակերպությունների «հսկողության և ղեկավարության տակ», վորը, սակայն, ամբող-

ջությամբ չի մտնում և ամբողջությամբ չպետք է մտնի կուսակցության մեջ»։ Ըստ Լենինի — կուսակցությունը պետք է լինի բանվոր դասակարգի մարտական ավանգարդը։

Յեվ, ինչպես վոր դա նախատեսնում եր Լենինը, շուտով II համագումարից հետո, կազմակերպչական տարաձայնություններին հաջորդեցին խոշորագույն տարաձայնություններ՝ մոտեցող հեղափոխության մեջ կուսակցության ունենալիք ստրատեգիայի և տակտիկայի հարցերի շուրջը։ Յեվ վորքան հեռու եյին գնում մենշևիկները բանվոր դասակարգի գծից՝ հեղափոխության խնդիրների վերաբերյալ, այնքան ավելի յեր սրվում նրանց պայքարը բոլշևիզմի կազմակերպչական սկզբունքների դեմ։ Բոլշևիկներին մեղադրում եյին դավադրության մեջ, խմբականության մեջ, աղանդավորության մեջ և վերջապես նրա մեջ, վոր նրանք կուսակցության ներսում ստեղծում են պաշարողական դրություն և այլն։ Մանր բուրժուազիային հատուկ ձգտումով դեպի անջատումը, բաժան-բաժան լինելը, ինդիվիդուալիզմը, — մենշևիկները չեյին կարողանում հասկանալ պրոլետարական դիսցիպլինայի և կենտրոնացման եությունը։

Պայքարը հանուն կուսակցության, հանուն նրա անպայման կենտրոնացման և խստագույն կարգապահության, բոլշևիկները համառությամբ մղել են մինչև հեղափոխությունը. կուսակցության շինարարության այդ հիմքերի համար կուսակցությունը պայքարել է բոլոր նրանց դեմ, ովքեր աշխատում եյին այդ հիմքերը քայքայել, նաև հեղափոխության տարիներին։ Կուսակցության միջի բոլոր ոպպոզիցիոն հոսանքները հեղափոխության տարիներին հարձակում եյին գործում հենց կուս-շինարարության հիմքերի վրա։

1918 թվին, Բրեստի հաշտությունը կնքելու հարցի առթիվ, 1920—21 թվերին, պրոֆմիությունների խնդիրների մասին կուսակցության մեջ տեղի ունեցող դիսկուսսիայի առթիվ, ոպպոզիցիոն խմբավորումները — «ձախ կոմունիստները», «տրոցկիստները», «բանվորական ոպպոզիցիան», «դեմոկրատական կենտրոնացման խմբակը» — աշխատում եյին իրենց ֆրակցիոն պայքարով խանգարել ու քայքայել կուսակցության միասնականությունը, կենտրոնացումը և կարգապահությունը։ 1921 թվի մարտին տեղի ունեցած կուսակցության X համագումարը վորոշեց. «Համագումարը հրահանգում է անհապաղ և առանց բացառության արձա-

կել այս կամ այն պլատֆորմի վրա առաջ յեկած բոլոր խմբակները և հանձնարարում է բոլոր կազմակերպություններին ամենախիստ կերպով հետևել և թույլ չտալ ֆրակցիոն և վոչ մի յելույթ։ Այս վորոշումն չիրականացնողները պետք է անպայման և անհապաղ հեռացվեն կուսակցությունից»։

1923 թվի աշնանը տրոցկիստներն առանձին կատաղությամբ հարձակվեցին կուսակցական շինարարության բոլշևիկյան հիմքերի վրա։ Տրոցկիստները ջանում եյին կուսակցության մեջ լեգալիզացիայի յենթարկել ֆրակցիաները և խմբավորումները, կուսակցությունը հակադրում եյին կուսակցական ապպարատին, ձգնում եյին վարկաբեկել և արատավորել կուսակցական ղեկավար որգանները։ Կուսակցությունը տրոցկիստներին վճռական հակահարված տվեց։ «Հարցերի քննության ազատությունը կուսակցության մեջ — ասում են կուսակցության XIII կոնֆերենցիայի և XIV համագումարի բանաձևերը — վոչ մի դեպքում չի նշանակում կուսակցության կարգապահությունը խախտելու ազատություն։ Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և բոլոր կուսակցական կենտրոնները տեղերում պետք է անհապաղ ձեռք առնեն ամենախիստ միջոցներ՝ պաշտպանելու բոլշևիկյան յերկաթե կարգապահությունն ամեն տեղ, ուր ջանում են նրան տատանել»։

Սկսած 1926 թվից, կուսակցության դեմ պայքարում եր Տրոցկու ղեկավարության տակ գտնվող ոպպոզիցիոն բլոկը։ Ոպպոզիցիոներները կատարում եյին կարգապահության այնպիսի խախտումներ, վոր կուսակցության պատմության մեջ յերբեք լսված ու տեսնված չեյին. նրանք արհամարհում եյին ամեն մի կուսակցություն, ջանում եյին կազմակերպել յերկրորդ կուսակցություն՝ դնելով նրա հիմքում իրենց եությամբ զուտ մենշևիկյան հայացքներ։ Կուսակցության յերկու տարվա պայքարն ոպպոզիցիոն բլոկի դեմ, — պայքարի տարիներ եյին հանուն բոլշևիկյան կուսակցականության, հանուն կարգապահության և միասնականության՝ լենինիզմի հիմունքներով։ Պայքարը վերջացավ կուսակցության լիակատար հաղթանակով։ Տրոցկիստական ոպպոզիցիան շատ չնչին պաշտպանություն ստացավ և այն էլ կուսակցության այն առանձին անդամների կողմից, վորոնք չունեյին կոմունիստական կայունություն։ Ոպպոզիցիան ջախջախվեց և XV համագումարը հեռացրեց նրան կուսակցությունից։ Կուսակ-

ցությունն այդ պայքարից ավելի միասնական և կուռ դուրս յեկավ, նա պատրաստ է արագ և վճռական հակահարված հասցնել այն բոլորին, վորոնք փորձ կանեն հարձակվելու կուսակցության լենինյան գծի վրա, նրա կառուցվածքի լենինյան հիմքերի վրա։

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նվիրվածություն հեղափոխությանը, գիտակցականություն և ակտիվություն. — «Հարկավոր է պատրաստել այնպիսի մարդիկ, վորոնք հեղափոխությանը նվիրեն վոչ միայն ազատ յերեկոները, այլ իրենց ամբողջ կյանքը։ Միևնույն միտքն արտահայտված է ինչպես Լենինի այս խոսքերում (վոր ասել է 1900 թվին), այնպես էլ կուսակցության կանոնադրության I կետի լենինյան ձևակերպման մեջ (կուսակցության II համագումարում)։ Կուսակցության անդամից պահանջվում է, վորպեսզի նա ամբողջությամբ և լիովին նվիրվի բանվոր դասակարգի գործին ծառայելուն։

Հեղափոխությանն անպայմանորեն նվիրված լինելը միայն առանձին լավ կոմունիստի հատկությունը չէ, այլ մեր կուսակցության մեջ գտնվողներից յուրաքանչյուրի պարտականությունը։ Դա այնպիսի հատկություն է, առանց վորի կոմունիստ լինել չի կարելի։ Կոմունիստ լինել չի կարող և անհապաղ հեռացվում է կուսակցությունից նա, ով հրաժարվում է կուսակցության կոչից՝ կատարել նրա այն հանձնարարությունները, վորոնք կապված են թեկուզ մեծ վտանգների հետ։ Յուրաքանչյուր կոմունիստ ամբողջապես և լիովին գտնվում է կուսակցության տրամադրության տակ։ Նա գտնվում է համաշխարհային հեղափոխության զինվորի դրության մեջ, զինվորի, վորին կուսակցությունն ամեն րոպե կարող է զինակոչի (մոբիլիզեյի) յենթարկել։ Յուրաքանչյուր կոմունիստ պարտավոր է յուր անձնական կյանքի շահերը յենթարկել հեղափոխության շահերին։ Կուսակցության այն անդամը, վորը յուր անձնական շահերը, անձնական կյանքի հարցերը վեր է դասում կուսակցական խնդիրներից և պարտականություններից, վորը փակվում է յուր անձնական կյանքի հարցերի շրջագծերում, նա այլևս դադարում է կոմունիստ լինելուց։ Մեր կուսակցության անդամներն, իհարկե, տարբերվում են միմյանցից իրենց զարգացման մակարդակով, ընդունակություններով, հեղափոխական կոփվածությամբ և դրա համար էլ նրանք կուսակցությանը հավասար չափով ոգուտ տալ չեն կարող։ Կուսակցությունը յուր անդամներից չի կարող պահանջել հավասար գիտակցականություն, հավասար ընդունակություն, հավասար ոգտակարություն, սակայն նա կարող է պահանջել և պահանջում է անպայման նվիրվածություն, անպայման պատրաստակամություն զոհվելու, յերբ դա անհրաժեշտ է հոգուտ բանվոր դասակարգի պայքարի շահերի։

Հեղափոխության նվիրված լինելը ստուգվում է վոչ միայն կռվի մեջ և ընդհատակյա աշխատանքում։ Անկասկած է, վոր նման պայմաններում կոմունիստը ստանում է ամենալավ հեղափոխական կոփվածություն, հեղափոխությանը նվիրված լինելու ամենալավ ստուգում։ Սակայն նման ստուգման կոմունիստը յենթարկվում է և յուր ամենորյա «խաղաղ» աշխատանքում՝ լինի դա արտադրության մեջ, կուսակցական, կուլտուրական, տնտեսական, պրոֆմիութենական, մի խոսքով ամեն մի աշխատանքում։ Սոցիալիզմի կառուցումը պահանջում է շատ յերկար, ամենահամառ և քրտնաջան աշխատանք։ Այդ աշխատանքը կազմվում է տասնյակ և հարյուր միլիոնավոր «փոքր գործերից»։ Ամբողջ շինարարության հաջողությունը կախում ունի այդ փոքր գործերի վորակից։ Կոմունիստից պահանջվում է, վորպեսզի նա իրեն հանձնված ամեն մի գործում գործ դնի յուր ամբողջ ուժերը, գիտելիքները, զգացմունքը, վորպեսզի նա որինակ ծառայի անկուսակցական բանվորի և գյուղացու համար։

Կուսակցությունը իր յուրաքանչյուր անդամից պահանջում է ակտիվություն և ինքնագործունեյություն՝ կուսակցության գիծն անցկացնելու գործում։

Ռազմական ճակատում ռազմիկից պահանջվում է վոչ միայն հրամանատարի տված հրահանգի ճշգրիտ և անտրտունջ կատարումն։ Նրանից պահանջվում է նաև իրերի դրության շարունակ պատկերացումն, դիտողություն, աչքաբացություն և ճարպիկություն։ Վոչ մի կանոնադրություն, վոչ մի հրահանգ ճշգրիտ կերպով չի կարող նախատեսել այն բոլոր հնարավոր պայմանները, վորոնց մեջ կարող է ընկնել ռազմիկը. իրենից՝ ռազմիկից, ստեղծված պայմաններին հարմարվելու նրա հմտությունից, անվախություն ու քաջություն ունենալուց, իր վրա դրված խնդիրները գիտակցելու աստիճանից նշանակալի չափով կախում ունի

իրեն տրված ռազմական հրահանգի հաջող կատարումը։ Դա հավասար չափով վերաբերում է ինչպես առանձին ռազմիկին, այնպես էլ զինվորական մասերին։ Այն բանակը, որի ռազմիկները և հրամանատարները սահմանափակվում են իրենց տրված հրամանների մեքենայական կատարումով, հենց առաջին իսկ ռազմական լուրջ փորձի ժամանակ անխուսափելիորեն պարտվում է։

Սակայն այն խնդիրները, որոնք դրված են կոմունիստի, հեղափոխության այդ զինվորի վրա, անհամեմատ կերպով ավելի բարդ են, քան ռազմիկի խնդիրը կռվի դաշտում։ Կուսակցությունը տալիս է միայն աշխատանքի ընդհանուր ցուցմունքներ, ցույց է տալիս մեզ մեր պայքարի ճանապարհը։ Կոմունիստից պահանջվում է, որպեսզի նա կարողանա կուսակցության ցուցմունքները հարմարեցնել այն պայմաններին, որոնց մեջ նրան վիճակվում է աշխատել։ Որպես օրինակ, վերցնենք կոմունիստի խնդիրները ֆաբրիկայի անկուսակցական բանվորների մեջ աշխատելու գործում։ Կուսակցությունն այդ կոմունիստին ասում է դու պետք է բացատրես և հասկացնես անկուսակցական բանվորներին կուսակցական քաղաքականությունը, պետք է ամենալավ անկուսակցականներից կուսակցության շուրջն ակտիվ ստեղծես և նրանց քաշես կուսակցության մեջ։ Կուսակցության այդ ցուցմունքների կատարելն ամբողջապես և լիովին կախում ունի նրանից, թե այդ կոմունիստն ինչպիսի հմտությամբ կարող է մոտենալ բանվորներին, իր բաժնում (ցեխում) աշխատող ընկերներին, կախում ունի նրա յեռանդից և ջանքեր թափելուց, յերբ նա բացատրում է կուսակցության գիծը, կախում ունի նրա այն անձնական օրինակից, որ նա տալիս է անկուսակցականներին, ինչպես քաղաքական գիտակցականության, այնպես էլ ուղղակի արտադրության ասպարեզում։

Կուսակցության պատմությունը շատ օրինակներ գիտե, յերբ բոլշևիկները կազմել են մարդկանց համեմատաբար փոքր թիվ։ Դա հատկապես պիտի ասել ռեակցիայի շրջանի մասին՝ 1905 թվի հեղափոխության պարտությունից հետո։ Սակայն և այդ ծանր տարիներին բոլշևիկների ազդեցությունը բանվոր դասակարգի վրա մեծ էր, որովհետև յուրաքանչյուր բոլշևիկ խոշոր ճիգ ու ջանք էր գործ դնում, օգտվում էր յուրաքանչյուր չնչին հարմարությունից, որպեսզի արհամարհելով ծանր պայմանները, բանվորական մասսայում տարածի բոլշևիզմի հայացքները։ Զեռնարկության մեջ բոլշևիկը պրոպագանդ էր մղում առանձին բանվորների մեջ, կազմակերպում էր ընդհատակյա, գաղտնի խմբակներ, տարածում էր թերթիկներ։ Բանթողների ժամանակ բոլշևիկը միշտ էլ առաջին շարքերումն էր։ Բոլշևիկն աշխատում էր ապահովագրական հիվանդանոցային դանձարկղներում, զանազան լեգալ կուլտուրական հիմնարկություններում, որոնք սպասարկում եյին բանվորական մասսաներին և այդ բոլորն էլ օգտագործում էր կուսակցական պրոպագանդի նպատակների համար։ Յերբ բոլշևիկին դատում եյին, դատարանում արտասանած նրա ճառն օգտագործվում էր բոլշևիկյան հայացքների պրոպագանդի համար, յերբ նրան ուղարկում եյին տաժանակիր աշխատանքի, նա ճանապարհին քարոզում և համոզում էր իրեն տանող զինվորներին։ Համառ աշխատանքով, պրոլետարիատի դասակարգային շահերը լավ հասկանալով, բոլշևիկը բանվորական մասսաների մեջ ձեռք էր բերում մեծ ընկերոջ և անկուսակցականների ղեկավարի հեղինակություն ու վստահություն։ Յեվ յեթե կուսակցությանը հաջողվեց ամենածանր պայմաններում պահել յուր դիրքերը բանվոր դասակարգի մեջ, դա հետևանք էր միմիայն նրա, որ յուրաքանչյուր բոլշևիկ իրենից ներկայացնում էր ակտիվ գործող ուժ։

Այժմ մեր կուսակցությունը միլիոնից ավել անդամ ունի, բայց նրա առաջ կանգնած խնդիրներն ավելի շատ են աճել և բազմապատկվել։ Յեվ այդ խնդիրների իրականացման համար կուսակցության յուրաքանչյուր անդամից պահանջվում է ճիշտ այնպիսի ակտիվություն, որպիսին ցույց տվին բոլշևիկները հեղափոխությունից առաջ։

Կոմունիստը պետք է լինի կուսակցության գաղափարների մշտական քարոզողը։ Նա պետք է օգտագործի ամեն մի չնչին հնարավորություն, որպեսզի անկուսակցականներին բացատրի և հասկացնի կուսակցության գիծը, քաղաքականությունը։ Նա պետք է կուսակցության գաղափարների մշտական քարոզողը լինի՝ ամենից առաջ անձնական օրինակով հանդիսանալով անկուսակցական մասսայի համար այնպիսի տիպար, որին վերջինս աշխատի հավասարվել։

Աշխատանքի և կենցաղի բոլոր բնագավառներում կոմունիստը պետք է հանդես գա որպես անկուսակցական մասսաների ղեկավար։ Ղեկավարի «կոչումը» վոչ վոք չի նվիրվում. նա պետք

և աշխատանքով ձեռք բերվի ճիշտ այնպես, ինչպես մինչհեղափոխության ընդհատակյա տարիներում։ Օրինակելի աշխատանք, նվիրվածություն հեղափոխության գործին, ուշիմություն դեպի մասսաների պահանջն ու կարիքները, քաղաքական խոշոր գիտակցականություն — միայն այսպիսի հատկություններն են, որ կոմունիստին դարձնում են անկուսակցականների իսկական ղեկավար։

Կուսակցությունը յուր անդամներից պահանջում է գիտակցականություն, այսինքն կուսակցության վերջնական նպատակների ըմբռնում և հասկացողություն այն խնդիրների, որ կուսակցությունը դնում է յուր առաջ տվյալ ժամանակամիջոցում։ Կուսակցության անդամը պարտավոր է ծանոթ լինել կուսակցության ծրագրի և նրա ու Կոմինտերնի համագումարների որոշումների հետ։ Կոմունիստը պետք է ծանոթ լինի այն հեղափոխական թեորիայի հիմքերի հետ, որի վրա կառուցվում և ապրում է մեր կուսակցությունը։ Մարքսի և Լենինի ուսմունքը հիմնված է պրոլետարիատի պայքարի փորձի վրա և նրա յուրացումն անհրաժեշտ է նրա համար, որպեսզի ավելի ակտիվ և գիտակից կերպով մասնակցել հեղափոխական շինարարությանը։ Կուսակցության անդամը պետք է կարողանա հեղափոխական թեորիան միացնել հեղափոխական պրակտիկայի հետ։ Կոմունիզմ կարելի յե սովորել «միայն յուր ուսման, դաստիարակության և կրթության յուրաքանչյուր քայլը կապելով պրոլետարների և աշխատավորների անընդհատ պայքարի հետ, որ մղվում է շահագործող հին հասարակության դեմ» (Լենին)։ Մարքսի և Լենինի հեղափոխական ուսմունքը հնարավորություն է տալիս մեզ ճիշտ կերպով հասկանալու կուսակցության և հեղափոխության առաջ դրված խնդիրները. միևնույն ժամանակ, միայն մասնակցությունը հեղափոխական պայքարին, կարող է ոգնել մեզնից յուրաքանչյուրին սեփական փորձի վրա ավելի լավ և ավելի խոր յուրացնել այդ ուսմունքը։

Միայն գիտակցականությունն է հնարավորություն տալիս կոմունիստին լինել կուսակցության գաղափարների մշտական քարոզողը բանվորական մասսաներում, լինել այդ մասսաների կազմակերպողը կոմունիստական լոզունգների և գաղափարների շուրջը։ Կոմունիստն ամեն կերպ պետք է

զգուշանա և քաշվի նրանից, ինչը Լենինը անվանում եր «կոմունիստական սնապարծություն»։ Յուրաքանչյուր կոմունիստի վրա դրված է ահագին պատասխանատվություն։ Նա ներկայացնում է կուսակցությունը, նրան է փոխանցվում այն ամբողջ վստահությունը, որ տածում են աշխատավորական մասսաները դեպի կուսակցությունը։ Կոմունիստների ձեռքում մեծ իշխանություն է կենտրոնացված, որովհետև մեր կուսակցությունը հանդիսանում է տիրող կուսակցություն և միակը յերկրում։ Այսպիսի պայմաններում կուսակցության համար առանձնապես վտանգավոր է գոռոզանալ, գերագնահատել յուր ուժերը։ Կոմունիստը միշտ պետք է հիշե, որ հենց միայն կուսակցության անդամի կոչումը յուր վրա դնում է խոշորագույն պարտականություններ և առանց այդ պարտականությունների կատարման, չի կարելի լինել պրոլետարիատի հեղափոխական կուսակցության արժանի անդամ։ Կոմունիստը պետք է շարունակ և անխոնջ կերպով սովորի, որպեսզի կարողանա իսկապես հաղթահարել սոցիալիստական շինարարության դժվարագույն խնդիրը, որպեսզի յետ չմնա մասսաների կուլտուրական ու քաղաքական աճումից և միշտ ել լինի նրանց ղեկավարը։

Դրանք են կոմունիստի պարտականությունները։ Այսպիսով, այդ պարտականությունները յերբեք ել չեն սպառվում անդամավճարների յուր ժամանակին մուծումով և ժողովներին կանոնավոր կերպով հաճախելով։ Դրանք ավելի ցայտուն կերպով կկանգնեն մեր առաջ, յեթե մենք դրանց համեմատենք սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների անդամների պարտականությունների հետ։

Օրինակի համար, ինչպիսի պարտականություններ է դնում յուր անդամի վրա գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը։ Հիմնականում այդ պարտականություններն հետևյալներն են — կանոնավոր կերպով մուծել անդամավճարները և ամեն տեսակ ընտրությունների ժամանակ քվեարկել հոգուտ յուր կուսակցության թեկնածուների։ Անդամ ժողովներով սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները շատ քիչ են անհանգստացնում իրենց անդամներին։ Անձնական կյանքը «վոչ վոքին չի վերաբերում»։ Կրոնականությունը կամ առևտրական ձեռնարկություններ ունենալը և այլն բոլորովին չի խանգարում լինել ուղղափառ «սոցիալիստ»։ Յեթե սոցիալ-դեմոկրատական բանվորը

մասնակցում է գործադուլներին, ապա այդ տեղի չի ունենում կուսակցության ղեկավարությունից բոլորովին անկախ և կամ մեծ մասամբ հակառակ այդ ղեկավարության։

Իսկ այժմ տեսնենք, թե ինչպիսի պարտականություններ են դրվում կոմունիստի վրա, օրինակի համար, Չինաստանում։ Այնտեղ, յեթե կոմունիստն ընկնում է իշխանության ձեռքը, ապա անպայման յենթարկվում է մահվան պատժի։ Յեվ կոմունիստները մահվան մշտական սպառնալիքի տակ արիաբար տարածում են բանվորական մասսաների մեջ կոմունիզմի գաղափարները, կազմակերպում են պրոլետարիատի ուժերն առաջիկա պայքարի համար, հանուն Չինաստանի ազատագրության՝ օտարյերկրյա և «հայրենի» ճնշողներից։

Սովորել բոլշևիզմի հին գվարդիայի օրինակի վրա.— Թե ինչպիսի՞ն պետք է լինի կոմունիստը, դրան վորպես օրինակ ծառայում է բոլշևիզմի հին գվարդիան — այն մի քանի հազար հին մարտիկները, վորոնք մինչհեղափոխական ընդհատակյայի ծանրագույն պայմաններում ստացել են մարտական թրծվածք, վորոնք միատեսակ և հավասար տոկունությամբ ապրել են հեղափոխական վերելքի տարիներում տեղի ունեցող ուժերի գերագույն լարումը և հեղափոխության նահանջի շրջանները։ Այդ հին գվարդիան հանդիսանում է մեր կուսակցության հիմքը և պահողն ու պահպանողը բոլշևիկյան այն տրադիցիաների, վորոնց և նա տալիս է բոլշևիկների յերիտասարդ սերնդին, սրանց միջոցով դաստիարակելով սոցիալիզմի տասնյակ և հարյուր հազարավոր նոր կառուցողներ։ Հին գվարդիայի ներկայացուցիչները կազմում են կուսակցության կենտրոնական ղեկավարող օրգանները։ Կուսակցությունն աշխատում է, վորպեսզի կուսակցականները և կոմյերիտները յերիտասարդ սերունդը բոլշևիկների հին գվարդիայի ամենօրյա պայքարի և աշխատանքի օրինակների վրա սովորի ունենալ բոլշևիկյան տոկունություն ու կայունություն, աներեր նվիրվածություն բանվոր դասակարգին և բոլշևիկյան անհաշտություն՝ մանր-բուրժուական ամեն տեսակ թեքումների դեմ պայքարելու գործում։

Բոլշևիկների հին գվարդիայի մասին ավելի պարզ պատկերացում մենք կստանանք, յեթե ծանոթանանք մեր կուսակցության և համաշխարհային կոմունիստական շարժման ղեկավարի Լենինի մի քանի հատկանիշների հետ։

Վլադիմիր Իլյիչ Լենին.— Լենինի կյանքի ուղին — դա մեր կուսակցության պատմության ուղին է։ Լենինը «հիմնեց մեր պողպատյա կուսակցությունը, կառուցեց նրան տարեցտարի, առաջնորդեց նրան այն ժամանակ, յերբ տեղում եյին ցարիզմի հարվածները, սովորեցրեց և կռեց ու կոփեց նրան այն կատաղի պայքարի մեջ, վորը մղվում եր բանվոր դասակարգի դավաճանների դեմ, կիսահեղափոխականների դեմ, յերերվողների դեմ, հակառակորդի բանակ փախչողների դեմ»։* Լենինի ղեկավարության տակ «բոլշևիկների աննկուն շարքերը կռվեցին 1905 թվին, նահանջեցին ռեակցիայի օրերին, նորից անցան հարձակման, գտնվեցին ինքնակալության դեմ մարտնչողների առաջին շարքերում, կարողացան փշրել, մերկացնել, կործանել մենշևիկների և եսերների գաղափարական տիրապետությունը»։ Նրա մարտական առաջնորդության տակ «մեր կուսակցությունը, վառոդի ծխի մեջ կոփված, յուր հզոր և իշխող ձեռքերով բարձրացրեց Հոկտեմբերի կարմիր դրոշն ամբողջ յերկրի վրա և խորտակեց թշնամիների դիմադրությունը»։ Նրա ղեկավարության տակ հիմնվեց և աշխատեց յուր առաջին տարիներին Կոմունիստական Ինտերնացիոնալը։ Լենինի ուսմունքը, վորը լրացնում և զարգացնում է Մարքսի-Ենգելսի հեղափոխական ուսմունքն ու այդպիսով նրան կիրառելի դարձնում իմպերիալիզմի եպոխայում — ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի համար ծառայում է վորպես ուղեցույց աստղ նրա այն պայքարում, վորը մղվում է հանուն կապիտալիզմի կործանման։ Շարադրել և պատմել Լենինի կյանքն ու այն պայքարը, վոր նա մղել է բանվոր դասակարգի գործի համար, նշանակում է գրել կուսակցության և համաշխարհային կոմունիստական շարժման պատմությունը։ Մենք այստեղ մատնանշենք Լենինի միայն մի քանի հատկությունները, վորոնց վրա պիտի սովորեն և սովորելու յեն պրոլետարական հեղափոխականների նորանոր սերունդները։

---

* Կուսակցության Կենտկոմի դիմումից, Լենինի մահվան առթիվ։

«Ընկ. Լենինը յուր ամբողջ կյանքը, սկսած յուր գիտակցության առաջին օրից մինչև վերջին մարտիրոսական շունչը, մինչև վերջը տվեց բանվոր դասակարգին: Չի՛ եղել և չկա մարդ, վորն այնպես խորը նվիրված լիներ յուր գործին, ինչպես ընկ. Լենինը, վորը յուր ամենափայլուն կյանքում բացի կուսակցության, պրոլետարիատի և կոմունիստական հեղափոխության շահերից վոչինչ չգիտեր»:

Նա շատ վաղ սկսեց ծանոթանալ հեղափոխական շարժման հետ և համառությամբ պատրաստվել հեղափոխական աշխատանքի համար: 17 տարեկան հասակում նա հեռացվում է Կազանի համալսարանից՝ «ուսանողական անկարգություններին մասնակցելու համար», ինչպես ասում է ցարական վոստիկանության տեղեկությունը: Այդ օրից սկսած նա չի ընդհատում յուր հեղափոխական աշխատանքը: 90-ական թվերից նա սկսում է սոցիալ-դեմոկրատական ուժերը հավաքելու յուր աշխատանքը: «Ռուս բանվորը — գրում է Լենինը 1894 թվին «Ի՞նչ է նշանակում ժողովրդի բարեկամներ» գրքույկում — կանգնելով դեմոկրատական բոլոր տարրերի գլուխը, տապալելու յե միահեծանությունը և ռուս պրոլետարիատին (բոլոր յերկրների պրոլետարների հետ կողքկողքի), բացահայտ քաղաքական պայքարի ուղիղ ճանապարհով, տանելու յե դեպի հաղթական կոմունիստական հեղափոխությունը»: Ինչպես տեսնում ենք, այս տողերում լիովին արտահայտված է պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը, պրոլետարիատի, վորը հանուն սոցիալիզմի մղվող պայքարում գլխավորում է ամբողջ աշխատավորներին և շահագործվողներին: Յեվ ահա այդ գաղափարի իրականացմանն եր նվիրված Լենինի ամբողջ կյանքը և պայքարը: Բանտը և նրան հետևող աքսորը Սիբիրում, վոչ մի րոպե չկանգնեցրին Լենինի հեղափոխական աշխատանքը: Բանտում նա գրում է ռուսական սոցիալ-դեմոկրատական ծրագրի յուր առաջին նախագիծը, նախապատրաստում է «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» յուր մեծ աշխատանքը, գրում է թերթիկներ, վորոնք գաղտնի կապի միջոցով դուրս են բերվում և բաժանվում բանվորական մասսաների մեջ: Աքսորում Լենինը վերջացնում է «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատությունը, նախապատրաստում է ուրիշ աշխատություններ և անլեգալ նամակագրության միջոցով մշտական կապ է պահում սոցիալ-դեմոկրատական շարժման հետ:

1900 թվի դեկտեմբերից Լենինի ղեկավարությամբ սկսում է
հրատարակվել համառուսական սոցիալ-դեմոկրատական թերթը —
«Իսկրան» («Կայծ»), վորի շուրջը սկսվում է կուսակցության
ուժերի հավաքումը: 1903 թվին II համագումարում դրվում է
կուսակցության գոյության ամուր հիմքը. հենց այդ համագու-
մարումն է, վոր կուսակցությունը պառակտվում է և առաջ է
գալիս բոլշևիկների կուսակցությունը: Պրոլետարական հե-
ղափոխական գծից հեռանում են սոցիալ-դեմոկրատական շարժ-
ման ամենահեղինակավոր պարագլուխները՝ Պլեխանովը, Մար-
տովը, Աքսելրոդը և ուրիշները, սակայն Լենինն անյերեր կերպով
մնում է կանգնած հեղափոխական մարքսիզմի տեսակետի վրա:
1905 թվի հեղափոխական շարժման ամենաբարձր զարգացման
մոմենտին ընկ. Լենինը գալիս է Պետերբուրգ, վորպեսզի անմի-
ջականորեն ղեկավարի հեղափոխական պայքարը: Հեղափոխու-
թյան պարտությունից հետո, հեղափոխական շարժման անկման
ամենածանր տարիներին ընկ. Լենինը, անգամ տարագրության
մեջ (եմիգրացիայում), անխոնջ կերպով շարունակում է հեղա-
փոխական պայքարը: Հազարավոր գաղտնի թելերով նա կապված
եր ցարական ռոդպոլիայում աշխատող ընկերների հետ և ղեկա-
վարում եր նրանց: Իմպերիալիստական պատերազմի տարիներին,
յերբ Արևմուտքի համարյա բոլոր սոցիալ-դեմոկրատական կուսակ-
ցությունները դավաճանում են բանվոր դասակարգին, ընկ. Լե-
նինը հայտարարում է իմպերիալիստական պատերազմը քաղա-
քացիական պատերազմի վերածելու լոզունգը և սկսում է աշխա-
տել նոր, հեղափոխական III Ինտերնացիոնալի ուժերը հավաքելու
համար:

Ռուսաստան վերադառնալով, նա յուր առաջին ճառը վեր-
ջացնում է «Կեցցե սոցիալիստական հեղափոխությունը» կոչով:
Իշխանության գլխին կանգնած բուրժուազիան և մանր-բուրժուա-
կան համաձայնողական կուսակցությունները հուլիսյան օրերից
հետո հրահանգում են բանտարկել ընկ. Լենինին: Լենինը ստիպ-
ված սկսում է ապրել և աշխատել թագստում. Նա թագստից ղե-
կավարում է կուսակցության զինված ապստամբություն պատ-
րաստելու աշխատանքը և այդպիսով առաջնորդում բանվոր դա-
սակարգին՝ բուրժուազիային զենքի ուժով տապալելու համար:
Թագստից նա ուղարկում է նամակ-հրահանգներ. «դեպքերն այն-
պիսի պարզությամբ են մեզ պատկերացնում մեր խնդիրը, վոր

դանդաղելը անպայման դառնում ե հանցագործություն»։ Թագստից նա տալիս ե Պետերբուրգում ապստամբվելու պլանը։ Նա անմիջականորեն ղեկավարում ե Հոկտեմբերյան հեղաշրջումը և այն ճակատամարտները, վոր ստիպված պետք եր մղել ժամանակավոր կառավարության զորքերի դեմ՝ հեղաշրջմանը հաջորդող հենց առաջին որերին։

Ընկ. Պոդվոյսկին, կուսակցության այն ժամանակվա զինվորական ղեկավարներից մեկը, պատմում ե.

«Լենինը յեկավ ինձ մոտ շտաբ և պահանջեց, վորպեսզի իր համար իմ կաբինետում սեղան դնեն և հայտնեց, վոր ինքն ուզում ե ամբողջ ժամանակ լինել աշխատանքի ընթացքի մեջ... Աստիճանաբար, ինքն էլ այդ չնկատելով, սկսեց անմիջական կարգադրություններ տալ մերթ սրան, մերթ նրան։ Աշխատանքը յեռում եր, սակայն Լենինին թվում եր, վոր աշխատանքը բավարար չափով արագ չի գնում... Լենինը յուրաքանչյուրի գլխում ուղղակի գամերով եր խրում այն միտքը, վոր անհրաժեշտ ե ամեն ինչ կենտրոնացնել ինքնապաշտպանության գործի վրա, ամեն ինչ անել ինքնապաշտպանության համար։ Այդ մտքից նա հետագայում ստեղծեց մի պլան, վորի մեջ, վորպես մի ամբողջ մեխանիզմի, ակամայորեն յուրաքանչյուրը տեղ եր գտնում յուր համար, յուր գործարանի համար, յուր զինվորական մասերի համար։

Հեղափոխության տարիները ընկ. Լենինի համար յեռանդի և ուժերի հսկայական ծախսման տարիներ եյին։ Նա ղեկավարում եր պետության և կուսակցության շինարարությունը, ղեկավարում եր յերկրի պաշտպանության գործի կազմակերպումը, կենտրոնացնելով ամբողջ ուժերը և միջոցները ֆրոնտներում հաղթելու համար։ «Քաղաքացիական կռվի ժամանակ — պատմում ե Լենինի մոտիկ աշխատակիցներից մեկը — Նրա կաբինետը դարձել եր բոլոր զինվորական գործողությունների «գլխավոր շտաբ»։ Նրա սեղանի վրա համարյա միշտ էլ դրված եյին պատերազմական քարտեր, վորոնց նա հասկանում եր ավելի լավ, քան վորևե ֆրոնտովիկ։ Նա յուր համար պահանջում եր ամենամանրամասն տեղեկություններ՝ զինվորական գործողությունների բոլոր մանրամասնությունների մասին, ուղարկում եր տասնյակ հեռագրներ բոլոր ֆրոնտները, հրավիրում եր (յերբեմն գիշերները) հանձնաժողովներ և խորհրդակցություններ՝ պատերազմական այս կամ այն հարցերը լուծելու համար։ Յերբեմն ամբողջ ժամերով անընդհատ նստում եր հեռախոսի մոտ, խոսելով Խարկովի կամ Պետերբուրգի հետ։ Նրա այն ժամանակվա ճառերի և հոդվածների մեծ մասը տոգորված են մի մտքով, — ինչ գնով էլ լինի կազմակերպել հաղթանակ, թույլ չտալ, վոր սպեկուլյանտները խախտեն հացի մենաշնորհը, ապահովել կարմիր բանակն այն ամեն անհրաժեշտությամբ, վորը պետք ե՝ պայքարի համար»։

«Գերմարդկային, անզուսպ աշխատանքի ծարավը, անխոնջ միտքը, յուր յեռանդի անխնա թափումը կոտրեցին Լենինին, արին այն, ինչ չկարողացան անել թշնամիները Լենինի կյանքի վրա կատարած յերկու մահափորձերով»։

«Լենինը յերբեք այնքան մեծ չեր յերևում, ինչպես վտանգի րոպեներին։ Ամրակուռ ձեռքերով նա անցկացրեց կուսակցությունն այդ վտանգների շարքի միջից, անհամեմատելի պաղարյունությամբ և արիությամբ գնալով դեպի յուր նպատակը։ Լենինի համար վոչինչ վատ, անտանելի, զզվելի չկար, քան խուճապի յենթարկվելը, շփոթվելը, գլուխը կորցնելը, տատանվելը։ Նա կարող եր, յերբ անհրաժեշտ եր, կատաղությամբ հարձակվել և հարկ յեղած դեպքում նահանջել, վորպեսզի պատրաստե նոր հարձակում»։

Ընկ. Լենինը անխնա հարվածում եր այն բոլորին, վորոնք հեղափոխական շարժման մեջ անխուսափելի անհաջողությունների ազդեցության տակ հրաժարվում եյին հեղափոխական գծից, հիասթափվում եյին հեղափոխությունից։ 1905 թվի հեղափոխության պարտությունից հետո ընկ. Լենինը դասալիքների, վախկոտների, տատանվողների առթիվ ասում ե.

«Ազատության համար տեղի ունեցող առաջին խկական մասսայական ճակատամարտից հետո թող հուսահատվեն և վախկոտությամբ պնդեն — մի՛ գնացեք այնտեղ, վորտեղ մի անգամ արդեն ջարդվել եք, նորից մի կանգնեք այդ որհասական ճանապարհի վրա։ Սակայն գիտակից պրոլետարիատը այդպիսիներին կպատասխանի հետևյալը. — Մեծ պատերազմները պատմության մեջ, մեծ խնդիրները հեղափոխության մեջ՝ լուծվել են միայն նրանով, վոր առաջավոր դասակարգերը կրկնել են իրենց գրոհը և, սովորած լինելով պատմության փորձով, միայն մեկ կամ յերկու անգամ չե, վոր հաղթանակ են ձեռք բերել»։

1917 թվին ընկ. Լենինն ասում ե այն բոլորին, վորոնք վախենում են իշխանությունը խլելու հետ կապված դժվարու-

թյուններից, վորոնք նահանջում եյին կացության բարդության առաջ. «Յեթե չլիներ արտակարգ կերպով բարդ կացություն, ապա չեր լինի և հեղափոխություն։ Գայլից վախեցողը — անտառ չի մտնի»։

Սոցիալիզմի կառուցման մեր աշխատանքը մենք ստիպված ենք տանել չտեսնված դժվարին պայմաններում։ Հաջողությունները և նվաճումները ձեռք են բերվում շատ դժվարությամբ և պահանջում են բոլոր ուժերի լարում, յերկար և քրտնաջան աշխատանք։ Լինում են և այնպիսիներ, վորոնք անհամբերությամբ են լցվում նրա համար, վոր մենք համեմատաբար դանդաղ կերպով ենք առաջ շարժվում։ Ծածկվելով ամեն տեսակի «ձախ» հեղափոխական ֆրազներով, նրանք փնթփնթում են, խուճապի յեն մատնվում, թուլանում են և ձեռքերը վայր գցում։ Այդպիսիներին Լենինն ասում եր. «Քայլ առ քայլ, վերշոկ առ վերշոկ, — այսպես՝ առաջ շարժվել այսպիսի ծանր ճանապարհով, այսպիսի ծանր կացության մեջ, յերբ այսպիսի վտանգներ կան, — այնպիսի «զորքը», վորպիսին մերն ե, այժմ չի կարող։ Ում համար «ձանձրալի» յե, «անհետաքրքրական» ե, «անհասկանալի» յե այս աշխատանքը, ով կնճռում ե քիթը կամ խուճապի յե մատնվում... նրան ավելի լավ ե «ազատել աշխատանքից» և հանձնել արխիվը, վորպեսզի նա չկարողանա վնաս բերել»։

Վոչ. պակաս ոտար եյին Լենինին և նրանք, վորոնք ունեցած հաղթանակների առթիվ տրվում եյին անչափ ցնծության և հանգստանում դափնիների վրա։ Նա միշտ ել նախազգուշացնում եր կուսակցությանը հաջողություններով տարվելուց, սնապարծությունից։ Նա պահանջում եր, վորպեսզի կոմունիստը միշտ ել հիշի առաջիկա պայքարի բոլոր դժվարությունների մասին, վորպեսզի պայքարում տարած յուրաքանչյուր հաղթանակ ծառայի վորպես խթան ուժերի և յեռանդի ավելի մեծ լարման և դառնա հետագա առաջընթացման մեկնակետ։

Վոչ վոք, ինչպես Լենինը, չեր կարող միացնել պայքարի կացության սառը, ծանրակշիռ և վողջախոհ հաշվառումը հեղափոխական խանդավառության և հերոսության հետ։ 1917 թ., յերբ բոլշևիկներին անխնա կերպով հալածում և հայհոյում եյին ամեն գույնի և տեսակի թշնամիները՝ սկսած սեհարյուրակայիններից մինչև մենշևիկները, յերբ հենց կուսակցության առանձին խմբերի մեջ տատանումներ կային՝ զենքի ուժով իշխանությունը

խլելու պայքարի հարցում, ընկ. Լենինն անսասան կամքով և հեղափոխական խանդավառությամբ պատրաստում ե կուսակցությանը զինված ապստամբության համար։ Ուրիշ կացության մեջ, յերբ դեռ չամրացված պրոլետարական պետության դեմ դուրս յեկավ մինչև ատամները զինված գերմանական իմպերիալիզմը, ընկ. Լենինն առաջադրում ե «զիջել տարածությունը, վորպեսզի ժամանակ շահել» լոզունգը։ Նա պաշտպանում ե հեղափոխության ժամանակավոր նահանջի անհրաժեշտությունը, և նրա գործելակերպն ամբողջությամբ ու լիովին արդարացավ դեպքերի զարգացման հետագա ընթացքով։

Լենինը յուրաքանչյուր կոմունիստին՝ անկուսակցականների հետ ճիշտ փոխհարաբերություններ ունենալու օրինակ տվեց։ Վոչ վոք այնպես չեր մտրակում խվոստիզմը, բանվորական մասսաների յետամնաց տրամադրություններին հարմարվելը, ինչպես Լենինը։ Բայց միևնույն ժամանակ վոչ վոք չեր կարող այնպիսի զգայնությամբ ըմբռնել մասսաների տրամադրությունը, ականջ դնել նրանց պահանջներին, կենտրոնացել յուր մեջ կոլլեկտիվ միտքը և մասսաների փորձը, ինչպես Լենինը։ Վոչ վոք այնպես խոր կերպով չեր հավատում մասսաների ստեղծագործությանը, բանվոր դասակարգի ուժերին, ինչպես Լենինը։ Սակայն և վոչ վոք չեր կարող այնպիսի պարզ կերպով ցույց տալ կուսակցության ղեկավարող դերը բանվորական շարժման մեջ, ինչպես դա անում եր Լենինը։

Լենինը միևնույն ժամանակ կուսակցության ամենակարգապահ անդամն եր։ Կուսակցության և համաշխարհային պրոլետարիատի առաջնորդը, վորին անսահմանորեն վստահում եյին, վորի խոսքը լսում եյին տասնյակ միլիոններ, միշտ ել կոլլեկտիվ աշխատանքի օրինակ եր ցույց տալիս, միշտ ել յենթարկվում եր կուսակցական բարձր օրգանների ընդունած վորոշումներին։ Առանձին հարցերի վերաբերյալ յերբեմն Լենինը մնում եր փոքրամասնության մեջ, սակայն նա միշտ ել ճշգրիտ կերպով կատարում և անց եր կացնում ընդունված վորոշումները։

Լենինը արտակարգ կերպով զգայուն ընկեր եր։ Վերին աստիճանի ծանրաբեռնված լինելով պետական և կուսակցական աշխատանքով, նա միշտ ել կարողանում եր ժամանակ գտնել՝ յուր կուսակցական ընկերների մասին հոգալու համար. բժշկական օգնություն հիվանդ ընկերոջը, աշխատանքից հոգնածին հան-

գտտանալու հնարավորություն տալը և այլն — այս բոլորը գրավում էին Լենինին, նրա հայացքից չէին վրիպում։ Ցեվ այդ բոլորը նրա մոտ միացված էր մեծագույն համեստության հետ։

Ոտարյերկրյա բուրժուական գործիչները, վորոնց վիճակվում էր տեսնել Լենինին և խոսել նրա հետ, սովորաբար զարմանք էին արտահայտում և նույնիսկ հիասթափվում էին Լենինի պարզությունից, հասարակ լինելուց։ Իրենց բուրժուական հասկացողությանը մատչելի չէր այն, վոր համաշխարհային պրոլետարիատի առաջնորդը ևս այնպես հասարակ է, ինչպես ամեն մի պրոլետար։ Նրանց բուրժուական գիտակցությանը հասկանալի չէր, վոր պրոլետարական կուսակցության առաջնորդը միայն այդպիսին կարող է լինել, վորովհետև նա ներկայացնում և արտահայտում է շահերն ու հույսերն այն դասակարգի, վորն ոգտագործում է իշխանությունը՝ վոչնչացնելու մարդու ամեն մի ճնշում մարդու վրա։

«Այն ամենը, ինչ վոր պրոլետարիատի մեջ իսկապես մեծ և հերոսական է — անվախ միտք, յերկաթյա, անխորտակելի, համառ, ամեն ինչ հաղթահարող կամք, սոսկալի ատելություն, սոսկալի ատելություն դեպի ստրկությունը և ճնշումը, հեղափոխական խանդավառություն, վորն ամբողջ լեռներ է շարժում, անսահման հավատ դեպի մասսաների ստեղծագործական ուժերը, վիթխարի կազմակերպչական հանճար, — այս բոլորը գտան իրենց փառահեղ մարմնացումը հանձինս Լենինի, վորի անունն արևմուտքից արևելք, հարավից հյուսիս դարձել է նոր աշխարհի սիմվոլը»։

Կոմյերիտմիությունը բոլշևիզմի հին գվարդիայի փորձի ընդունողն է. — Կոմունիստական հասարակության կառուցումն ավարտելու համար — բանվորների միայն մի սերնդի յերկար և լարված ջանքերի թափումը դեռ բավական չէ։ Աստիճանաբար տեղի յե ունենում սերունդների բնական փոխարինում։ Բոլշևիկյան հին գվարդիայի ջարքերը նոսրանում են։ Այդ գվարդիայի պայքարի փորձի վրա, կոմյերիտմիությունը պետք է պատրաստի կառուցողների նոր ջոկատներ։ Կոմյերիտմիությունը պետք է հիշի Լենինի այս խոսքերը. «Դուք պետք է լինեք կոմունիստական հասարակության առաջին կառուցողները միլիոնավոր կառուցողների մեջ, վորպիսին պետք է լինի ամեն մի յերիտասարդ մարդ, ամեն մի յերիտասարդ աղջիկ»։ Հեղափոխության հետագա զարգացումը, սոցիալիստական շինարարության հետագա հաջողությունները, մեծ չափով կախում ունեն բանվորա-գյուղացիական յերիտասարդության կոմունիստական դաստիարակությունից։

Մեր կոմյերիտմիությունը յուր ամբողջ աշխատանքով և պայքարով աշխատում է պրոլետարական յերիտասարդությունը դաստիարակել բոլշևիզմի հին գվարդիայի տրադիցիաների վոգով։ Այդ մասին խոսելու յենք հաջորդ զրույցում։

5—2169

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԼԿՅԵՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պրոլետարիատի հեղափոխական պայքարը և սոցիալիզմի կառուցումը կազմում են մի ամբողջ պատմական շրջան, վորը մի շարք սերունդների կյանք ե ընդգրկում։ Բանվոր դասակարգի ավանգարդը հանդիսացող կուսակցության առաջ խնդիր ե դրված՝ աճող սերունդներին դաստիարակել դասակարգային պայքարի վոգով և յերիտասարդությանը մասնակից դարձնել սոցիալիզմի կառուցման ակտիվ աշխատանքին ու այդպիսով նախապատրաստել բավարար չափով հմուտ և հուսալի փոխարինողներ։ Լենինը, հանդես գալով Կոմյերիտմիության III համագումարում, մատնանշեց, վոր սոցիալիզմի կառուցումը և ապադասակարգային հասարակության համար մղվող պայքարը պետք ե ավարտի պրոլետարիատի վոչ այն սերունդը, վորը յուր ուսերի վրա յե կրել Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական կռվի ամբողջ ծանրությունը, այլ յերիտասարդությունը։

«Կոմունիստական հասարակություն ստեղծելու խնդիրը դրվում ե յերիտասարդության առաջ, վորովհետև պարզ ե, վոր կապիտալիստական հասարակության մեջ դաստիարակված աշխատավորների սերունդը, ամենալավ դեպքում, կարող ե միայն լուծել շահագործման վրա կառուցված կապիտալիստական հին կարգերի վոչնչացման խնդիրը։ Նա ամենալավ դեպքում կկարողանա լուծել այնպիսի հասարակակարգի ստեղծման խնդիրն, վորը կարողանար ոգնել պրոլետարիատին և աշխատավոր դասակարգերին՝ իշխանությունն իրենց ձեռքերում պահելու և ստեղծելու ամուր հիմք, վորի վրա կառուցել կարող ե միայն այն սերունդը, վորը կսկսի աշխատել արդեն նոր պայմաններում, այնպիսի կացության մեջ, յերբ մարդկանց միջև չեն լինելու շահագործական հարաբերություններ» (Լենին)։

Յերիտասարդությանը կարելի յե պատրաստել սոցիալիզմի կառուցման խնդիրների համար միայն այն դեպքում, յերբ կան յերիտասարդական կազմակերպություններ։ Յերիտասարդությունն ունի մի շարք տարիքային առանձնահատկություններ, վորոնք պահանջում են առանձին մոտեցում, վորոնք մերձեցնում ու համախմբում են յերիտասարդությանը և դրա հետ միասին նրա առաջ դնում են հասակավորների շահերից տարբեր շահեր։ Այդ առանձին շահերն են՝ 1) յերիտասարդության ուսման խնդիրը և 2) յերիտասարդության աշխատանքի խնդիրը։ Յերիտասարդության առաջ դրված գլխավոր խնդիրը ուսումն ե։ Յերիտասարդության աշխատանքը պահանջում ե հատուկ պաշտպանողություն, վորովհետև յերիտասարդ սերունդը շարունակում ե դեռ ֆիզիկապես աճել և ուսում առնել։ Կապիտալիզմի պայմաններում յերիտասարդության առանձին կազմակերպություններ ունենալու պահանջն արդյունք ե նաև նրա, վոր անչափահասների և պատանիների աշխատանքի եժանության և անպաշտպանության շնորհիվ, չափահաս բանվորները յերիտասարդության վրա նայում են վորպես մրցակցի, և վերջինիս շահերը շատ թույլ արձագանք են գտնում չափահաս բանվորների կազմակերպություններում, պրոֆմիություններում։ Բացի դրանից, կապիտալիզմի յերկրներում միլիտարիզմի գլխավոր զոհը յերիտասարդությունն ե հանդիսանում, նա յե կրում ռազմականության ամբողջ ծանրությունը։ Արտասահմանում պատանեկական կազմակերպությունների նշանակալի մասը ձևակերպվել և աճել ե ռազմականության դեմ մղած պայքարի պրոցեսում, — ռազմականության, վորը յուր ծանրությամբ ստիպում ե յերիտասարդությանը բողոքի դիմել և կազմակերպվել հեղափոխական կազմակերպություններում։

Խորհրդային Միության պայմաններում ևս պատանեկական աշխատանքի և կրթական-դաստիարակչական խնդիրներն ունեն իրենց առանձնահատկությունները։ Խորհրդային յերկրում անչափահասների և յերիտասարդության աշխատանքն արդյունաբերության մեջ յենթակա յե բանվորների նոր կադրեր դաստիարակելու պատրաստման խնդիրներին։

Դրանում կոմյերիտմիությունը և խորհրդային պետությունը խիստ հետևում են Լենինի պատգամներին։ Լենինը հեղափոխությունից դեռ շատ առաջ գրում եր.

«Ապագա հասարակության իդեալը չի կարելի պատկերացնել՝ առանց միացնելու ուսումը յերիտասարդ սերնդի արտադրողական աշխատանքին։ Վո՛չ ուսումը և կրթությունը առանց արտադրողական աշխատանքի և վո՛չ էլ արտադրողական աշխատանքն առանց զուգահեռ ուսման ու կրթության — չեն կարող դրվել այն բարձրության վրա, վորը պահանջում է տեխնիկայի և գիտության ժամանակակից մակարդակը»։

Կոմյերիտմիությունը պատրաստում է սոցիալիզմի կառուցողների նոր կադրեր և յերիտասարդությանը տալիս կոմունիստական դաստիարակություն՝ հենվելով յերիտասարդության արտադրողական աշխատանքի վրա ֆաբրիկաներում, գործարաններում և գյուղատնտեսության մեջ։

Սակայն յերիտասարդությունն իրենից չի ներկայացնում մի խմբակ, վորն ունի ապադասակարգային շահեր։ Յերիտասարդությունը, ինչպես և չափահաս սերունդը, բաժանվում է դասակարգային խավերի, վորոնց մեջ մենք գտնում ենք և՛ բուրժուազիա, և՛ պրոլետարներ, և՛ միջանկյալ խմբակներ։ Բուրժուական յերիտասարդությունը չի կարող շահագրգռված լինել պատանեկական աշխատանքի պաշտպանությամբ ֆաբրիկաներում և գործարաններում, վորովհետև պատանեկական բանվորական ուժի ուժեղացրած շահագործումը միայն ավելացնում է այն հարստությունը, վորը սպառում է ձրիակերների այդ խումբը։ Բանվոր դասակարգն ևս յուր ամբողջությամբ նույն շահագործումն է կրում, ինչը և բանվորական յերիտասարդությունը։ Կապիտալիզմի պայմաններում բանվորական յերիտասարդության շահերը զուգադիպվում են բանվոր դասակարգի շահերի հետ և հակադրվում են ամբողջ բուրժուազիայի շահերին, ներառյալ նաև բուրժուական յերիտասարդ սերնդի շահերը։ Պրոլետարական ընդհանուր պայքարից դուրս, բանվորական յերիտասարդությունը յուր շահերին բավարարություն տալ չի կարող։ Բանվորական յերիտասարդությունը, յեթե հանդես գա ամբողջ հեղափոխական շարժումից անջատ, վորպես բանվոր դասակարգի համեմատաբար չնչին մի մասն, վորն անընդունակ է փոխելու հասարակական հարաբերությունները, նա այդպիսով միայն բաժանելու և թուլացնելու յե պրոլետարական հեղափոխության ուժերը։ Յերիտասարդությանը շահագործելուն վերջ տալ հնարավոր չե, առանց վերացնելու այն ընդհանուր պայմանները, վորոնց մեջ շահագործվում են չափահաս բանվորները. չի կարելի վոչնչացնել շահագործումը, չխորտակելով կապիտալիստների դասակարգը։ Այսպիսով, կապիտալիստական ճնշումից ազատագրվելու համար յերիտասարդության մղած պայքարի ընթացքն ինքը միացնում է յերիտասարդության շարքերն ամբողջ պրոլետարիատի շարքերին, նրան դարձնում է մի մասը համապրոլետարական ֆրոնտի, վոր հակադրված է կապիտալիստների ֆրոնտին։

Բանվորական յերիտասարդության առանձին շահերը չեն հակասում ամբողջ բանվոր դասակարգի շահերին, վորովհետև նրանք ևս պայմանավորված և վորոշված են կապիտալիզմի շահագործական սիստեմով, կապիտալիստական իրավակարգին հատուկ դասակարգային ճնշումով։

Խորհրդային Միության պայմաններում ամբողջ պրոլետարիատի և բանվորական յերիտասարդության շահերի միատեսակությունն առանձին պարզությամբ հանդես է գալիս բանվորական պետության քաղաքականության մեջ, մի պետության, վորը կրճատում է անչափահասների բանվորական որը, արգելում է անչափահասների ոգտագործումը մի շարք վնասակար արտադրությունների մեջ, նպատակ է դնում իրականացնել յերիտասարդության ընդհանուր պարտադիր ուսում, ապահովում է արտադրության մեջ անչափահասների վորոշ տոկոս ընդունելը և այլն։ Բանվոր դասակարգը, ամբողջովին վերցրած, շահագրգռված է, վորպեսզի ապահովված լինի սովորած նոր ուժերի հոսանքը թե արդյունաբերության և թե սոցիալիստական շինարարության բոլոր ճյուղերի մեջ։ Իսկ դրա համար անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել յերիտասարդության վրա, վորովհետև այդպիսի նոր ուժերի միակ աղբյուրը և պահեստը նա յե հանդիսանում։

Համամիութենական Լենինյան Կոմունիստական Յերիտասարդության Միությունը հանդիսանում է բանվորագյուղացիական յերիտասարդության կոմունիստական դաստիարակության խնդիրները հետապնդող յերիտասարդական մասսայական կազմակերպություն։ Այդ պատճառով էլ նա վայելում է ամբողջ պրոլետարիատի ու նրա կուսակցության ոժանդակությունը և ոգնությունը։

«Ապագա հասարակության իդեալը չի կարելի պատկերացնել՝ առանց միացնելու ուսումը յերիտասարդ սերնդի արտադրողական աշխատանքին։ Վո՛չ ուսումը և կրթությունը առանց արտադրողական աշխատանքի և վո՛չ էլ արտադրողական աշխատանքն առանց զուգահեռ ուսման ու կրթության — չեն կարող դրվել այն բարձրության վրա, վորը պահանջում է տեխնիկայի և գիտության ժամանակակից մակարդակը»։

Կոմյերիտմիությունը պատրաստում է սոցիալիզմի կառուցողների նոր կադրեր և յերիտասարդությանը տալիս կոմունիստական դաստիարակություն՝ հենվելով յերիտասարդության արտադրողական աշխատանքի վրա ֆաբրիկաներում, գործարաններում և գյուղատնտեսության մեջ։

Սակայն յերիտասարդությունն իրենից չի ներկայացնում մի խմբակ, վորն ունի արտադասակարգային շահեր։ Յերիտասարդությունը, ինչպես և չափահաս սերունդը, բաժանվում է դասակարգային խավերի, վորոնց մեջ մենք գտնում ենք և՛ բուրժուազիա, և՛ պրոլետարներ, և՛ միջանկյալ խմբակներ։ Բուրժուական յերիտասարդությունը չի կարող շահագրգռված լինել պատանեկական աշխատանքի պաշտպանությամբ ֆաբրիկաներում և գործարաններում, վորովհետև պատանեկական բանվորական ուժի ուժեղացրած շահագործումը միայն ավելացնում է այն հարստությունը, վորը սպառում է ձրիակերների այդ խումբը։ Բանվոր դասակարգն ևս յուր ամբողջությամբ նույն շահագործումն է կրում, ինչը և բանվորական յերիտասարդությունը։ Կապիտալիզմի պայմաններում բանվորական յերիտասարդության շահերը զուգադիպվում են բանվոր դասակարգի շահերի հետ և հակադրվում են ամբողջ բուրժուազիայի շահերին, ներառյալ նաև բուրժուական յերիտասարդ սերնդի շահերը։ Պրոլետարական ընդհանուր պայքարից դուրս, բանվորական յերիտասարդությունը յուր շահերին բավարարություն տալ չի կարող։ Բանվորական յերիտասարդությունը, յեթե հանդես գա ամբողջ հեղափոխական շարժումից անջատ, վորպես բանվոր դասակարգի համեմատաբար չնչին մի մասն, վորն անընդունակ է փոխելու հասարակական հարաբերությունները, նա այդպիսով միայն բաժանելու և թուլացնելու յե պրոլետարական հեղափոխության ուժերը։ Յերիտասարդությանը շահագործելուն վերջ տալ հնարավոր չէ, առանց վերացնելու այն ընդհանուր պայմանները, վորոնց մեջ շահագործվում են չափահաս բանվորները. չի կարելի վոչնչացնել շահագործումը, չխորտակելով կապիտալիստների դասակարգը։ Այսպիսով, կապիտալիստական ճնշումից ազատագրվելու համար յերիտասարդության մղած պայքարի ընթացքն ինքը միացնում է յերիտասարդության շարքերն ամբողջ պրոլետարիատի շարքերին, նրան դարձնում է մի մասը համապրոլետարական ֆրոնտի, վոր հակադրված է կապիտալիստների ֆրոնտին։

Բանվորական յերիտասարդության առանձին շահերը չեն հակասում ամբողջ բանվոր դասակարգի շահերին, վորովհետև նրանք ևս պայմանավորված և վորոշված են կապիտալիզմի շահագործական սիստեմով, կապիտալիստական իրավակարգին հատուկ դասակարգային ճնշումով։

Խորհրդային Միության պայմաններում ամբողջ պրոլետարիատի և բանվորական յերիտասարդության շահերի միասնակությունն առանձին պարզությամբ հանդես է գալիս բանվորական պետության քաղաքականության մեջ, մի պետության, վորը կրճատում է անչափահասների բանվորական որը, արգելում է անչափահասների ոգտագործումը մի շարք վնասակար արտադրություններում, նպատակ է դնում իրականացնել յերիտասարդության ընդհանուր պարտադիր ուսում, ապահովում է արտադրության մեջ անչափահասների վորոշ տոկոս ընդունելը և այլն։ Բանվոր դասակարգը, ամբողջովին վերցրած, շահագրգռված է, վորպեսզի ապահոված լինի սովորած նոր ուժերի հոսանքը թե արդյունաբերության և թե սոցիալիստական շինարարության բոլոր ճյուղերի մեջ։ Իսկ դրա համար անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել յերիտասարդության վրա, վորովհետև այդպիսի նոր ուժերի միակ աղբյուրը և պահեստը նա յե հանդիսանում։

Համամիութենական Լենինյան Կոմունիստական Յերիտասարդության Միությունը հանդիսանում է բանվորագյուղացիական յերիտասարդության կոմունիստական դաստիարակության խնդիրները հետապնդող յերիտասարդական մասսայական կազմակերպություն։ Այդ պատճառով էլ նա վայելում է ամբողջ պրոլետարիատի ու նրա կուսակցության ոժանդակությունը և ոգնությունը։

Կոմյերիտմիությունը կուսակցության փոխարինողներ է պատրաստում. — *Կոմյերիտմիությունը փոխարինողներ է պատրաստում կուսակցության և սոցիալիստական շինարարության բոլոր մասնակիցների համար։*

Հեղափոխությունից հետո կոմյերիտմիությունը, մոտավոր հաշվով, յուր անդամներից կուսակցությանը հանձնել է ավելի քան 300 հազար յերիտասարդ ուժեր։ Վերջին տարիներին կուսակցության մեջ ընդունվածների 37%-ը կ ո մ յ ե ր ի տ ն ե ր են։ Այսպիսով կուսակցությունը նոր ուժեր է քաղում գլխավորապես կոմյերիտմիությունից։ Վերջին յերկու տարվա ընթացքում նկատվում է, վոր խորհուրդներում աշխատող կոմյերիտների թիվն աճում է։ Քաղխորհուրդներում կ ո մ յ ե ր ի տ ն ե ր ի թ ի վ ը հասնում է 6.000-ի, իսկ գյուղխորհուրդներում — 69 հազարի։ Բանվոր դասակարգի հզոր կազմակերպության (ինչպիսին են պրոֆմիությունները մեր յերկրում) լրացման գծով նմանապես տեղի յե ունենում յերիտասարդ կադրերի աճումը. պ ր ո ֆ մ ի ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ո ւ մ յերիտասարդ բանվոր ակտիվիստների թիվը հասնում է 128 հ ա զ ա ր ի։

Սոցիալիստական շինարարության կարևորագույն բնագավառներից մեկն էլ հանդիսանում է կ ո ո պ ե ր ա ց ի ա ն։ Կոոպերացիայում ևս մենք ունենք կոմյերիտների նշանակալի կադրեր, վորոնք գործոն մասնակցություն են ցույց տալիս նրա աշխատանքներին. այդ մասին վկայում են հետևյալ թվերը.

Կոոպերացման է յենթարկված —

Ս պ ա ռ ո ղ ա կ ա ն   կ ո ո պ ե ր ա տ ի վ ն ե ր ո ւ մ

	ք ա ղ ա ք ո ւ մ	*գ յ ո ւ ղ ո ւ մ*
Յերիտասարդություն	*490.000*	*344.900*
Վորից կոմյերիտ	*195.000*	*160.000*

Գ յ ո ւ ղ ա տ ն տ ե ս ա կ ա ն բ ո լ ո ր տ ե ս ա կ ի կ ո ո պ ե ր ա տ ի վ ն ե ր ո ւ մ 70.000 ինքնուրույն կոմյերիտ-տնտեսատերեր։

Կ ո լ լ ե կ տ ի վ ա ն տ ե ս ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ո ւ մ 163.000 յ ե ր ի տ ա ս ա ր դ, վորից 20.728 կոմյերիտ։

Սպառողական կոոպերատիվի կոոպերատիվային ակտիվում կան 80.000 կոմյերիտներ։

Այս թվերը արդեն միանգամից պատասխանում են այն հարցին, թե ի ն չ պ ե ս ե ն պ ա տ ր ա ս տ վ ո ւ մ ս ո ց ի ա լ ի ս-

տ ա կ ա ն հ ա ս ա ր ա կ ո ւ թ յ ո ւ ն կ ա ռ ո ւ ց ո ղ ն ե ր ի ն փ ո խ ա-
ր ի ն ո ղ ն ե ր ը։ Գլխավոր խնդիրն այն է, վորպեսզի կոմունիզմի
կառուցման համար առաջ քաշվեն հազարավոր և հարյուր հազա-
րավոր այնպիսի նոր ակտիվ մարտիկներ, վորոնք իրենց որի-
նակով ցույց տան, թե ինչպես կարելի յե կյանքը բարելավել,
թե մեր հասարակությունը կոմունիստական ձևով վերակառու-
ցելու ճանապարհով ինչպես պետք է առաջ ընթանալ։ «Յերիտա-
սարդ աճող սերունդը կարող է սովորել կոմունիզմը միայն այն
դեպքում, յեթե նա յուր ուսման, դաստիարակության և կրթու-
թյան յուրաքանչյուր քայլը կապի պրոլետարիատի և աշխա-
տավորների անընդհատ պայքարի հետ՝ ընդդեմ հին շահագործող
հասարակության» (Լենին)։ Քաղաքական իշխանությունը պրո-
լետարիատի կողմից խլելուց հետո դասակարգային պայքարն
ընթանում է ուրիշ ձևերով — սոցիալիստական արդյունաբերու-
թյան և կոոպերացիայի պայքարը ընդդեմ մասնավոր կա-
պիտալի, կուլակի դեմ մղած պայքարը՝ գյուղացիության վրա
ազդեցություն ունենալու համար, բյուրոկրատիզմի դեմ մղած
պայքարը՝ աշխատավորական ամենալայն մասսաներին ղե-
կավարության և հսկողության գործի մեջ գրավելու համար,
տնտեսության կապիտալիստական ելեմենտները տնտեսա-
կան մրցման մեթոդներով սահմանափակելու և դուրս մղելու

համար։

Կոմյերիտմիությունը կարող է դաստիարակել յերիտասարդ
սերունդը — վորն անհրաժեշտ է բանվոր դասակարգի հին սերնդին
փոխարինելու համար — միայն այն դեպքում, յեթե յերիտասար-
դության մասսաները ս ո ց ի ա լ ի ս տ ա կ ա ն շ ի ն ա ր ա ր ո ւ-
թ յ ա ն մեջ առնվեն։

«Յերիտասարդության միության անդամ լինել նշանակում
է իր աշխատանքը, իր ուժերը ընդհանուր գործին նվիրել։ Ահա
թե ինչ է կոմունիստական դաստիարակությունը։
Միայն այդպիսի աշխատանքով յերիտասարդ տղան կամ աղջիկը
դառնում է կայանում կոմունիստական
իսկական կոմունիստ կդառնան։ Կոմունիստներ կդառնան միայն
այն դեպքում, յեթե նրանք այդ աշխատանքով կարող կլինեն
գործնական հաջողություններ ձեռք բերել։ Կոմունիստական յե-
րիտասարդության միությունը պետք է այնպիսի մի հարվածային
խումբ լինի, վորն ամեն մի աշխատանքում իր ոգնությունը
հասցնի, յերևան բերի իր նախաձեռնությունը։ Միությունը պետք

է լինի այնպիսին, վոր ամեն մի բանվոր տեսնի, վոր նրա մեջ մտել են մարդիկ, վորոնց ուսմունքը իրականալի յե, իրեն հասկանալի, վորոնց ուսմունքին նա, գուցե միանգամից չհավատա, բայց վորոնց կենդանի աշխատանքից, գործնեյությունից տեսնի, վոր դրանք իսկապես այն մարդիկն են, վորոնք նրան ճիշտ ուղին յեն ցույց տալիս» (Լենին)։

Ճիշտ և հաջող աշխատանք սոցիալիստական շինարարության ասպարեզում հնարավոր է միայն այն կուսակցության ղեկավարությամբ, վորը պրոլետարական դիկտատուրայի առաջնորդող ուժի դեր է խաղում։ Կոմյերիտմիությունը, աշխատելով սոցիալիստական շինարարության բոլոր ճյուղերում, հանդիսանում է կոմունիստական կուսակցության ոգնականը։ Պատրաստելով հաստատակամ, հեղափոխությանը նվիրված աշխատողներ, կոմյերիտմիությունը հենց դրանով արդեն հանդիսանում է կուսակցության պահեստը (ռեզերվը), վորովհետև կուսակցությունը կարիք ունի այնպիսի լրացումների, վորոնք բաղկացած լինեն հաստատակամ, տոկուն և նվիրված հեղափոխականներից։ Մինչև 21 տարեկան հասակ ունեցող յերիտասարդները ընդունվում են կուսակցության մեջ բացառապես կոմյերիտմիության միջոցով, վորը տանում է նախապատրաստական և դաստիարակչական աշխատանք։

Կոմյերիտմիությունը պրոլետարական կազմակերպություն է. — Սակայն կոմյերիտմիությունն ընդգրկում է վոչ միայն բանվորական յերիտասարդությանը, վորը կազմում է պրոլետարիատի մի մասը։ Մանր ապրանքարտադրողների մասսաների վերադաստիարակման, վերափոխման գործում առանձնապես նշանակալի դեր է խաղում յերիտասարդության դաստիարակությունը։

Մեր յերկրում պրոլետարիատի և գյուղացիության միջև գոյություն ունի այնպիսի միություն, ուր ղեկավարությունը պատկանում է պրոլետարիատին։ Նույն դրությունն է տիրում նաև կոմյերիտմիության մեջ։ Կոմյերիտմիությունն ընդգրկում է գյուղացիական յերիտասարդության լայն մասսաները, պայքարում է՝ նրանց վրա ազդեցություն ունենալու համար, պայքարում է՝ կուլակ յերիտասարդությանը գյուղում ամբողջապես մեկուսացնելու համար. նա աշխատում է միջակ

յերիտասարդությանը, յուր ղեկավարության տակ առնելով, քաշել հասարակական աշխատանքի, իսկ այդ յերիտասարդության ամենալավ և ստուգված մասն ընդունել միության մեջ, ամուր կերպով հենվելով միայն աղքատ գյուղացիության վրա։ Միության մեջ գտնվող գյուղացիական յերիտասարդությունը կազմում է նրա անդամների ընդհանուր թվի մոտ կեսը։ Մյուս կեսը կազմում են բանվորները, պրոլետարները։ Ծառայողները և սովորողները շատ քիչ տոկոս են կազմում։ Հիմնական սոցիալական խմբերը կոմյերիտմիության մեջ բանվորները և գյուղացիներն են։ Սակայն կոմյերիտմիությունը բանվորա-գյուղացիական այդ կազմով հանդերձ հանդիսանում է պրոլետարական շարժման մի մասը։ Կոմյերիտմիությունը յուր առաջ դնում է դասակարգային վորոշ նպատակներ՝ մասնակցել ապադասակարգային հասարակության կառուցմանը, մասնակցել գյուղացիական տնտեսության զարգացումը սոցիալիստական ճանապարհով տանելու պայքարին, մասնակցել ԽՍՀՄ ներսում գտնվող կապիտալիստական տարրերը հաղթահարելուն, մասնակցել միջազգային սոցիալիստական հեղափոխությունը ծավալելուն։ Յեվ հենց այդ նպատակի համար էլ նա պատրաստում է մարտիկների և կառուցողների կադրեր։ Դրանք նպատակներ են, վոր առաջադրել է պրոլետարիատը, և վորոնց կարող է հասնել միայն այդ դասակարգը՝ կապիտալիստական զարգացման պայմաններում։ Կոմյերիտմիությունը, պայքարելով հանուն այդ նպատակների, հենց դրանով էլ պաշտպանում է պրոլետարական իդեոլոգիան։ Յուր կազմով հանդիսանալով բանվորագյուղացիական, նա յուր նպատակներով և խնդիրներով, յուր դասակարգային էյությամբ մնում է պրոլետարական, վորովհետև նրանում, նրա ղեկավարության մեջ պրոլետարական գծի անցկացումը ապահովված է։

Պրոլետարական ուժեղ գծի անցկացումը Միության քաղաքականության և աշխատանքի մեջ, կախում ունի նրանից, թե վորքան ամրակուռ, ուժեղ և պատրաստված է հանդիսանում նրա պրոլետարական մասը։ Պարտադիր չէ, վորպեսզի բանվորական յերիտասարդությունը ունենա թվական ճնշող գերակշռություն։ Սակայն վերին աստիճանի անհրաժեշտ է, վորպեսզի Միության

մեջ գտնվող բանվորական յերիտասարդությունը բավական չափով կազմակերպված լինի և այդպիսով հնարավորություն ունենա ղեկավարել միութենական աշխատանքները։

Միությունն առաջադրել է՝ բանվորական յերիտասարդությանը հարյուր տոկոսով կազմակերպության մեջ առնելու լոզունգը։ Կոմյերիտմիությունը, ինարկե, ձգտում է յուր ազդեցությամբ լիովին ընդգրկել ամբողջ պրոլետարական յերիտասարդությունը, վորպեսզի ամբողջ բանվորական յերիտասարդությունը, ստանալով հասարակական սիստեմատիկ կրթություն, ակտիվ մասնակցելով սոցիալիստական շինարարությանը, պատրաստվի հին սերնդին փոխարինելու համար։ Չի կարելի պատկերացնել այնպիսի դրություն, վոր յերիտասարդության դաստիարակչական կազմակերպությունը կամավոր կերպով հրաժարվեր՝ ամբողջապես ընդգրկելու յերիտասարդության այն տարրերը, վորոնք արդեն իրենց դասակարգային դրության հետևանքով մասնակից են դառնում սոցիալիզմի համար մղվող պայքարին։ Բանվորական յերիտասարդությանը հարյուր տոկոսով ընդգրկելու լոզունգը տակավին իրականացված չէ։ Կոմյերիտմիությունը մինչև 1927 թ. հունվարի 1-ը կարողացել է ընդգրկել խոշոր արդյունաբերության մեջ աշխատող յերիտասարդության միայն 44,2%-ը։ Համեմատած 1926 թ. հունվարի 1-ին ունեցած տոկոսի հետ՝ դա ավելի պակաս տոկոս է կազմում. այն ժամանակ ընդգրկված եր 45,7%-ը։ Իջեցումը հետևանք է այն բանի, վոր արդյունաբերության անընդհատ աճման շնորհիվ, յերիտասարդության խոշոր քանակ է թափվում նրա մեջ, այն էլ գլխավորապես գյուղից։ Բանվորական յերիտասարդությանը կոմյերիտմիության մեջ գրավելու հարցը շատ սուր է դրված։ Սակայն բանվորական այն յերիտասարդությունը, վորն արդեն ներգրավված է, կարող է և պետք է ղեկավարի միությանը վոչ միայն քաղաքում, այլ և գյուղում կոմյերիտմիութենական կազմակերպությունների աշխատանքը ուղղելով հեղափոխական հունով, դասակարգային պայքարի հունով։

Պրոլետարական ղեկավարության դերը գյուղում առանձնապես մեծ է դառնում դասակարգային պայքարի սրման միջոցին։ Կուլակությունն ակտիվ պայքար է մղում՝

գյուղի յերիտասարդությանը յուր կողմը գրավելու համար։ Օրինակի համար, աղանդավորական յերիտասարդության բուսնող կազմակերպությունները հանդիսանում են կուլտուրական փորձերից մեկը՝ պատանեկական շարժումն իրենց ձեռքն առնելու համար։ Գյուղական յերիտասարդության այն լայն մասսաները, վոր վերջին տարիներս լցվել են կոմյերիտմիության շարքերը, պետք է վերադաստիարակել։ Գյուղացիական միլիոնավոր տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման և գյուղական կոմյերիտների կոմունիստական դաստիարակության խնդիրները շատ մեծ ու բարդ են, և այդ պատճառով էլ՝ միայն գյուղական բջիջներն անզոր են իրենց ուժերով լուծել այդ հարցերը։ Օգնության պետք է հասնեն կոմյերիտմիության պրոլետարական կազմակերպությունները։

Պրոլետարական ղեկավարության ամրացման գործում — առանձին նշանակություն է ստանում կուլտշեֆությունը գյուղի վրա։ Աշխատանքի այդ ձևը հնարավորություն է տալիս իրականացնել խոշոր պրոլետարական կոլեկտիվների դաշինքը չքավոր և միջակ գյուղացիության հետ։ Այդ կոլեկտիվները գյուղ են տանում իրենց փորձը, կազմակերպության ունակությունները, հասկացողությունն ու նախաձեռնությունը, կոլեկտիվ աշխատանքի գաղափարը։ Սակայն պրոլետարական ղեկավարությունը չպետք է բղխի միայն քաղաքի կազմակերպություններից։ Գյուղում կա՛ն պրոլետարական (բատրակները, գյուղատնտ. բանվորները) և կիսապրոլետարական չքավորները, տարրեր, վորոնք կարող են ծառայել վորպես պրոլետարական ղեկավարության հաղորդիչներ։ Ինչպես ֆաբրիկ-գործարանային բանվորական յերիտասարդության, այնպես և կոմյերիտմիության կազմակերպությունների առաջ խնդիր է դրված՝ հարյուր տոկոսով միության մեջ առնել բատրակներին և գյուղտնտբանվորներին, լայն կերպով ընդգրկելով չքավորությունը։ Հենց այդ ներգրավման հաշվին էլ պետք է ուժեղանա պրոլետարական կորիզը հենց գյուղական կազմակերպությունների մեջ։ Դրա հետ միասին, կոմյերիտմիության կազմակերպությունների առաջ խնդիր է դրված՝ ուշադիր կերպով ընտրել միջակների միջից լավագույններին, վորոնց ներգրավումը պետք է տեղի ունենա և հետագայում։ Կոմյերիտմիության ութերորդ համագումարը սահմանել է «լավագույն միջակ» հասկացողության ճշգրիտ վորոշումը։

«Լավագույն միջակ» խոսքի տակ միությունը հասկացել է և հասկանում է միջակ յերիտասարդության այն մասը, վորի տնտեսությունը չքավորի տնտեսության հանդեպ թեև առավելություն ունի, բայց և այնպես, ըստ յուր տիպի — սակավազոր է. միջակ յերիտասարդության այն մասը, վորը յուր հասարակական աշխատանքով ապացուցել է կուսակցության և միության շահերին նվիրված լինելը, վորն ակտիվորեն ոգնում է կոլլեկտիվացման գործին, աշխատում է բատրակների և չքավորների մեջ, պայքար է մղում կուլակի դեմ և հասկանում է, վոր կուսակցության հենարանը գյուղում, իրեն գյուղացիության ներսում ղեկավարող կորիզը — չքավորները և բատրակներն են»։

Պրոլետարական ղեկավարությունը բնականաբար պահանջում է, վոր բանվոր-կոմյերիտները միության ղեկավարող որգանների կազմի մեջ գերակշռող լինեն։ Կոմյերիտների մասսաների մեջ կազմակերպչական և դաստիարակչական աշխատանք տանող կոմյերիտական ակտիվի հիմքը պետք է լինեն յերիտասարդ բանվորները և բատրակները։

Վոչ պրոլետարական էլեմենտներն ամեն կերպ աշխատում են մտնել միութենական կազմակերպությունների մեջ։ Կոմյերիտմիության պրոլետարական կորիզի պարզ և վորոշ կուրսը պահանջում է, վորպեսզի այդ էլեմենտների մուտքը կազմակերպության մեջ արգելվի։ Սակայն միևնույն ժամանակ կոմյերիտմիությունը չի կարող հրաժարվել յուր ազդեցության տակն առնելու սովորող և ծառայող յերիտասարդներին, վորոնցից շատերը բանվորական և գյուղացիական ծագում ունեն, վորոնցից շատերն անկեղծորեն կողմնակից են սոցիալիստական շինարարությանը։ Այստեղ, չձգտելով յերիտասարդությանը լայն չափով ընդգրկելու, կոմյերիտմիությունն ձգտում է. վորպեսզի գոյություն ունեցող բջիջներն աշխատեն վորքան հնարավոր է յեռանդով և ունենան պարզ ու վորոշ գիծ, վորպեսզի նրանք անկուսակցական յերիտասարդության հետ ունենան ամենասերտ կապ և ղեկավարեն նրան։ Ծառայող, ինչպես նաև սովորող յերիտասարդների նկատմամբ, միության մեջ մտնելու առանձին պայմաններ են դրված։ Նրանցից, ով ուզում է մտնել միության մեջ, պետք է ներկայացնի յերաշխավորություններ, վորոշ ժամանակ լինի թեկնածու և այլն։ Այս բոլորն արվում է նրա համար, վորպեսզի կազմակերպությունը հնարա-

վորություն ունենա ստուգել միության մեջ մտնող ընկերոջ անկեղծությունը և ոգտակարությունը։

Կոմյերիտմիության առաջ դրված է նաև՝ անկուսակցական բանվորական յերիտասարդությանը ղեկավարելու խնդիրը։ Միությունը պրոֆմիությունների և խորհրդային մարմինների հետ միասին խոշոր աշխատանք է տանում, վորպեսզի բավարարի յերիտասարդության պահանջները՝ ուսուցման (ֆաբզավուչներ, ընդհանուր կրթական դասընթացքներ, տեխնիկումներ, ակումբային աշխատանք և այլն) և աշխատանքի պաշտպանության բնագավառներում։ Դրա հետ միաժամանակ, միությունը կազմակերպում է բանվորական յերիտասարդությանը, վորպեսզի նա ինքը կարողանա ակտիվ և ինքնուրույն կերպով ոգնել սոցիալիստական շինարարության գործին («բանվորա-գյուղացիական տեսչության կամավորներ», արտադրական հանձնաժողովներ և այլն)։

Կոմյերիտմիության դաստիարակչական աշխատանքը տարածվում է վոչ միայն անչափահասների և պատանիների մասսաների վրա, այլև ընդգրկում է աշխատավորների միլիոնավոր յերեխաներին։ Պատերազմը և հեղափոխությունը բանվորների և գյուղացիների յերեխաներին քաշեցին հասարակական կյանքի մեջ։ Հասարակական կյանքի և բանվորական կենցաղի հարցերը շատ վաղ են բարձրանում պրոլետարական յերեխայի առաջ։ Յելնելով պրոլետարական յերեխաների պահանջներից, կոմյերիտմիությունը կազմակերպել և ծավալել է յերեխաների կոմունիստական լայն շարժում, ստեղծելով լենինյան-պիոներների կազմակերպություն։

Պիոներական կազմակերպությունը յուր առաջ խնդիր է դնում աշխատավորության յերեխաների լայն մասսաներին և առաջին հերթին բանվորների յերեխաներին տալ պրոլետարական դաստիարակություն։ Կոմյերիտմիության նման, պիոներների դաստիարակչական աշխատանքը ևս կառուցված է այնպես, վորպեսզի յուրաքանչյուր պիոներ յուր ուժերը ներածին չափ գործնականորեն ոգնի կուսակցությանը և կոմյերիտմիությանը։

Պիոներական կոլլեկտիվների աշխատանքները գլխավորապես տարվում են պիոներների ինքնագործնեության և ինքնավարության սկզբունքով։ Կոլլեկտիվների ղեկավարները, վոր յուր միջից նշանակում է կոմյերիտմիությունը, միայն ուղղություն են տալիս

այդ ինքնագործնեյությանը, ոգնելով պիոներներին, վոր իրենք լուծեն իրենց առաջ դրված խնդիրները։

Պիոներական կազմակերպությունը նոր փոխարինողներ է պատրաստում կոմյերիտմիության համար։ Արդեն ահագին քանակությամբ լավ պիոներներ անցել են կոմյերիտմիության մեջ և ակտիվ կերպով աշխատում են նրա շարքերում։

Այսպիսով, կոմյերիտմիությունը հանդիսանալով դաստիարակչական կազմակերպություն, կոմունիստական իդեոլոգիայի վոգով, դաստիարակում է յերիտասարդությանը ինչպես անմիջականորեն յուր կազմակերպությունների շրջանակներում, այնպես ել նրանցից դուրս։

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցությունը ղեկավարում է կոմյերիտմիությանը.— *Կոմյերիտմիությունը յուր առաջ չի դնում այնպիսի նպատակներ և խնդիրներ, վորոնք հակասեյին ամբողջ պրոլետարիատի շահերին։ Կոմյերիտմիությունն իրականացնում է ամբողջ պրոլետարիատի դասակարգային քաղաքականությունը այն չափով, ինչ չափով այդ հնարավոր է կատարել յերիտասարդության մեջ աշխատելու առանձնահատուկ պայմաններում։ Հետևապես, կոմյերիտմիությունը պետք է յենթարկվի կոմունիստական կուսակցության ղեկավարության, վորովհետև պրոլետարական կազմակերպությունների ամբողջ սիստեմի մեջ հիմնական ղեկավարող կենտրոնը հանդիսանում է կուսակցությունը։ Այդ կազմակերպությունների թվին են պատկանում և՛ պրոֆմիությունները, և՛ խորհուրդները, և՛ կոոպերացիան, և՛ կինբաժինների ժողովները, և այլն։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությունն իրականացվում է այն կոմունիստների միջոցով, վորոնք աշխատում են կոմյերիտմիության մեջ և գտնվում են կոմյերիտմիության շարքերում։

Ի՞նչ է նշանակում այդ։

Կուսակցական մարմինները, վոր կյանք են անցկացնում այս կամ այն վորոշումը, չեն հրամայում կոմյերիտական մասսային։ Հենց կոմյերիտական կազմակերպությունների մեջ կան այնպիսի կոմյերիտներ, վորոնք միաժամանակ կուսակցության

կազմի մեջ են։ Այդ կոմյերիտ-կուսակցականները կազմում են այսպես կոչված կուսակցական կորիզը։ Կուսակցական կորիզը, յուր մեջն առնելով այն կոմյերիտներին, վոր կոմյերիտմիությունն արդեն տվել է կուսակցությանը, միացնում է միության ավելի կայուն, ակտիվ, պատրաստված և խոշոր ազդեցությամբ ոգտվող աշխատողներին։ Կուսակցության վորոշումները պարտադիր են կուսակցականների համար, վորոնք և համոզելու, միությենական կազմակերպության մեջ հարցն ազատորեն քննելու միջոցով, կուսակցության վորոշումներն անց են կացնում կյանքում։ Այսպիսով կուսակցության ազդեցության գլխավոր հաղորդիչը միության շարքերում հանդիսանում է կուսակցական կորիզը։ Բայց կուսակցական կորիզը չպետք է ճնշի միության ինքնագործնեյությունը և զբաղվի մանր խնամակալությամբ։ Նա պետք է քաղաքական ղեկավարություն ցույց տա կոմյերիտմիությանը։

«Հաճախ է պատահում, վոր հին սերնդի ներկայացուցիչները չգիտեն ինչպես հարկն է մոտենալ յերիտասարդությանը, վորն անհրաժեշտորեն ստիպված է մոտենալ սոցիալիզմին այլ կերպ, վոչ այն ճանապարհով, վոչ այն ձևով, վոչ այն կացության մեջ, ինչպես յուր հայրերը։ Այդ պատճառով ել ի միջի այլոց մենք անպայմանորեն պետք է պաշտպանենք յերիտասարդության միության կազմակերպչական ինքնուրույնությունը և վոչ միայն այն պատճառով, վոր այդ ինքնուրույնությունից վախենում են ոպորտունիստները, այլ և ըստ եյության։ Վորովհետև առանց լիակատար ինքնուրույնության յերիտասարդությունը վոչ կարողանալու յե իրենից լավ սոցիալիստներ մշակել և վոչ ել պատրաստվել սոցիալիզմն առաջ տանելու համար» (Լենին)։

Կարող է հարց առաջ գալ, արդյո՞ք հակասություն չկա նրանում, վոր մի կողմից՝ ղեկավարողը պետք է լինի բանվորական կորիզը, իսկ մյուս կողմից՝ կուսակցության ազդեցության տարածողը հանդիսանում է կուսակցական կորիզը։ Այստեղ հակասությունը միայն թվացող է։ Բանվորական կորիզի ամենալավ մասը մտնում է կուսակցական կորիզի մեջ։ Գլխավոր դեր խաղացող տեղերը միության մեջ բռնում են բանվոր-կուսակցականները։ ՀամԼԿՅԵՄ կենտկոմի 120 անդամից և թեկնածուներից 89-ը բանվորներ են (նրանցից 12-ը դազգահի բանվորներ) և 6-ը բատ-

բակներ, — դրանք բոլորն էլ կուսակցականներ են։ Հակադրել պրոլետարական ղեկավարությունը կուսակցական ղեկավարության — չի կարելի թեկուզ հենց նրա համար, վոր կուսակցությունն իրենից ներկայացնում է դասակարգի ավանգարդը։ Նրա քաղաքականությունը հանդիսանում է բանվոր դասակարգի շահերի ամենաճիշտ և ամենալրիվ արտահայտությունը։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությունը — նշանակում է կոմյերիտմիության գործնեյությանը ուղղություն տալ համաձայն ամբողջ բանվոր դասակարգի շահերի, այսինքն նշանակում է պրոլետարական ղեկավարություն։

Կուսակցության և կոմյերիտմիության փոխադարձ հարաբերությունները խոշոր նշանակություն են ստանում հատկապես նրա համար, վոր գոյություն ունի մանր-բուրժուական ողակումն, վորը ճնշում է պրոլետարիատի և կուսակցության վրա, առաջ բերելով ավելի պակաս կայուն շերտերի մեջ տատանումներ և յերերումներ։ Կոմյերիտմիությունը յերիտասարդական մի այնպիսի կազմակերպություն է, վորն առանձին ուժով է կրում յուր վրա այդ բոլոր մանր-բուրժուական ազդեցությունները, վորովհետև նա տակավին գտնվում է ձևակերպման պրոցեսում, վորովհետև բանվորական յերիտասարդությունը չունի և չի յել կարող ունենալ կապիտալիզմի դեմ մղած պայքարում ձեռք բերած այն դասակարգային կոփվածությունը և այն փորձը, վոր ունեն բանվորների սերունդները։

Այժմ բավականաչափ փոխվել է հարաբերությունը բանվոր դասակարգի հին և յերիտասարդ շերտերի միջև՝ կուսակցության մեջ, կոմյերիտմիության մեջ և հենց բանվոր դասակարգի մեջ, ըստ վորում կոմյերիտմիությունը մյուս բոլոր կազմակերպություններից ավելի շատ գրավական է տալիս, վոր նա փոխարինելու յե հին սերնդին։

Մենք այնպիսի շրջան ունեյինք, յերբ կոմյերիտական կազմակերպության անդամները տակավին գիտեյին գորոդովոյին, ֆաբրիկանտին, հին աֆիցերին։ Այդ շերտը վաղուց է գնացել կոմյերիտմիությունից։ Հետո կար այնպիսի շրջան, յերբ խոշոր մասն այն շերտն եր, վորն արդեն չգիտեր գորոդովոյին, սակայն դրա փոխարեն գիտեր քաղաքացիական կռիվը, և կոմյերիտական կազմակերպության խոշոր կադրերը քաղաքացիական կռվի յեռացող կաթսայում ստացան ռազմական փառահեղ կոփվածություն և

փորձ։ Սակայն այժմ մենք թևակոխել ենք մեր զարգացման յերրորդ շրջանը, յերբ կոմյերիտների այդ շերտը ևս արդեն անցել է կոմյերիտական կազմակերպության շրջանակներից, հեռացել է կոմյերիտմիությունից։ Ուստի և կոմյերիտմիության ներսում մենք ստանում ենք այնպիսի կազմ, վորը չի տեսել վոչ միայն գորոդովոյին, այլ և չգիտե քաղաքացիական կռիվը։

Իրերի այսպիսի դրության դեպքում, յերբ յերիտասարդությունը չի տեսել հին ռեժիմը, չի տեսել քաղաքացիական կռիվը, բայց այժմ արդեն մասնակցում է սոցիալիզմի շինարարությանը և տեսնում մեր կարգերի պարզ յերևացող ներհակությունները, այնպիսի ներհակություններ, վորոնք դեռ շուտ չեն վերացվելու, — հասկանալի յե, վոր յերիտասարդության այդ նոր կազմն ավելի զգայուն կերպով է վերաբերվում դեպի մեր կարգերի ներհակությունները և ավելի քիչ է հասկանում այն ամենը, ինչ ընդհանուր առմամբ կատարվում է մեր շինարարական աշխատանքի ահագին մասշտաբով։

Կուսակցության յեվ կոմյերիտմիության իրավահավասարության թեորիան. — Բանվոր դասակարգի պայքարի ամբողջ փորձը, ամբողջ թեորետիկ գիտությունը յուր մեջ մարմնացնող կուսակցության և կոմյերիտմիության միջև անհրաժեշտ է ամենասերտ կապ նրա համար, վորպեսզի կոմյերիտները ճիշտ կերպով կարողանան ըմբռնել պրոլետարական դիկտատուրայի յերկրում տեղի ունեցող բոլոր պրոցեսները։ Հենց կուսակցության շարքերում մենք ունեցել ենք թեքումների այնպիսի դեպքեր (տրոցկիզմ), յերբ մանր-բուրժուական տարրերի ճնշման տակ կուսակցության առանձին տարրերը խուճապի յեն մատնվել, դադարել են հավատալ սոցիալիզմի հաղթական շինարարությանը մեր յերկրում և, ի վերջո, կանգնել են պրոլետարիատի դիկտատուրայի դեմ պայքարելու ճանապարհի վրա։ Այդ թեքումները վորոշ արձագանք գտան և կոմյերիտմիության մեջ, և կոմյերիտական մի շարք ակտիվիստներ մյուս ոպպոզիցիոներների հետ միասին ֆրակցիոն աշխատանք եյին տանում կուսակցության դեմ։ Մանր-բուրժուական ճնշումը յուր արտահայտությունը հաճախ գտնում է նրանում, վոր փորձեր են արվում կոմյերիտմիությունը հակադրել կուսակցության, ընդհարել այդ յերկու կազմակերպությունները։ Այդ հակադրման հիմքում դրվում է կուսակցու-

թյան և ոմյերիտմիության իրավահավասարության թեորիան։ Օպպոզիցիան թույլատրելի և հնարավոր է համարում, վոր պրոլետարական դիկտատուրայի յերկրում գոյություն ունենային յերկու առանձին կուսակցություններ։ Օպպոզիցիան, ստեղծելով անլեգալ ապպարատ, դրականություն և կասսաներ, փաստորեն յերկրորդ կուսակցության կազմակերպչական հիմքն եր դնում։ Միայն յերկու առանձին կուսակցությունների թեորիայի տեսակետից հասկանալի կլիներ կոմյերիտմիության և կուսակցության իրավահավասարության թեորիան։ Բանվորական շարժման մեջ կարո՞ղ են արդյոք լինել յերկու առանձին այնպիսի կենտրոններ, վորոնք տանեն միատեսակ դասակարգային քաղաքականություն և այնուամենայնիվ գոյություն ունենան առանձին-առանձին։ Այդպիսի դրությունը նշանակելու յեր ուժերի ջլատում, մշտական հակասություններ՝ ղեկավարության մեջ, ու կործանելու յեր բանվոր դասակարգին։ Յերկու առանձին կենտրոններ կարող եյին գոյություն ունենալ միայն դասակարգային տարբեր եյություն ունենալու դեպքում, միմյանց դեմ պայքարելու դեպքում, միմյանց հետ մրցելու դեպքում։ Նման պայմաններում այդ կենտրոններից մեկն ու մեկը անպայմանորեն դառնալու յեր այնպիսի մի կենտրոն, վորը յուր շուրջն եր հավաքելու պրոլետարական դիկտատուրային թշնամի բոլոր ուժերը։ Հենց այդպիսի դրության մեջ ել ընկան տրոցկիստները։ Կարո՞ղ է արդյոք կոմյերիտմիությունն իրավահավասար լինել կուսակցության հետ։ Միատեսա՞կ են արդյոք կուսակցության և կոմյերիտմիության խնդիրները։ Կուսակցությունը ղեկավարում է պրոլետարիատի դիկտատուրան և սոցիալիզմի շինարարությունը, վորպես պրոլետարիատի այնպիսի շտաբ, վորը դուրս է յեկել հեղափոխական բաղխումների կրակի միջից։ Կոմյերիտմիությունը հանդիսանում է դաստիարակչական այնպիսի մի կազմակերպություն, վորն ոգնում է սոցիալիստական շինարարության գործին, սակայն չի ղեկավարում այդ։ Կոմյերիտմիությունը կուսակցությանը իրավահավասար կարող եր դառնալ միայն այն ժամանակ, յերբ նա յուր վրա վերցներ ղեկավարող դեր, այսինքն յերբ նա դառնար մի ուրիշ կուսակցություն։ Իսկ ուրիշ կուսակցություն դառնալ նա կարող եր միայն այն դեպքում, յեթե կոմյերիտմիությունը կուսակցության քաղաքական գծից տարբեր գիծ ունենար։ Կուսակցության և կոմ-

յերիտմիության իրավահավասարության այդպիսի թեորիան հասցնում է նրան, վոր կոմյերիտմիությունը հակադրվում է կուսակցությանը և ժխտվում է կոմունիստական կուսակցության հեղափոխական դերը։

Չեզոքության թեորիան. — Սակայն կուսակցության գիծը և ղեկավարությունը չի կարելի մեքենայաբար ընդունել։ Չի կարելի յուրացնել քաղաքական ճիշտ գիծը՝ առանց այդ քննելու և բազմակողմանի ուսումնասիրելու։ Կոմյերիտմիությունը պետք է մասնակցի կուսակցության առաջ կանգնած հարցերի քննությանը։ Պետք է հայտնաբերել կոմյերիտական մասսաների կարծիքը բոլոր հիմնական տարրերին վերաբերող տարաձայնությունների մասին, յերբ այդ տարաձայնությունները ծագում են։ Յերբ կուսակցությունը պայքարում եր տրոցկիզմի դեմ, կոմյերիտմիության աշխատողների մի մասն առաջադրեց չեզոքության թեորիան, կուսակցական վեճերի հանդեպ սպասողական վերաբերմունք ունենալու թեորիան։ Առաջին հայացքից այդ թեորիան կարող է ճիշտ թվալ։ Յեթե պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում ղեկավարող ուժը հանդիսանում է կուսակցությունը, յեթե նրան է պատկանում քաղաքականության հիմնական ուղղությունը վորոշելու իրավունքը, ապա այլ ևս ի՞նչ կարիք կա, վոր կոմյերիտականները խառնվեն ներկուսակցական վեճերին։ Կուսակցությունն ինքը բոլորը կվճռի, բոլորը կպարզի, և դրանից հետո կոմյերիտներին կմնա միայն այն, վոր նրանք լավ ուսումնասիրեն և յուրացնեն կուսակցության վորոշումները։ Հարցի այսպիսի դրումով, ինչպես վերացվում է կոմունիստական, բոլշևիկյան դաստիարակության կարևորագույն պայմանը, այն է՝ մասնակցությունը պրոլետարական իդեոլոգիայի հաղթանակի համար մղվող պայքարին։ Կոմյերիտականները պետք է մասնակցեն վիճելի հարցերի քննությանը նրա համար, վորպեսզի ոգնեն կուսակցությանը՝ լենինյան ճիշտ հայացքները պաշտպանելու գործում, պետք է սովորեն պայքարել ոպպորտունիզմի դեմ և այդ պայքարում ձևակերպեն իրենց հայացքները։ Դիսկուսիաների մեջ կոմյերիտմիության ունեցած մասնակցության փորձը ցույց տվեց, վոր կոմյերիտականներն ոպպոզիցիայի դեմ պայքարելու գործում ճնշող մեծամասնությամբ պաշտպանում են կուսակցությանը։ Սակայն կոմյերիտմիության մասնակցությունը դիսկուսիաներին չի նշանակում, վոր պրոլետարական քաղաք-

կանության հարցերում կոմյերիտմիությունը կարող է մնալ յուր «առանձին կարծիքին»: Դա նորեն հասցնելու յեր կուսակցության և կոմյերիտմիության իրավահավասարության նույն թեորիային, այսինքն յերկրորդ կուսակցության թեորիայի սաղմնավորման:

Միայն կուսակցության ղեկավարության տակ կոմյերիտմիությունը կկարողանա յուր աշխատանքում պահպանել դասակարգային ուղիղ գիծը և հակահարված տալ զանազան մանրբուրժուական տատանումներին:

3. ՆՈՐ ՁԵՎՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՍԻՍՏԵՄԸ

Կոմյերիտական մասսաներին պրակտիկ աշխատանքին մասնակից անելու խնդիրը. — Այժմ, յերբ պրոլետարիատը սկսել է արդյունաբերության վերակառուցումը և գյուղը կոլլեկտիվիզացիայի յենթարկելու գործը, առանձին անհրաժեշտությամբ է թելադրվում մասսաներին ամենաակտիվ կերպով սոցիալիստական շինարարությանը մասնակից դարձնելու խնդիրը: Այդ խնդիրը պահում է յուր ուժը նաև կոմյերիտմիության աշխատանքների համար: Կոմյերիտմիության աշխատանքների համար անհրաժեշտ է գտնել այնպիսի ձևեր և մեթոդներ, վորոնք համապատասխանեյին յերիտասարդության լայն մասսաների պահանջներին: Վերջին տարիներս չնայած վոր բանվորա-գյուղացիական յերիտասարդության նոր շերտերն ուժեղ հոսանքով և ահագին քանակությամբ են մտնում կոմյերիտմիության մեջ, կոմյերիտմիության աշխատանքում նկատվեց կտրվածություն՝ աշխատանքի բովանդակության և ձևերի միջև՝ մի կողմից, և կոմյերիտական մասսաների շահերի միջև՝ մյուս կողմից: 1927 թ. կոմյերիտմիության կազմի ստուգման ժամանակ միությունից դուրս մնացին 200.000 կոմյերիտներ: Դրանցից 34%-ը հեռացավ միությունից նրա համար, վոր միութենական աշխատանքի ձևերը նրան չեյին բավարարում: Միությունից հեռանալու գլխավոր պատճառն այն է, վոր կոմյերիտները բավական չափով չեն ներգրավվում կոնկրետ պրակտիկ աշխատանքի մեջ: Մենք արդեն վերը հիշատակեցինք Լենինի խոսքերն այն մասին, վոր լինել կոմյերիտմիության անդամ նշանակում է՝ յուր ամբողջ ուժերն տալ ընդհանուր գործի համար: Առանց այդ պայմանի չի կարելի յերիտասարդությանը տալ կոմունիստական դաստիարակություն, չի

կարելի պատրաստել այնպիսի նոր կադրեր, վորոնք հետագայում ղեկավարեն բոլոր աշխատավորներին:

Այդ պատճառով էլ միութենական աշխատանքների վերակառուցումը պետք է նպատակ դնի յուրաքանչյուր կոմյերիտին առնել պրակտիկ աշխատանքի մեջ՝ «ընդհանուր աշխատանքի» համար:

Կոմյերիտմիության աշխատանքի հիմքում պետք է դրվի լայն ծավալված միութենական դեմոկրատիան: Դեմոկրատիա ասելով՝ սովորաբար հասկանում են ազատ ընտրություններ՝ առանց վերի ճնշման, ազատ քննարկություն, ինքնաքննադատություն, վորը ղեկավարների կողմից չի հանդիպում վոչ մի խոչընդոտի, և այլն: Այդ բոլորը դեմոկրատիայի անհրաժեշտ ելեմենտներն են, սակայն դրանք բավական չեն՝ առանց մեկ կարևոր պայմանի. այդ պայմանը պահանջում է, վոր յուրաքանչյուր կոմյերիտ մասնակցի Միության կոնկրետ պրակտիկ աշխատանքներին: Այդ մասնակցությունը կարևոր է վոչ թե նրա համար, վորպեսզի ամեն մեկին «հասարակական նագրուզկա տալ»: Յեթե այդ հասարակական նագրուզկան բռնությամբ է փաթաթվում, ապա նա կոմյերիտների համար դաստիարակչական վոչ մի նշանակություն չի ունենում: Կոմյերիտի մասնակցությունը միության կոնկրետ պրակտիկ աշխատանքին՝ պետք է նրան կապի կոմյերիտմիության հետ, արթնացնի նրա մեջ կոմյերիտական աշխատանքի «կոլլեկտիվ տիրոջ» զգացմունքը և դրանով նրան դարձնի այնպիսին, վոր նա կարողանա ներմիութենական դեմոկրատիան ակտիվ անցկացնել: Այդ պատճառով էլ կոմյերիտների աշխատանքը պետք է արտահայտվի և արդեն արտահայտվում է նրանում, վորպեսզի ստեղծել այնպիսի նախաձեռնող կորիզներ, խմբակներ, վորոնք առաջ են գալիս կամավոր: Կենցաղը բարելավող խմբերը պայքար են մղում հանուն յերիտասարդության առողջապահության՝ յերիտակենցաղի առողջացման, հանուն ժամանակի ճիշտ բաշխման, հանուն մաքրասիրության և այլն: Նախաձեռնող խմբակները և ձեռնարկությունների կոմյերիտբջիջները կազմակերպում են «տնտեսական ստուգումներ», վորոնք ներկայացնում են իրենցից այս կամ այն արտադրության ստուգում, վորի ժամանակ ձեռնարկություններից յուրաքանչյուրը ներկայացնում և յուր թերությունները և նվաճումները:

«Կան զանազան կամավոր միություններ, «կորիզներ», «խմբակներ», վորոնք աշխատում են տարբեր ուղղություններով. նրանք բոլորն էլ կենսունակ դուրս յեկան։ Այդ միջոցներն, ընդհանուր առմամբ, կոմյերիտմիության աշխատանքի մեջ անկասկած առաջ են բերում խոշոր կենդանություն և խոշոր վերելք՝ «Կենցաղը բարելավողների» փորձը, «ռացիոնալիզացիայի խմբակների» փորձը, «առողջ հանգիստ կազմակերպողների» խմբակների փորձը, արտադրական մրցումների, «տնտեսական սուդման» հրաշալի փորձը, «ռացիոնալիզատորական կրուժոկների» փորձը, հարվածային բրիգադաների փորձը, «արտադրողների և սպառողների հանդիպման» փորձը, բանվոր-ընտրողների միությունների փորձը և այլն, — այդ ամբողջ փորձը, մասսայական մասշտաբով կիրառվելով, իրեն արդարացրեց»։

Կոմյերիտմիության ութերորդ համագումարում ընկ. Բուխարինն առաջարկեց նույն կամավոր սկզբունքների հիման վրա պ ա յ ք ա ր կ ա զ մ ա կ ե ր պ ե լ բ յ ո ւ ր ո կ ր ա տ ի զ մ ի դ ե մ։ Զանազան խմբակներին, վորոնք արդեն կազմակերպված եյին, ընկ. Բուխարինն առաջարկեց միացնել նաև «բյուրոկրատիզմի դեմ պայքարող խմբակները» կամ «բանվորագյուղացիական տեսչությանը ոգնող խմբակները», Այդ բոլոր խմբակները կարևոր են նրանով, վոր նրանք, լայն ասպարեզ ստեղծելով ինքնագործնեության համար, իրենց ճաշակին հարմար աշխատանք ընտրելու համար, մեղմացնում են այսպես կոչված «կոմյերիտական անգործությունը», շատ կոմյերիտների հասարակական-ոգտակար աշխատանքի բացակայությունը, հասարակական-ոգտակար աշխատանքի, վորը կոմյերիտներին կապում է միության հետ։

Առանձին խմբեր և կորիզներ կազմակերպելու հետ մեկտեղ, վորպես աշխատանքի նոր ձև, առաջադրվում է մասսայական ակտիվ մասնակցություն ցույց տալ այս կամ այն ձեռնարկմանը։ Հոկտեմբերյան հեղափոխության տասներորդ տարեդարձի նախորյակին կոմյերիտմիությունն անցկացրեց համամիութենական կոմունիստական շաբաթորյակ՝ անապաստանության դեմ պայքարելու ֆոնդի ոգտին։ Շաբաթորյակին մասնակցություն ցույց տվեց անկուսակցական յերիտասարդության և չափահաս բանվորների զգալի մասը։ Այդպիսի մ ա ս ս ա յ ա կ ա ն ձ և ե ր ը ևս կարող են ոգնել կոմյերիտմիության՝ բարձրացնել մասսայի ակտիվությունը։

Նախաձեռնող խմբակներում և կորիզներում յերիտասարդության ակտիվությունը չի կարող ամբողջ պրոլետարական հասարակայնությունից մեկուսացած ընթանալ։ Այդ նախաձեռնող խմբակների միջոցով յերիտասարդությունը պետք է ընդգրկվի պրոլետարիատի շինարարական աշխատանքի ընդհանուր հոսանքի մեջ։ Նախաձեռնող կորիզները և խմբակները պետք է ծառայեն նրա համար, վոր յերիտասարդության մասսաները փաստորեն մասնակից արվեն արտադրական խորհրդակցությունների, պրոֆմիությունների, կամավոր ընկերությունների, խորհուրդների, յերկրի բոլոր բանվորական կազմակերպությունների մեջ։

Կոնկրետ ղեկավարություն կոմյերիտական կազմակերպությունների մեջ. — Կամավորությունն աշխատանքի մեջ չի ժխտում ղեկավարության անհրաժեշտությունը։

Մեզ համար կարևոր է վոչ թե առհասարակ նախաձեռնություն, այլ այնպիսի նախաձեռնությունը, վորն ընթանա սոցիալիզմի շինարարության հունով և նպաստի այդ շինարարությանը։ Խնդիրն այն է, վորպեսզի բոլոր կամավոր խմբերն աշխատեն վոչ թե միմյանցից անջատ, վոչ թե յուրաքանչյուրը յուր սեփական հասկացողությամբ, այլ համախմբվեն տվյալ շրջանի համար առաջադրված խնդիրների շուրջը։

Սակայն այդպիսի ղեկավարության համար հարկավոր է ունենալ և՛ տեսականորեն և՛ գործնականորեն լավ պատրաստված, կայուն և զգայուն ակտիվ։ Վերջին տարիների ընթացքում կոմյերիտմիության մեջ ևս հայտնաբերված են բյուրոկրատիզմի մի շարք դեպքեր։ Շնորհիվ նրա, վոր բացակայում եր մասսաների ակտիվ մասնակցությունն աշխատանքներին, շնորհիվ նրա, վոր չկար վոչ մի կոնտրոլ, միության առանձին ղեկավարները բոլորովին կտրվել եյին մասսայից և դարձել եյին հրամաններ արձակելով զբաղվող ադմինիստրատորներ։ Ակտիվի այդ մասն ընդունակ չե յուր ղեկավարությամբ ընդգրկելու աշխատանքի ձգտող այն կամավոր շարժումը, վորն արդեն առաջ է յեկել կոմյերիտական մասսայի մեջ։ Առանձին «կոմիտետչիկներ» անվստահությամբ են վերաբերվում դեպի աշխատանքի նոր ձևերը, շարունակում են հրամայել, շարունակում են պայքարել նախաձեռնության դեմ։ Կոմյերիտական կոմիտեների աշխատանքի սխ-

տեմի մեջ չափազանց շատ են ժողովները, խորհրդակցությունները, գրասենյակային գրագրությունը և այլն, վորոնք խանգարում են տանել կոնկրետ և գործնական աշխատանք։

Յեվ վորպեսզի ներկայի կամավորությունը միութենական ղեկավարության կողքովը չանցնի, կոմյերիտմիությունը փոփոխություն է մտցնում յուր աշխատանքի մեջ։

Թղթե ընդհանուր ղեկավարության փոխարեն մտցվում է այնպիսի ղեկավարություն, վորը հաշվի յե առնում աշխատանքի յուրաքանչյուր ճյուղի կոնկրետ պահանջները և տվյալ բջիջին տալիս է կոնկրետ ցուցմունքներ, անմիջականորեն ծանոթանում է, թե աշխատանքն ինչպես է ընթանում վարի կազմակերպությունների մեջ։

Մյուս կողմից՝ ջոկվում է այնպիսի ակտիվ, վորը կարող է աշխատել նոր պայմաններում, — կարող է պայքարել բյուրոկրատիզմի արտահայտությունների դեմ, մասսաների ուժերին հավատ չընծայելու դեմ, տգիտության, անկուլտուրականության դեմ։ Նոր ակտիվի առաջ քաշումը պետք է ուղեկցվի դաստիարակչական խոշոր աշխատանքով։ Նոր ակտիվիստը պետք է լինի կազմակերպիչ, բայց կազմակերպիչ՝ աշխատանքի վորոշ ճյուղի մեջ։ Դրա հետ մեկտեղ՝ նա պետք է ունենա թեորետիկ լավ պատրաստություն, վորպեսզի թույլ չտա քաղաքական սխալներ, չընթանա հոսանքի հետ՝ յեթե կամավոր շարժման մեջ յերևան գան բացասական յերևույթներ, յեթե այդ շարժումը գնա վոչ սոցիալիստական շինարարության ուղիով։

Ինքնաքննադատությունը չպետք է սահմանափակվի կոմյերիտմիության շրջանակներով։ Կոմյերիտական կազմակերպությունները և նրանց աշխատանքը պետք է կանգնեն անկուսակցական բանվորական յերիտասարդության առաջ բանվորական յերիտասարդության կոնֆերենցիաներում, գործարանային ընդհանուր ժողովներում և այլն։ Այդպիսի ինքնաքննադատությունը կոմյերիտմիության առաջ կմերկացնի նրա աշխատանքի բոլոր թույլ կողմերը, ցույց կտա, թե կոմյերիտմիությունը յուր աշխատանքում բանվորական յերիտասարդության շահերի տեսակետից ինչ բանում է սխալվել, յերևան կբերի կոմյերիտական կազմակերպությունների մեջ յեղած հիվանդոտ յերևույթները։

Գյուղական բջիջների աշխատանքի աշխուժացումը. — Միութենական աշխատանքի աշխուժացումը, վորպես կարևորագույն խնդիր, կանգնած է նաև կոմյերիտմիության գյուղական կազմակերպությունների առաջ։ Այստեղ միության կյանքի աշխուժացումը պետք է յերիտասարդության բատրակային և չքավոր մասսաներին լայն կերպով ներգրավի հասարակական աշխատանքի մեջ և ձևակերպի կոմյերիտմիության գյուղական բջիջների «պրոլետարական դասակարգային դեմքը»։ Կուլակային տարրերի խցկվելը գյուղական բջիջներում, գյուղական ակտիվի թուլությունը և բատրակների ու չքավորների թույլ առաջքաշումը ղեկավարող աշխատանքի մեջ, այդ ամենը հասցրին նրան, վոր մի շարք կազմակերպություններում ՀամԼԿՅԵՄ դասակարգային գիծը աղավաղվեց։

Այդ սխալներից առաջինը կազմում է ագրոկուլտուրային աշխատանքի սխալ ընթացքը. այդաշխատանքը փոխանակ գյուղի սոցիալիստական վերակառուցման աստիճաններից մեկը դառնալու, յենթարկվեց անհատական տնտեսությունների վերելքին նպաստելու խնդիրներին։ Մի շարք կոմյերիտ-տնտեսատերեր, փոխանակ գյուղի արտադրական կոոպերացման ինիցիատորները լինելու, ձգտեցին միայն իրենց անհատական տնտեսության բարձրացման, յերբեմն էլ հարստանալով, դարձան կուլակներ։ Կոմյերիտական բջիջներն այդ վերասերման վրա նայում եյին մատների արանքով։ Մոտավորապես 4.000 կոմյերիտական տնտեսությունների հատուկ ուսումնասիրությունը տվեց հետևյալ արդյունքները։ — Չքավորական տնտեսությունները կազմում են 28,7%, միջակներինը — 52,2%, ունևորներինը — 15,6%, կուլակայինը — 3,6% «Լավագույն միջակ գյուղացի» հասկացողությունը բացատրվում էր կուլտուրականության իմաստով, տնտեսությունը կատարելագործված միջոցներով վարելու իմաստով, և վոչ թե սոցիալական-դասակարգային իմաստով և վոչ էլ քաղաքական ակտիվության իմաստով։ «Լավագույն» — շատ հաճախ հաշվում էր լավ տնտեսատերը, իսկ այդ դիմակի տակ միության մեջ ընդունում եյին կուլակին, վորը հետագայում պայքարում եր հացամթերման և տուրքադրման դեմ։

Գյուղական կազմակերպությունների աճման ամենախիստ կանոնավորումը բավական չէ. վորպեսզի նրանց մեջ ունենալ բատրակ և չքավոր յերիտասարդության գերակշռություն —

պետք է սահմանվի պարզ և վորոշ գիծ՝ միությանը գյուղի կոլեկտիվիզացիային մասնակից անելու գործում։ Ութերորդ համագումարը պարտադրեց յուրաքանչյուր կոմյերիտ-ինքնուրույն տնտեսատիրոջը լինել կոլեկտիվ տնտեսության մեջ։ Յերբ գյուղում կոլեկտիվ տնտեսություն է կազմակերպվում, կոմյերիտ-տնտեսատերերը պարտավոր են նրա մեջ մտնել առաջին հերթին։ Կոմյերիտական բջիջները պետք է ուժեղացնեն իրենց աշխատանքը խորհրդային տնտեսություններում և ձգտեն, վոր յերիտասարդությունն ակտիվ կերպով աշխատի խորհ. տնտեսությունների բարելավման գործում։

Համագումարը գյուղական բջիջների առաջ դրեց մի շարք խնդիրներ, վորոնք կապված են կոմյերիտմիության անմիջական-դաստիարակչական աշխատանքի հետ։ Այդ խնդիրները հետևյալներն են.— ուժեղացնել պայքարը կուլակների պրոպագանդի դեմ, ուժեղացնել հակակրոնական պրոպագանդը՝ այդ դնելով դասակարգային հողի վրա, հարմարեցնել ամբողջ քաղուսաշխատանքը չքավոր և բատրակ յերիտասարդության պահանջներին։ Այդ բոլոր միջոցները պետք է տոգորված լինեն գյուղի սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարի վոգով։

Քաղուսումը կոմյերիտմիության մեջ.— Կոմյերիտական աշխատանքի նոր էտապում վերին աստիճանի կարևոր են դառնում քաղաքական ուսման հարցերը։ Կոմյերիտների քաղաքական ուսումը չի կարող կտրված լինել այն պրակտիկ աշխատանքից, վոր նրանք կատարում են, կոմյերիտականը պետք է սովորի հասկանալ դասակարգային պայքարի բովանդակությունը և մեթոդներն այն կոնկրետ փաստերի հիման վրա, վորոնց հետ նա ընդհարվում է։ Այսպիսով գյուղի կոմյերիտը յուրացնում է, թե ինչպես բանվոր դասակարգը, հենվելով չքավորության վրա և դաշնակցելով միջակի հետ, պայքար է մղում կուլակի դեմ, իսկ քաղաքի կոմյերիտ-բանվորը գաղափար է ստանում մասնավոր կապիտալի դեմ մղվող պայքարի մասին, բանվորական հարցում խորհրդային իշխանության ունեցած քաղաքականության մասին և այլն։ Առանց այդ փորձի, վորը ձեռք է բերվում պրակտիկ կոնկրետ աշխատանքում ամենորյա մասնակցության շնորհիվ, կոմյերիտական քաղուսումը քաղգրագիտական դպրոցներում, քաղգրականության ընթերցումը և այլն — բավական չեն լինի։ «Ձեր առաջ դրված է

չինարարության խնդիրը, և դուք այդ կկարողանաք լուծել միայն
այն դեպքում... յեթե կարողանաք կոմունիզմը՝ պատրաստի,
անգիր արած ֆորմուլաներից, խորհուրդներից, ռեցեպտներից,
հրահանգներից, ծրագրներից՝ դարձնել ձեր անմիջական աշխա-
տանքը միացնող կենդանի ուժ, յեթե կարողանանք կոմունիզմը
դարձնել ղեկավարություն՝ ձեր պրակտիկ աշխատանքի համար»։
(Լենին)։ Այդ խնդիրը չի կարելի լուծել միայն թեորետիկ կրթու-
թյան միջոցով։ Սակայն պրակտիկան, ակտիվ մասնակցությունը
սոցիալիստական շինարարությանը պետք է ամրացվեն թեո-
րետիկ ուսմամբ։ Բացի քաղգրագիտական դպրոցներից, վոր-
տեղ կոմյերիտները յուրացնում են պրոլետարիատի դասակար-
գային պայքարի փորձն ընդհանրացնող հիմնական սկզբունք-
ները, հարկավոր է ուսումնասիրել Լենինի աշխատությունները,
անհրաժեշտ է տիրապետել պրոլետարական հեղափոխության
թ ե ո ր ի ա յ ի ն։
Կոմյերիտները բողոքում են, վոր մեր կադրերի դրությունն
անբավարար է, և վոր առանձնապես անբավարար է դրված
իրենց տեսական պատրաստության գործը։
Կոմյերիտմիության մեջ մենք պետք է (դուցե դա ես լայն
կամավոր շարժման հիմունքներով) այժմ դնենք կոմյերիտների
թեորետիկ տեսական պատրաստության հարցը։ Վլադիմիր Իլյիչը
քանիցս գրել և ասել է, վոր մեծագույն ոպորտունիզմ պետք
է համարել արհամարհակ[illegible] վերաբերմունքը դեպի թեորիան։
Այժմ խոշոր աշխատանք է տարվում կոմյերիտներին դաս-
տիարակելու և պատրաստելու՝ վորպես սոցիալիզմի կառուցողներ։
Խոշոր աշխատանք է տարվում նրանց տալու և՛ թեորետիկ և՛
պրակտիկ պատրաստություն, վորպեսզի նրանք կարողանան
լուծել նոր հասարակական իրավակարգի համաշխարհային-պատ-
մական խնդիրները։ Սակայն այդ ամբողջ դաստիարակչական
աշխատանքը թերի կլիներ, յեթե կոմյերիտմիությունը չպատ-
րաստեր նաև հեղափոխության այնպիսի մարտիկներ, վորոնք
պատրաստ լինեյին յետ մղելու Խորհրդային Միության վրա
կատարվող ամեն մի հարձակում։ Կոմյերիտմիությունը ստանձնել
է կարմիր նավատորմիղի շեֆությունը, և կարմիր նավատորմիղի
կազմը լրացնում է ամենալավ կոմյերիտականներով։ Կոմյերի-
տական կազմակերպությունները շարունակ նամակագրություն
ունեն ռազմական նավերի մատրոսների հետ, նրանց գրականու-

թյուն են մատակարարում. կոմյերիտները բավական չափով ընդունվում են նաև ռազմական դպրոցները։

Խաղաղ պայմաններում կոմյերիտմիությունն աշխատում է ամբողջ բանվորական յերիտասարդությանը տալ ռազմական պատրաստություն, կազմակերպելով հրաձիգ կրուժոկներ, ռազմական արշավներ և այլն։

ԽՍՀՄ գտնվում է հարձակողական քաղաքականություն վարող կապիտալիստական պետությունների օղակման մեջ և այդ պատճառով էլ յերիտասարդության ռազմականացումը կազմում է մեր յերկրի պաշտպանության անհրաժեշտ ակտը։ Կոմյերիտմիությունը պատրաստվում է պաշտպանել Խորհրդային Միությունը, վորպես ամբողջ աշխարհի պրոլետարների սոցիալիստական հայրենիքը, վորպես սոցիալիզմի առաջին յերկիրը, վորի աճման և ծաղկման գործում շահագրգռված է միջազգային ամբողջ պրոլետարիատը։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

1. ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ Է

Իմպերիալիզմի եպոխան մահացող կապիտալիզմի եպոխան է։ Արդեն հասունացել են նյութական բոլոր նախադրյալները սոցիալիզմի համար։ Արդեն գոյություն ունեն կապիտալիզմի տապալման համար անհրաժեշտ բոլոր պայմանները։ Իմպերիալիզմը կապիտալիստական զարգացման վերջին էտապն է, վոր յերկաթե անհրաժեշտությամբ տանում է դեպի պրոլետարական հեղափոխությունը։

Պրոլետարիատի միջազգային հեղափոխության կազմակերպիչը հանդիսանում է բանվորների միջազգային մարտական ընկերությունը—Կոմունիստական Ինտերնացիոնալը։ Կոմունիստական Ինտերնացիոնալը հանդիսանում է ամենալավ, ամենագիտակից, ամենաանձնազոհ և հեղափոխությանը նվիրված բանվորներին յուր շարքերում միացնող պրոլետարիատի միակ և կենտրոնացված միջազգային կուսակցությունը։ Կոմունիստական Ինտերնացիոնալը, նպատակ ունենալով կապիտալիզմի տապալումը, պրոլետարիատի դիկտատուրայի սահմանումն ամբողջ աշխարհում և ամբողջ աշխարհի խորհրդային հանրապետությունների յեղբայրական միության ստեղծումը՝ հանուն դասակարգերի լիակատար վոչնչացման և սոցիալիզմի իրականացման, հավաքում, համախմբում և պատրաստում է այն բոլոր ուժերը, վորոնց վիճակված է լինելու կապիտալիստական աշխարհի գերեզմանափորները, այն է՝ պրոլետարիատը և նրա դաշնակիցները—քաղաքի և գյուղի չքավորությունը, իմպերիալիզմի կողմից ճնշվող և շահագործվող գաղութային ու կիսագաղութային յերկրների ժողովուրդները։

Կոմինտերնը կազմակերպող և նրան ղեկավարող կուսակցությունը հանդիսանում է մեր կուսակցությունը, վորի ղեկավարության տակ ԽՍՀՄ պրոլետարիատը տապալեց կապիտալիստների իշխանությունը և սահմանեց յուր դիկտատուրան։ Բոլշևիզմի ամենահարուստ փորձը դարձավ Կոմինտերնի և կապիտալիստական յերկրներում գանվող նրա սեկցիաների գործնեյության հիմքը։

Կոմինտերնի ծրագիրը, «լինելով պրոլետարիատի միջազգային հեղափոխական շարժման փորձի բարձրագույն ընդհանրացումը, հանդիսանում է պայքարի ծրագիր՝ համաշխարհային կոմունիզմի համար»։ Նա ամբողջությամբ յելնում է լենինիզմում յուր ավարտումն ստացած հեղափոխական մարքսիզմի հիմնական դրույթյուններից. Նրան վորպես օրինակ ծառայեց մեր կուսակցության ծրագիրը, վորը հիմնված է լենինյան ուսմունքի վրա՝ իմպերիալիզմի, պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի մասին։

Բոլշևիզմի կազմակերպչական փորձը Կոմինտերնի կազմակերպչական շինարարության հիմքը դարձավ։ Այդ նույն փորձի վրա յե հիմնվում նաև Կոմինտերնի և կապիտալիստական յերկրների առանձին կոմունիստական կուսակցությունների տակտիկան։ Իմանալ պրոլետարական մասսաների և գյուղացիության համար մղվող պայքարի ուղիները, նրանց դաստիարակումն հեղափոխական վոգով, գիտենալ ամեն տեսակ պայմաններում մանյովրներ անել, լեգալ աշխատանքը միացնել անլեգալի հետ, ամբողջությամբ օգտագործել ամեն մի հնարավորություն՝ մասսաները կոմունիզմի կողմը նվաճելու համար, գիտենալ չկտրվել բանվորական մասսաների ամենօրյա կարիքներից, ամենօրյա պայքարից և միևնույն ժամանակ չնվազեցնել բանվոր դասակարգի կուսակցության դերը, չսահմանափակել կուսակցության գործնեյությունը միայն այդ ամենօրյա պայքարով, այլ, յելնելով նրանից, առաջնորդել բանվոր դասակարգը դեպի բուրժուազիայի իշխանության տապալումը և պրոլետարիատի դիկտատուրայի սահմանումը։ Կոմինտերնի աշխատանքում չկա վոչ մի այնպիսի բնագավառ, վորտեղ բոլշևիզմի փորձը չգտներ յուր կիրառումը։ Այդ փորձը լուսավորում է կապիտալիստական յերկրների կոմկուսների ուղին և օգնում է նրանց լավ հասկանալ այն բարդ և դժվար պայմանները, վորոնց մեջ նրանք պիտի աշխատեն։

Կոմինտերնի կազմակերպչական շինարարությունը.— Կոմինտերնի կազմակերպչական շինարարությունը հիմնված է բոլշևիկյան փորձի վրա։ Այդ փորձը, հանուն կոմկուսակցությունների պայքարի հաջողության, պահանջում է, որ յուրաքանչյուր կոմունիստական կուսակցություն իրենից ներկայացնի ամենալավ, ամենագիտակից, ամենաանձնազոհ և հեղափոխությանը նվիրված բանվորներին յուր մեջ ընդգրկող ամուր և միաձույլ մի կազմակերպություն։ Ցերկաթե կարգապահությունը, վորն անհրաժեշտ է կապիտալիզմի ուժերի հետ մահացու պայքար մղող բանվոր դասակարգին, կուսակցությանը համախմբում ու միացնում է վոչ մի դժվարությունից չվախեցող և պայքարում կոփված մարտական պրոլետարական ջոկատի մեջ։

Կոմունիստական կուսակցության հիմքը հանդիսանում է ֆաբրիկ-գործարանային բջիջը, վորը կուսակցությանը թույլ է տալիս անընդհատ կապ պահել մասսաների հետ, գիտենալ մասսային փոթորկող հարցերը, ամենալավ կերպով մոբիլիզել մասսաները և ղեկավարել նրանց պայքարը։ Կուսակցության բջիջների կառուցումը ձեռնարկություններում համապատասխանում է նրան, վորպեսզի կոմունիստները յերբեք չկտրվեն բանվոր դասակարգի առօրյա կյանքից և պայքարից։

Կոմկուսի յուրաքանչյուր անդամը պետք է վոչ միայն ընդունի կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը, այլ և պարտադիր կերպով մտնի վորևէ բջիջի մեջ և տանի նրանում ակտիվ աշխատանք, կատարելով այն բոլոր հանձնարարությունները, վոր տալիս է նրան կուսակցական կազմակերպությունը։

Կոմկուսակցությունները կառուցված են դեմոկրատական կենտրոնացման հիմունքների վրա։ Դա նշանակում է, վոր կուսակցական օրգանները, սկսած բջիջի բյուրոյից մինչև կենտրոնական կոմիտեն, կառուցվում են ընտրական սկզբունքի հիման վրա և տարած աշխատանքի համար պատասխանատու յեն իրենց ընտրողների առաջ։ Կուսակցական ներքին կազմակերպությունները յենթարկվում են բարձրերին. կարևորագույն հարցերը առնվում են կուսակցական մասսաների լայն կերպով քննության, իսկ յերբ վորոշումն ընդունված է, կուսակցության յուրաքանչյուր անդամ պարտավոր է մինչև վորոշման ընդունվելը

յենթարկվել նրան, պաշտպանել և անցկացնել կյանքի մեջ։* Կու-
սակցության վորոշումներին չենթարկվելու, կուսակցական դիս-
ցիպլինան խախտելու դեպքում — կուսակցությունից հեռացվում
են, վորովհետև բոլոր կողմերից թշնամիներով պաշարված և ամե-
նաբարդ պայմաններում կռվող կուսակցությունը չի կարող թույլ
տալ, վոր իրան ներսից ցնցեն և թուլացնեն յուր մարտա-
կան ուժը։

Այսպիսով, կոմունիստական կուսակցության կազմակերպ-
չական ամբողջ կառուցվածքը նպատակ ունի ապահովել, վոր կու-
սակցության մեջ ընդգրկվին բանվորական ամենալայն մասսա-
ները, և վոր պրոլետարիատը իշխանությունը խլելու պայքարի և
պրոլետարական դիկտատուրայի համար լավագույն պատրաստու-
թյուն հանդես բերի։ Մինչև Կոմինտերնի ստեղծումը, և նույնիսկ
նրա գոյության առաջին տարիներում, Արևմուտքում կուսակցու-
թյուններն այսպես չեյին կառուցված։ Սոցիալ-դեմոկրատական
կուսակցությունները հարմարեցված եյին խաղաղ և «հանգիստ»
աշխատանքի համար։ Նրանց հարկավոր չեյին վոչ խիստ դիս-
ցիպլինա և վոչ էլ արտադրական բջիջներ։ Սոցիալ-դեմոկրատա-
կան կազմակերպությունների անդամները միացվում եյին ըստ
բնակավայրերի։ Յերբ Արևմուտքում սկսեցին ծագել կոմունիս-
տական կուսակցություններ, առաջին շրջանում նրանք էլ կազ-
մակերպչորեն կառուցված եյին այնպես, ինչպես սոցիալ-դեմո-

* Սակայն այն, թե ներկուսակցական դեմոկրատիան ինչ չափով կարող է
լայն կիրառում ստանալ կուսակցության մեջ, կախում ունի այն կացությունից,
վորում կուսակցությունը պիտի աշխատի։ Ամբողջապես անլեգալ պայմաններում
աշխատող կուսակցության մեջ ներկուսակցական դեմոկրատիան չի կարող
այն լայն թափը ստանալ, ինչպես լեգալ խոշոր հնարավորություններով
օգտվող կուսակցության մեջ։ Պարզ է նույնպես, վոր ներկուսակցական դեմո-
կրատիայի ծավալման աստիճանը տարբեր է նաև կապիտալիստական յերկրնե-
րում և պրոլետարական դիկտատուրայի յերկրներում։ Պրոլետարական դիկտա-
տուրայի օրոք ներկուսակցական դեմոկրատիայի զարգացումը նմանապես տար-
բեր է լինելու պատերազմի և խաղաղ ժամանակ և այլն։ Ներկուսակցական դե-
մոկրատիան հանդիսանում է կուսակցության անդամների ակտիվության, գի-
տակցության և ինիցիատիվայի (ձեռներեցության) բարձրացման ամենալավ
զենքը։ Սակայն միևնույն ժամանակ այն հարցին, թե վոր չափով կարելի յե
նրան ուժեղացնել և ծավալել, կոմունիստները մոտենում են վոչ թե ձևակա-
նորեն, այլ յելնելով տեղի պայմաններից և պայքարի ժամանակից, ամբողջա-
պես ղեկավարվելով հեղափոխական նպատակահարմարության նկատառում
ներով։

կրատական կուսակցությունները։ Դա թուլացնում եր կո-
մունիստական կուսակցությունները, խանգարում եր նրանց
տանել հեղափոխական պայքար։ Նրանց շարքերի վերակառու-
ցումն Արևմուտքում ՛բոլշևիկյան ձևով, նպաստում է, վոր
նրանք ամրանան և մասսաների հետ նրանց կապերը լավանան
ու ուժեղանան։

Կոմինտերնը յուր ամբողջությամբ կազմակերպչորեն կա-
ռուցվում է նույնպես բոլշևիկյան այն հիմքերի վրա, վորոնց
վրա կառուցված է ամեն մի կոմկուս։

Կոմինտերնի բարձրագույն ղեկավարող օրգանը հանդիսա-
նում է կ ո ն գ ր ե ս ը, իսկ մի կոնգրեսից մինչև մյուսը՝ Կոմին-
տերնի Գործադիր Կոմիտեն (ԿԻԳԿ կամ ռուսերեն՝ ԻԿԿԻ)։ Կոմ-
ինտերնի գործկոմը ղեկավարում է կոմկուսակցությունների պայ-
քարը, միացնում, կոորդինացիայի յե յենթարկում առանձին
յերկրների կոմկուսների աշխատանքը, ոգնում է նրանց՝ ուղ-
ղելու սխալները, պայքարում է թեքումների (լենինյան գծից)
դեմ և տալիս է նրանց յուր ցուցմունքները կարևորագույն հար-
ցերի վերաբերյալ։ Կոնգրեսի և Գործկոմի վորոշումները պարտա-
դիր են Կոմինտերնի մեջ մտնող բոլոր կուսակցությունների համար։
Կոմինտերնը արթուն կերպով հետևում է, վորպեսզի յուր շարքերը
չմտնեն ոպորտունիստները (բուրժուազիայի հետ համաձայնու-
թյուն կնքելու կողմնակիցները և տիրող կապիտալիստական
կարգերին հարմարվողները), վ⸗րպեսզի այդ ժանգը չուտի յուր
կուսակցությունները։ Յերկրորդ կոնգրեսի սահմանած՝ Կ ո մ ի ն-
տ ե ր ն ո ւ մ ը ն դ ո ւ ն վ ե լ ո ւ պ ա յ մ ա ն ն ե ր ը պարունակում
են մի շարք պահանջներ, վորոնց պետք է բավարարի Կոմին-
տերնի դրոշի տակ պայքարել ցանկացող ամեն մի կուսակցու-
թյուն։ Այդ պահանջների իմաստն առաջին հերթին հանգում է
նրան, վոր նրանք յերաշխիք են հանդիսանում Կոմինտերնի
շարքերն ոպորտունիստական, համաձայնողական տարրերով
կեղտոտելու դեմ և Կոմինտերնին ապահովում են իրեն հարող
կուսակցությունների իսկական ղեկավարի դերը։

Կոմինտերնը հանդիսանում է ամենատարբեր յերկրների և
ազգությունների կոմունիստներին միացնող համաշխարհային
կազմակերպություն։ Աշխարհում առաջին անգամ յեվրոպական և
ամերիկական պրոլետարիատի առաջավոր շերտերը միացած են
Չինաստանի, Հնդկաստանի, Աֆրիկայի և ուրիշ գաղութային

յերկրների պրոլետարների հետ՝ մի միասնական հեղափոխական բանակի մեջ։ Ներկայումս Կոմինտերնում գտնվում են 45 առանձին կուսակցություններ, վորոնց անդամների ընդհանուր թիվը հավասար ե 2 միլիոնի։*

Հեղափոխական պրոլետարիատի միջազգային կազմակերպությունները. — *Կոմինտերնը միացնում ե համաշխարհային պրոլետարիատի ավանգարդը։ Նրա ղեկավարության տակ աշխատում են պրոլետարական միջազգային մի շարք ուրիշ միություններ, վորոնցից ամենակարևորները հետևյալներն են՝*

ԿԻՄ *(Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալ).—Միացնում ե բոլոր յերկրների կոմունիստական յերիտասարդական միությունները. Նրա աշխատանքի և խնդիրների մասին խոսելու յենք ներքևում։*

Կանանց միջազգային քարտուղարություն. — *ղեկավարում ե կանանց կոմունիստական շարժումը։*

Պրոֆմիությունների Կարմիր Ինտերնացիոնալ. — *միացնում ե բուրժուազիայի դեմ դասակարգային անհաշտ պայքար մղելու, հեղափոխության միջոցով իշխանությունը գրավելու և պրոլետարիատի դիկտատուրան հաստատելու պլատֆորմի վրա կանգնած հեղափոխական պրոֆմիությունները։ Հակառակ դեղին-համաձայնողական պրոֆմիությունների Ինտերնացիոնալի (Ամստերդամի), Պրոֆինտերնը յուր շարքերում միացնում ե վոչ միայն յեվրոպական պրոֆմիությունները, այլ և գաղութային ու կիսագաղութային պրոֆմիությունները, հանդիսանալով պրոլետարական համաշխարհային կազմակերպություն։*

Մի քանի տարիների ընթացքում Պրոֆինտերնը դարձավ, ներկայումս յուր շարքերում Ամստերդամի Ինտերնացիոնալից ավելի շատ բանվորներ ընդգրկող մի զորեղ կազմակերպություն, վորն ունի 13.862.000 անդամ։ Սակայն արևմտա-յեվրոպական արհեստակցական շարժման մեջ ծանրակշռությունը տակավին մնում ե Ամստերդամի կողմը։

Գյուղինտերն. — *մի կազմակերպություն ե, վորը ծագել ե միջազգային I գյուղացիական կոնֆերենցիայից (1923 թ.) հետո։ Նրա գլխավոր խնդիրը և նպատակն ե ղեկավարել կապիտալիստական յերկրներում գոյություն ունեցող գյուղացիության տնտեսական և քաղաքական կազմակերպությունները և սահմանել ամենասերտ համագործակցություն բոլոր յերկրների բանվոր դասակարգի և գյուղացիության կազմակերպությունների միջև։*

Պրոլետարական հեղափոխության մարտիկներին ոգնող միջազգային ընկերություն *(ՄՈՊՐ)* **յեվ Մեժրաբպոմ** *(Միջազգ. բանվ. ոգն.) — հանդիսանում են սպիտակ տեռորի զոհերին և կապիտալիստական բանտերում տառապող հեղափոխական կալանավորներին ոգնող կազմակերպություններ։*

Սպորտինտերն. — *Նպատակն ե ղեկավարել պրոլետարական սպորտային շարժումը։*

Այս բոլոր կազմակերպությունները ճանաչում են և ընդունում Կոմունիստական Ինտերնացիոնալի ղեկավարությունը և աշխատանք են տանում սերտ կապ ունենալով Նրա հետ։ Նրանք սպասարկում են պրոլետարական միջազգային հեղափոխական շարժման բազմազան պահանջները և Կոմունիստական Ինտերնացիոնալի շուրջը համախմբում բանվորական լայն մասսաներ։

Կոմինտերնի հակառակորդները. — *Բուրժուազիան, կոմկուսների գործունեությունը հետապնդելով, կոմունիստներին բանտերը գցելով, նրանց աշխատանքն աքսորով, մահվամբ պատժելով, կատաղի պայքար ե մղում Կոմինտերնի դեմ։ Նրա հավատարիմ ծառան և ոգնականը հանդիսանում ե, իրենից բուրժուազիայի իսկական գործակալությունը ներկայացնող միջազգային սոցիալ-դեմոկրատիան։ Իմպերիալիստական պատերազմի հենց առաջին որերից սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները դավաճանեցին պրոլետարիատին և վոմանք բացե ի բաց բուրժուական հայրենիքը պաշտպանելու և իրենց բուրժուազիային ոգնելու լոզունգը հայտարարելով, իսկ վոմանք ել (ցենտրիստները), ծածկելով այդ մատնությունը, բացարձակ կերպով անցան բուրժուազիայի բանակը։ Այդ ժամանակից սոցիալ-դեմոկրատիան, վերածվելով բացարձակ հակահեղափոխական մի ուժի, ֆաշիզմի հետ միասին հանդիսանալով կապիտալիստական հասարակակարգի վերջին ամրոցը՝ վերջնականապես հրաժարվել ե սոցիալիզմից։*

* *Այդ թվի մեջ հաշված ե նաև Համամիութենական Կոմունիստական Կուսակցությունը (բոլշևիկների)։*

յերկրների պրոլետարների հետ՝ մի միասնական հեղափոխական բանակի մեջ։ Ներկայումս Կոմինտերնում գտնվում են 45 առանձին կուսակցություններ, վորոնց անդամների ընդհանուր թիվը հավասար ե 2 միլիոնի։*

Հեղափոխական պրոլետարիատի միջազգային կազմակերպությունները. — Կոմինտերնը միացնում ե համաշխարհային պրոլետարիատի ավանգարդը։ Նրա ղեկավարության տակ աշխատում են պրոլետարական միջազգային մի շարք ուրիշ միություններ, վորոնցից ամենակարևորները հետևյալներն են՝

ԿԻՄ (Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալ).—Միացնում ե բոլոր յերկրների կոմունիստական յերիտասարդական միությունները. Նրա աշխատանքի և խնդիրների մասին խոսելու յենք ներքևում։

Կանանց միջազգային քարտուղարություն. — ղեկավարում ե կանանց կոմունիստական շարժումը։

Պրոֆմիությունների Կարմիր Ինտերնացիոնալ. — միացնում ե բուրժուազիայի դեմ դասակարգային անհաշտ պայքար մղելու, հեղափոխության միջոցով իշխանությունը գրավելու և պրոլետարիատի դիկտատուրան հաստատելու պլատֆորմի վրա կանգնած հեղափոխական պրոֆմիությունները։ Հակառակ դեղին-համաձայնողական պրոֆմիությունների Ինտերնացիոնալի (Ամստերդամի), Պրոֆինտերնը յուր շարքերում միացնում ե վոչ միայն յեվրոպական պրոֆմիությունները, այլ և գաղութային ու կիսագաղութային պրոֆմիությունները, հանդիսանալով պրոլետարական համաշխարհային կազմակերպություն։

Մի քանի տարիների ընթացքում Պրոֆինտերնը դարձավ, ներկայումս յուր շարքերում Ամստերդամի Ինտերնացիոնալից ավելի շատ բանվորներ ընդգրկող մի զորեղ կազմակերպություն, վորն ունի 13.862.000 անդամ։ Սակայն արևմտա-յեվրոպական արհեստակցական շարժման մեջ ծանրակշռությունը տակավին մնում ե Ամստերդամի կողմը։

Գյուղինտերն. — մի կազմակերպություն ե, վորը ծագել ե միջազգային I գյուղացիական կոնֆերենցիայից (1923 թ.) հետո։ Նրա գլխավոր խնդիրը և նպատակն ե ղեկավարել կապի-

* Այդ թվի մեջ հաշված ե նաև Համամիութենական Կոմունիստական Կուսակցությունը (բոլշևիկների)։

տալիստական յերկրներում գոյություն ունեցող գյուղացիության տնտեսական և քաղաքական կազմակերպությունները և սահմանել ամենասերտ համագործակցություն բոլոր յերկրների բանվոր դասակարգի և գյուղացիության կազմակերպությունների միջև։

Պրոլետարական հեղափոխության մարտիկներին ոգնող միջազգային ընկերություն (ՄՈՊՐ) **յեվ Մեժրաբպոմ** (Միջազգ. բանվ. ոգն.) — հանդիսանում են սպիտակ տեռորի զոհերին և կապիտալիստական բանտերում տառապող հեղափոխական կալանավորներին ոգնող կազմակերպություններ։

Սպորտինտերն. — Նպատակն ե ղեկավարել պրոլետարական սպորտային շարժումը։

Այս բոլոր կազմակերպությունները ճանաչում են և ընդունում Կոմունիստական Ինտերնացիոնալի ղեկավարությունը և աշխատանք են տանում սերտ կապ ունենալով Նրա հետ։ Նրանք սպասարկում են պրոլետարական միջազգային հեղափոխական շարժման բազմազան պահանջները և Կոմունիստական Ինտերնացիոնալի շուրջը համախմբում բանվորական լայն մասսաներ։

Կոմինտերնի հակառակորդները. — Բուրժուազիան, կոմկուսների գործնեյությունը հետապնդելով, կոմունիստներին բանտերը գցելով, նրանց աշխատանքն աքսորով, մահվամբ պատժելով, կատաղի պայքար ե մղում Կոմինտերնի դեմ։ Նրա հավատարիմ ծառան և ոգնականը հանդիսանում ե, իրենից բուրժուազիայի իսկական գործակալությունը ներկայացնող միջազգային սոցիալ-դեմոկրատիան։ Իմպերիալիստական պատերազմի հենց առաջին որերից սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները դավաճանեցին պրոլետարիատին և վոմանք բացե ի բաց բուրժուական հայրենիքը պաշտպանելու և իրենց բուրժուազիային ոգնելու լոզունգը հայտարարելով, իսկ վոմանք ել (ցենտրիստները), ծածկելով այդ մատնությունը, բացարձակ կերպով անցան բուրժուազիայի բանակը։ Այդ ժամանակից սոցիալ-դեմոկրատիան, վերածվելով բացարձակ հակահեղափոխական մի ուժի, ֆաշիզմի հետ միասին հանդիսանալով կապիտալիստական հասարակարգի վերջին ամրոցը՝ վերջնականապես հրաժարվել ե սոցիալիզմից։

Սոցիալ-դեմոկրատիան կտրել է ամեն մի կապ մարքսիզմի հետ։ Նա հերքում է Մարքսի ուսմունքը դասակարգային պայքարի, պրոլետարիատի դիկտատուրայի և կապիտալիզմի կործանումը բերող համաշխարհային հեղափոխության անխուսափելիության մասին։ Դրա փոխարեն նա քարոզում է դասակարգային հաշտություն և դասակարգային համագործակցություն, սովորեցնում է բանվոր դասակարգին, վոր սոցիալիզմին կարելի յե հասնել խաղաղ ճանապարհով, բուրժուական դեմոկրատիայի, բուրժուական պարլամենտի և այլն միջոցով։

— Ինչու՞ ավելորդ կռվել պրոլետարիատի դիկտատուրայի համար, ինչու՞ ավելորդ տանել ծանր, խոշոր զոհեր պահանջող հեղափոխական պայքար կապիտալիզմի դեմ — ասում են սոցիալ-դեմոկրատները, — յերբ, իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքը գցելու համար, և աստիճանաբար, առանց հեղափոխության ու քայքայումների՝ սոցիալիզմին անցնելու համար բավական է պարլամենտում ստանալ միայն մեծամասնություն։ Այդ պատճառով էլ սոցիալ-դեմոկրատիան բանվոր դասակարգին կոչ է անում վոչ թե դասակարգային պայքարի, այլ դասակարգային խաղաղության, բուրժուազիայի հետ համաձայնվելու և համագործակցելու, կոչ է անում կապիտալիստական կարգերն ամրացնելու և վոչ թե խորտակելու ու քայքայելու։ Այսպիսի ճանապարհով սոցիալ-դեմոկրատիան քայքայում է մտցնում բանվորական մասսաների շարքերում, կասեցնում է նրանց ուշադրությունը պրոլետարիատի հեղափոխական խնդիրներից և բանվոր դասակարգին դարձնում է բուրժուազիայի ծառան։ Սոցիալ-դեմոկրատիան, 1918—1919 թ.թ. հեղափոխական ճակատամարտների ժամանակ, կապիտալիզմը կործանումից ազատեց նրանով, վոր կանգնեց բուրժուազիայի կողմը և ոգնեց նրան ջախջախել կապիտալիզմի վրա հարձակվող պրոլետարական մասսաներին։ Ամեն մարդ գիտե, թե ինչպես հայտնի դարձավ, որինակի համար, հեղափոխական բանվորների կողմից «արյունարբու շուն» կոչվող գերմանական սոցիալ-դեմոկրատ Նոսկեն։ Սոցիալ-դեմոկրատիան ոգնեց բուրժուազիային անցնել հարձակման՝ բանվոր դասակարգի վրա։ Ամբողջապես մի սովորական բուրժուական կուսակցություն դարձած սոցիալ-դեմոկրատիային վոչ թե վախն է ստիպում, այլ յուր սեփական ցանկությունը՝ ոգնել բուրժուազիային կապիտալիզմն ամրացնելու և թշնամիներից այն պաշտպանելու համար։ Կատարելով բուրժուազիայի կամքը, սոցիալ-դեմոկրատիան դաժան պայքար է մղում կոմինտերնի դեմ և բամբասում, կատաղի հարձակումներ է գործում ԽՍՀՄ վրա։

Սոցիալ-դեմոկրատիայի մեջ գոյություն ունի այսպես կոչված «աջ» թև, վորի մեջ մտնում են ֆաշիստներին շատ մոտիկ կանգնած, բանվոր դասակարգին բացարձակ կերպով և առանց ամաչելու դավաճանող և նույնիսկ բուրժուազիայի հետ իրենց ունեցած կապերի վրա հպարտացող ամենաթունդ և ամենահայտնի ռեակցիոններներ. բացի դրանից կա և «ձախ» թև, վորն արտաքուստ դժգոհություն է ցույց տալիս այդպիսի քաղաքականության դեմ և լոկ խոսքով է ընդունում դասակարգային պայքարի անհրաժեշտությունը բուրժուազիայի դեմ։ Ձախ սոցիալ-դեմոկրատները փաստորեն ծածկում են աջերի բացարձակ դավաճան և մատնիչ աշխատանքը։ Նրանք, պրոլետարիատի հեղափոխական խնդիրների տեսակետից, խաղում են ավելի վնասակար դեր, վորովհետև նրանք սոցիալ-դեմոկրատական քաղաքականությունից հիասթափվող և դեպի հեղափոխական բանակը ձգտող բանվորներին պահում են սոցիալ-դեմոկրատիայի շարքերում, հեղափոխական ֆրազներով քնացնում են բանվորական մասսաների դասակարգային արթնությունը և այդպիսով խանգարում ու չեն թողնում, վոր այդ մասսաներն անցնեն կոմունիստների կողմը։ Դասակարգային բախումների և ճակատամարտների ժամանակ ձախ սոցիալ-դեմոկրատներն աշխատում են գլխավորել պայքարող պրոլետարիատը նրա համար, վորպեսզի վճռական մոմենտին դավաճանեն բանվոր դասակարգին և դյուրացնեն նրան ջախջախելը։ Դրան վորպես ցայտուն որինակ ցույց տվին, որինակի համար, Գենսովետի «ձախ» պարագլուխները ընդհանուր գործադուլի ժամանակ 1926 թ. Անգլիայում, ավստրիական «ձախ» սոցիալ-դեմոկրատները 1927 թ. Վեննայի ապստամբության որերին։ Նույնը հաստատվում է կապիտալի յերկրներում ամենորյա դասակարգային պայքարի անհաշիվ որինակներով։

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները միացված են II Ինտերնացիոնալի մեջ։* Սակայն Կոմինտերնից տարբեր II Ին-

* Առաջին Ինտերնացիոնալը հիմնեցին Մարքսը և Ենգելսը 1864 թվին։ II Ինտերնացիոնալը հիմնվեց 1889 թվին. իմպերիալիստական պատերազմի տարիներին նրանից դուրս յեկան մեր բոլշևիկյան կուսակցությունը և գերմանական Սպարտակ միությունը (վորն անելով ստեղծեց գերմանական կոմկուսը) և մյուս

տերնացիոնալը նպատակ չունի պայքարելու պրոլետարական դիկտատուրայի համար։ Նրան հարկավոր չէ հեղափոխական մարտական կազմակերպություն, հարկավոր չէ պողպատյա կարգապահություն, վորոնք պրոլետարական կուսակցությունից պատրաստում են զրահապատ բռունցք, վորը պատրաստ է իջնելու բուրժուազիայի գլխին։ II Ինտերնացիոնալը հանդիսանում է ամենատարբեր գույներ ունեցող կուսակցությունների մի միություն, կուսակցությունների, վորոնց միակ ընդհանուր կողմը հանդիսանում է բուրժուազիային նվիրված լինելը և կոմունիզմը ատելը, և վորոնց համար հենց իրենց Ինտերնացիոնալի (վորի մեջ իրենք մտնում են) վորոշումները պարտադիր չեն հանդիսանում։

Կազմակերպության այդպիսի բնույթը յուրաքանչյուր «սոցիալիստական» կուսակցության լայն ասպարեզ է տալիս ծառայելու յուր սեփական բուրժուազիային այնպես, ինչպես դա պահանջում է վերջինս։

II Ինտերնացիոնալի հետ սերտ կապերի մեջ է գտնվում ռեֆորմիստական պրոֆմիությունների միջազգային միությունը, այսպես կոչված Ամստերդամի Ինտերնացիոնալը։ Դեղին պրոֆմիությունների ղեկավարներն ավելի բացահայտ հակահեղափոխականներ են, քան նույնիսկ աջ սոցիալ-դեմոկրատները։ Նրանք կապիտալիստների հետ գտնվում են սերտ միության մեջ։ Ծախվածությունը և կաշառակերությունը նրանց մեջ և ընդհանրապես սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական բոլոր գործիչների մեջ, հասել է ամենախոշոր չափերի։ Այդ «բանվոր ղեկավար»-ներից շատերը կապիտալիստներից ռոճիկ են ստանում իրենց դավաճանության համար։ Վերջին ժամանակներս ռեֆորմիստական պրոֆմիությունների ղեկավարները փաստորեն այնքան սերտորեն են ձուլվել կապիտալիստական-ձեռնարկատիրական միությունների հետ, վոր կարծես թե դարձել են նրանց բաղադրիչ մասերը, նրանց «բանվորական բաժինները», վորոնք նպաստում են կապիտալիստական ռացիոնալիզացիայի անցկացման, վորոնք հետևում են, վորպեսզի տվյալ ճյուղի ձեռնարկությունների մեջ չբանկվի գործադուլ, նպաստում են՝ վորպեսզի բանվորներից դուրս քամվի վորքան կարելի յե ավելի շատ աշխատանք և այլն։

յերկրների կոմունիստական խմբակները։ Մեր բոլշևիկյան կուսակցությունը մյուս յերկրների կոմկուսների հետ միասին 1919 թվին Մոսկվայում III Ինտերնացիոնալի հիմքը դրեց։

Ամստերդամի Ինտերնացիոնալի ամբողջ գործնեյության դավաճան և մատնիչ բնույթն այնքան ակնհայտ է, վոր նրա շարքերից տարեց-տարի գնալով հեռանում են բանվորական ավելի ու ավելի խոշոր մասսաներ։

1919 թվից մինչև հիմա Ամստերդամի Ինտերնացիոնալի անդամների թիվը յերկու անգամով պակասել է—23 միլիոնից իջել է մինչև 12.840.000։ Այս տվյալները ցայտուն կերպով նկարում են Ամստերդամի՝ բանվորների վրա ունեցած բարոյական ազդեցության կատաստրոֆիկ անկումը (Ամստերդամի Ինտերնացիոնալի շարքերում գոյություն ունի Պրոֆինտերնի կողմնակիցներից բաղկացած բավական ուժեղ ոպպոզիցիա)։

Սակայն Ամստերդամի Ինտերնացիոնալը և համաձայնողական պրոֆմիութենական կազմակերպություններն, առանձին յերկրներում, հենվելով լավ վարձատրվող պրոֆմիութենական չինովնիկության ահագին բանակի և կոմունիստների ազդեցության դեմ բուրժուական կառավարությունների ցույց տված ուղղակի ոգնության վրա, առայժմ պրոֆմիութենական ապարատը գաղափարականապես պահում են իրենց ձեռքերում։

Բայց Կոմինտերնի դեմ կանգնած են վոչ միայն II և Ամստերդամի Ինտերնացիոնալները։ Կապիտալիստական յերկրների բանվորական շարժման մեջ գոյություն ունի, բացի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններից, ամենաբազմապիսի ծրագրներով և հայացքներով՝ վոչ-կոմունիստական կազմակերպությունների նշանակալի քանակություն—անարխիստների, սինդիկալիստների, քրիստոնեական սոցիալիստների և այլն։ Սրանք բոլորն էլ իրենց ուժերի չափ ոգնում են բուրժուազիային, վորովհետև պառակտում են բանվոր դասակարգի շարքերի միասնականությունը, կասեցնում են բանվորների ուշադրությունը պրոլետարիատի դիկտատուրայի և կոմունիզմի համար մղվող հեղափոխական պայքարից։ Սակայն սոցիալ-դեմոկրատիան, ունենալով մասսաների վրա ամենամեծ ազդեցություն և ամենաշատ դավաճանության ստաժ, մնում է պրոլետարիատի ամենադաժան թշնամին և հանդիսանում է ամենամեծ խոչընդոտը՝ պրոլետարների մեծ մասին կոմունիզմի կողմը նվաճելու գործում։

Համաձայնողական սոցիալ-դեմոկրատական ու նրա նման կուսակցությունների և դեղին պրոֆմիությունների ուժի ու բանվոր

դասակարգի վրա ունեցած ազդեցության հիմնական պատճառներից մեկը հանդիսանում է (առանձնապես ավելի հարուստ և ամենազորեղ կապիտալիստական յերկրներում՝ Միացյալ Նահանգներ, Անգլիա) այսպես կոչված **բանվորական արիստոկրատիայի**, այսինքն բանվոր դասակարգի վորակյալ վերխուշկայի, առկայությունը։ Այդ արիստոկրատիային կապիտալիստական յերկրների բուրժուազիան, գաղութների և շարքային բանվորների անհագին շահագործման հաշվին վճարելով բարձր աշխատավարձ, հնարավորություն ունի գնելու, կաշառելու և այլասերելու։ Վորքան ավելի հարուստ է տվյալ կապիտալիստական յերկիրը, այնքան նա ավելի շատ հնարավորություն ունի թալանելու գաղութային և կիսագաղութային մյուս յերկրները, այնքան ավելի շատ վորակյալ բանվորների լայն շերտեր կարող է գնել բարձր աշխատավարձի միջոցով, շահագրգռել նրանց յուր իմպերիալիստական քաղաքականության, գաղութները թալանելու մեջ և գրավել, հեռու պահել կոմունիզմի համար մղվող պայքարից։ Հենց այդ պատճառով է, վոր համաձայնողականությունն ավելի կայուն և ամուր արմատներ միշտ էլ ունեցել է կապիտալիզմի այնպիսի հարուստ յերկրներում, ինչպիսին են Միացյալ Նահանգները, Անգլիան, և ընդհակառակը, ամենաթույլ արմատներն ունեցել է այնպիսի յետամնաց յերկրում, ինչպիսին հին Ռուսաստանն էր, վորտեղ բուրժուազիան ի վիճակի չէր բարձր աշխատավարձի միջոցով այլասերել բանվոր դասակարգի վերին շերտերը։ Հենց դրա շնորհիվ է, վոր այն ժամանակից, յերբ սկսեց տատանվել Անգլիայի տնտեսական հզորությունը, այդ յերկրի կոմունիստները բանվորական շարժման մեջ սկսեցին ունենալ հաջողություն և ազդեցություն բանվորական մասսաների վրա։

2. ՊԱՅՔԱՐ՝ ՄԱՍՍԱՆԵՐԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կոմունիստական կուսակցությունները կհասնեն հաղթանակի և կապիտալիզմի տապալման միայն այն դեպքում, յերբ նրանց յետևից գնա բանվոր դասակարգի ճնշող մեծամասնությունը։

Այնինչ, արևմտա-յեվրոպական և ամերիկական պրոլետարիատի տակավին լայն մասսաները գնում են սոցիալ-դեմոկրատիայի յետևից։ Բացի դրանից կան նաև քրիստոնեական և ֆաշիստական պրոֆմիությունների ազդեցության տակ գտնվող բանվորների խմբեր։ Վերջապես կան պրոլետարիատի յետամնաց խավեր, վորոնք քաղաքական կյանքից մի կողմ են կանգնած։ **Կոմինտերնի հիմնական խնդիրը ներկա շրջանում հանդիսանում է՝ բանվոր դասակարգի մեծամասնությունը յուր կողմը նվաճել, լայն մասսաներին դաստիարակել և նախապատրաստել հեղափոխական պայքարի համար՝ հանուն իշխանության և պրոլետարական դիկտատուրայի։**

Միասնական Ֆրոնտի տակտիկան։ — Պրոլետարական մասսաների նվաճման անհրաժեշտ պայմանը հանդիսանում է՝ կոմկուսների սերտ կապը մասսաների հետ, նրանց առորյա կարիքները գիտենալը և ամենորյա պայքարը ղեկավարելը։ Բանվորական մասսաներն իրենց սեփական կյանքի և պայքարի փաստերով պետք է հաստատ համոզվեն, վոր միակ, իսկական պրոլետարական կուսակցությունը հանդիսանում է կոմունիստական կուսակցությունը և վոր սոցիալ-դեմոկրատիան բուրժուազիայի լրտեսն է բանվորական բանակում։ Սոցիալ-դեմոկրատիայի յետևից դեռևս գնացող բանվոր դասակարգի խավերին սոցիալ-դեմոկրատիայից խլելու և նրանց կոմունիզմի կողմը նվաճելու գործին նպաստում է կոմկուսների ամբողջ նախահեղափոխական շրջանի տակտիկայի կարևորագույն բաղադրիչ մասը կազմող՝ **միասնական ֆրոնտի տակտիկան**։ Վո՞րն է այդ տակտիկայի էությունը։

Կապիտալի հարձակումը հարվածում է բանվորների բոլոր խավերին։ Նրա դեմ մղվող պայքարը հաջող կարող է լինել միայն այն պայմանով, յեթե դա միահամուռ կերպով մղեն պրոլետարական ամենալայն մասսաները։

Կան մի շարք այնպիսի հարցեր, ինչպես, որինակ, պայքար աշխատավարձի բարձրացման, բանվորական որվա կրճատման համար, պայքար տուրքերի ծանրության և ճնշման դեմ, պայքար ֆաշիզմի, պատերազմի վտանգի դեմ և այլն, վորոնք ուժեղ կերպով և առանց բացառության հետաքրքրում և անհանգստացնում են բոլոր բանվորներին։ **Կոմունիստներն առաջարկում են բանվորներին, անկախ նրանից, թե ինչպիսի կուսակցությունների յեն նրանք պատկա-**

նում, այդպիսի հարցերի համար պայքարելու, հաղթանակի հասնելու համար, ստեղծել միասնական ֆրոնտ, դուրս գալ միասին։ Սոցիալ-դեմոկրատիան յուր կողմից համարյա միշտ էլ միասնական ֆրոնտի դեմ է դուրս գալիս, ընդհանուր պայքարից հրաժարվելով կամ դա հարմար և բուրժուազիայի ամենաոգտակար մոմենտին խանգարելով։ Սակայն, շնորհիվ դրա, այն բանվորները, վորոնք գտնվում են սոցիալ-դեմոկրատիայի ազդեցության տակ, սկսում են հասկանալ, թե ո՞ւմ է ծառայում սոցիալ-դեմոկրատիան, սկսում են հասկանալ նրա դավաճան և մատնիչ աշխատանքը, հեռանում են նրանից և անցնում կոմկուսների կողմը։ Այսպես — սոցիալ-դեմոկրատական ղեկավարների կամքին հակառակ — սոցիալ-դեմոկրատ բանվորները կոմունիստների հետ ձեռք-ձեռքի տված պայքարելով և աստիճանաբար սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունից ազատվելով, կապիտալի հարձակման դեմ մղվող ամենորյա պայքարի ընթացքում սովորում են սահմանել միասնականություն ներքևից։ Հենց այդ պայքարի ընթացքում նրանք համոզվում են, վոր հասնել իրենց դրության լուրջ բարելավման, այսինքն վոչնչացնել այն բոլոր վիշտն ու տառապանքը (մասսայի համար) վորոնց հետ, անքակտելի կերպով կապված է կապիտալիզմի գոյությունը, — կարելի յե միայն պրոլետարական հեղափոխության միջոցով։ Այսպես, յելնելով վորևե մասնավոր պահանջից (որինակ, պայքար բանվորական որվա յերկարացման դեմ և այլն), կոմունիստները պրոլետարական մասսաների գիտակցությունն այնքան են բարձրացնում, վոր նրանք հասկանում են հեղափոխության, իշխանությունը խլելու և պրոլետարիատի դիկտատուրան հաստատելու անհրաժեշտությունը։ Կոմունիստական կուսակցությունները, յելնելով պրոլետարական մասսաների առորյա կարիքներից, առաջադրելով մասնակի լոզունգներ և պահանջներ, այդ մասսաներին զարգացնելով և կապելով Կոմինտերնի հիմնական խնդիրների հետ, նրանց մոտեցնում են պրոլետարական դիրքերին այնպես, վոր նրանք իրենց սեփական փորձի վրա համոզվեն, վոր կուսակցության գիծը ճիշտ է։

Մասսաները նվաճելու համար մղվող պայքարը կոմունիստական կուսակցություններից պահանջում է առանձին ուշադրություն դարձնել պրոֆմիությունների աշխատանքի վրա։

Պրոֆեսիոնալ միությունները հանդիսանում են բանվոր դասակարգի առորյա կարիքներն ապահովելու նպատակ ունեցող, ամենալայն, ամենամասսայական պրոլետարական կազմակերպությունները։ Պրոֆմիությունների նվաճումը՝ մասսաների նվաճումն է։

Կապիտալիստական յերկրների պրոֆմիությունները մեծ մասամբ գտնվում են պրոֆմիությունների ապարատն իրենց ձեռքում պինդ պահող և կապիտալիստներին հավատարիմ ու ճշմարիտ ծառայող՝ ամենաչար ու դաժան, ամենաստոր ու կեղտոտ ոպորտունիստների ձեռքը։ Սակայն, չնայած դրան, կամ ավելի ճիշտն ասած, այդ պատճառով էլ Կոմինտերնը պարտադրում է Կոմունիստական կուսակցությունների բոլոր անդամներին մտնել համաձայնողական պրոֆմիությունների մեջ, վորպեսզի նրանց ստիպել յերես դարձնել դեղին առաջնորդներից և դառնալ կոմկուսների հենարանը։

Պրոֆեսիոնալ միություններում գտնվող համաձայնողականների վոտքի տակի հողը խախտելու համար Կոմինտերնը և Պրոֆինտերնը առաջադրել են պրոֆշարժման միասնականության լոզունգը։ Այդ լոզունգն առաջադրված է գլխավորապես ծայրահեղ ձախ տեսակետի դեմ, վորը չի հասկանում պրոֆմիությունները նվաճելու համար աշխատանք տանելու կարևորությունը, թեկուզ դա լինի ռեակցիոն պրոֆմիություններում, և ձգտում է պրոֆմիությունների փոխարեն ստեղծել նոր կազմակերպություններ։ Այդպիսի տեսակետը վերին աստիճանի վտանգավոր է, վորովհետև կոմունիստների դուրս գալը պրոֆմիություններից, ռեակցիոն պրոֆմիությունների մեջ աշխատելուց հրաժարվելը, կոմունիստներին մեկուսացնելու յեր անկուսակցական և սոցիալ-դեմոկրատական բանվորական մասսաներից և այդպիսով ջուր եր լցնելու սոցիալ-դեմոկրատ առաջնորդների ջրաղացին։

Կոմունիստների աշխատանքը համաձայնողական պրոֆմիություններում հանդիպում է շատ խոշոր դժվարությունների։ Յերկար տարիներ ամբողջ կազմակերպչական թելերն ու կապերն իրենց ձեռքերում պահող պրոֆմիությունների դեղին առաջնորդները կատաղի կերպով պայքարում են կոմունիստների դեմ, նրանց դուրս հանելով պրոֆմիություններից, թույլ չտալով ակ-

ռիվ աշխատանք կատարելու՝ շարունակ հարձակվելով շատ թե քիչ հեղափոխականորեն տրամադրված բանվորների վրա և այլն: Կարիք չկա խոսելու այն մասին, վոր համաձայնողականները կոմունիստների դեմ պայքարելու ընթացքում խոշոր ոգնություն են ստանում կապիտալիստներից: Չնայելով դրան, կոմկուսներն ուժեղացնում են իրենց ազդեցությունը պրոֆմիությունների վրա և աստիճանաբար սկսում են նրանց նվաճել իրենց կողմը: Սոցիալ-դեմոկրատները թուլացնում են բանվոր դասակարգի դիմադրությունը կապիտալիստների գրոհի դեմ, վիժեցնում են գործադուլները, խանգարում են բանվոր դասակարգի առօրյա տընտեսական պայքարը: 1926 թ. ընդհանուր գործադուլի դասերը Անգլիայում, վերջին տարիներս Գերմանիայում տեղի ունեցած գործադուլային շարժման դասերը, մի խոսքով՝ կարելի յե ասել՝ յետպատերազմյան շրջանի պրոֆեսիոնալ շարժման ամբողջ փորձը պրոֆմիությունների դեղին առաջնորդների վրա եժան չի նստում: Կոմունիստների հեղափոխական աշխատանքի հողը պրոֆմիություններում տարեց-տարի ընդլայնվում է. կապիտալի հարձակումը բանվոր դասակարգի վրա Արևմտյան Յեվրոպայում առաջ է բերելու թե պրոլետարիատի հետզհետե լայն աճող դիմադրություն և թե սոցիալ-դեմոկրատիայի ու դեղին պրոֆմիությունների ղեկավարների նորանոր փորձեր՝ պրոլետարական մասսաների պայքարը խանգարելու համար: Սակայն Արևմուտքում տակավին վոչ բոլոր կոմկուսներն են սովորել ճիշտ դնել աշխատանքը պրոֆմիություններում և նրանց վրա իրենց ազդեցությունը տարածել: Կոմունիստների աշխատանքի ուժեղացումը պրոֆշարժման մեջ հանդիսանալու յե կոմունիզմի կարևորագույն զենքերից մեկը՝ սոցիալ-դեմոկրատների վրա հաղթանակ տանելու գործում:

Պայքար՝ գյուղացիության համար.— Պրոլետարական հեղափոխության հաջողությունը պահանջում է, վոր բանվոր դասակարգը մենակ չպայքարի կապիտալիզմի դեմ, այլ տանի յուր յետևից աշխատավորության լայն մասսաները և առաջին հերթին՝ գյուղացիությանը: Կապիտալիզմի տապալումը և խորհրդային կարգերին անցնելը համապատասխանում է գյուղացիության հիմնական խավերի շահերին, վորովհետև կապիտալիզմն ամենուրեք շահագործում է, ճնշում և կեղեքում գյուղացիությանը և տանում է

նրան դեպի տնտեսական անխուսափելի անկում: Շատ յերկրներում գյուղացիությունը տակավին գտնվում է կալվածատերերի ստրկության մեջ: Ամենուրեք տուրքերի գլխավոր ծանրությունը բուրժուազիան գցում է պրոլետարիատի և գյուղացիության վրա: Ամենուրեք աճում են գյուղացիության պարտքերը, նրա կախումը բանկերից, վորոնց նա վճարում է հսկայական տոկոսներ: Այդ պատճառով էլ տարեց-տարի կապիտալիստական բոլոր յերկրներում տեղի յե ունենում, իրենից պրոլետարիատի նորանոր կադրեր տվող, գյուղացիության նշանակալի շերտերի քայքայում:

Գյուղացիությունը հանդիսանում է, հաճախ յուր իսկական շահերը չգիտակցող և կուրորեն բուրժուազիայի յետևից գնացող, կապիտալիստական հասարակակարգի ավելի խավար ու քաղաքականապես ավելի յետամնաց դասակարգը: Այդ պատճառով էլ կապիտալիստական բոլոր յերկրների բանվոր դասակարգի խնդիրը հանդիսանում է՝ դուրս կորզել գյուղացիությունը բուրժուազիայի ազդեցության տակից և կապիտալիզմի ռեժիմից նրան դարձնել բանվոր դասակարգի դաշնակից: Կոմինտերնը յուր գոյության առաջին որերից այդ նպատակը յուր ամբողջ ծավալով դրել է կոմունիստական կուսակցությունների առաջ:

«Պրոլետարիատը հանդիսանում է իսկական հեղափոխական, իսկական սոցիալիստականորեն գործող դասակարգ միայն շնորհիվ նրա, վոր նա դուրս է գալիս և գործում է վորպես ամբողջ աշխատավորության և շահագործվողների ավանգարդ, վորպես նրանց առաջնորդ՝ շահագործողներին տապալելու պայքարում, իսկ դա անիրագործելի յե՝ առանց գյուղում դասակարգային պայքար մտցնելուց, առանց գյուղի աշխատավոր մասսաներին քաղաքի պրոլետարիատի, կոմունիստական կուսակցության շուրջը համախմբելու, առանց առաջինների դաստիարակության յերկրորդների կողմից»: Լենինյան այս միտքը (Կոմինտերնի II կոնգրեսի բանաձևից՝ ագրարային հարցի մասին) Կոմինտերնի ամբողջ գործունեության մեջ հանդիսանում է վորպես ղեկավարող

սկզբունք։ Ըստ որում կոմինտերնը յելնում է նրանից, որ գյուղայիությունը միատարր չէ և որ նրա ոչ բոլոր շերտերը կարող են լինել բանվոր դասակարգի ակտիվ դաշնակիցներ։ Գյուղատնտեսական բանվորները և գյուղական չքավորությունը, որոնք չեն կարող կերակրվել աշխատելով, իրենց կամ կապալով վերցրած հողի վրա, ստիպված գնում են բատրակություն անում, հանդիսանում են բանվոր դասակարգի ամուր պատվանդանը գյուղում։ Պրոլետարիատը պետք է գործ դնի յուր բոլոր ուժերը, վորպեսզի նրանց դարձնի պրոլետարական հեղափոխության գիտակից մարտիկներ։

Մանր գյուղացիությունը, վորը մի կերպ ծայրը ծայրին է հասցնում և չի դիմում վարձու աշխատանքի, նմանապես, թեև վորոշ տատանումներով, վերջիվերջո հարելու յե պրոլետարական բանակին և կռվելու յե հօգուտ բանվոր դասակարգի, վորովհետև պրոլետարական հեղափոխության հաղթանակից նա միայն օգտվելու յե։

Կապիտալիստական յերկրներում միջակ գյուղացիությունը,* թեև ինքն իրեն կերակրում է գլխավորապես սեփական աշխատանքով, բայց լավ տարիներին կուտակում է վորոշ ավելցուկներ և վարձում բատրակներ։ Այդ պատճառով էլ նա յուր մասսայով չի կարող լինել պրոլետարական հեղափոխության ակտիվ մարտիկ։ Բանվոր դասակարգը պետք է աշխատի, վոր միջակ գյուղացիությունը չհարի պրոլետարական հեղափոխության թշնամիներին և չհանդիսանա բուրժուազիայի ռեզերվը։ Վորովհետև միջակ գյուղացիությունն ակտիվ կերպով չպիտի կռվի հօգուտ բանվոր դասակարգի, ապա հարկավոր է աշխատել, վորպեսզի նա չպաշտպանի նաև բուրժուազիային և այդ պայքարում մնա չեզոք։

Իսկ ինչ վերաբերում է խոշոր գյուղացիությանը, այսինքն կուլակներին, գյուղական կապիտալիստներին, ապա ամբողջապես պարզ է, վոր նրանք ամենուրեք վճռական կերպով կռվելու յեն հօգուտ բուրժուազիայի և լինելու յեն պրոլետարական հեղափոխության թշնամիները։

* Չպետքե շփոթել Արևմուտքի կապիտալիստական յերկրների միջակ գյուղացիությունը մեր միջակ գյուղացիության հետ։ Մեր միջակ գյուղացիությունը յուր մեծ մասով համապատասխանում է Արևմուտքի կապիտալիստական յերկրների մանր գյուղացիությանը։

Արևմուտքի կոմունիստական կուսակցությունները ծավալում են լայն պրոպագանդիստական աշխատանք գյուղացիության մեջ, բացատրելով նրան իրենց նպատակն ու խնդիրները, կազմակերպում են գյուղատնտեսական բանվորներին և գյուղական չքավորությանը։ Առաջադրելով ուժից վեր տուրքերի իջեցման և գյուղացիական պարտքերի թեթևացման պահանջ, պայքարելով միլիտարիզմի դեմ, վոր գյուղացիական յերիտասարդությանը դարձնում է բուրժուազիայի համար թնդանոթի միս, և այլն, կոմկուսներն իրենց ամենորյա աշխատանքով գյուղացիությանը պարզ կերպով ապացուցում են, վոր միայն բանվոր դասակարգն է պայքար տանում հանուն նրա իսկական շահերի և վոր գյուղացիության դրության արմատական բարելավումը կկատարվի միայն պրոլետարական հեղափոխության հաղթանակի շնորհիվ։

Զրույց հինգերորդ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

(Շարունակություն)

1. ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Իմպերիալիզմի որոգ բոլոր թույլ և յետամնաց ժողովուրդներին սարկացրել են կապիտալիստական ուժեղ պետությունները։ Մի բուռն իմպերիալիստական գիշատիչներ իրենց միջև բաժանել են ամբողջ յերկրագունդը։ 1914 թվին յերկրագնդի ամբողջ ազգաբնակչության թիվը հավասար եր 1.786 միլիոն մարդու։ Այդ թվից 930 միլիոնը, այսինքն կեսից ավելին, կազմում եյին ճնշված ժողովուրդները։ Յեվրոպայի և Ամերիկայի բուրժուազիան իշխում ե Ասիայի և Աֆրիկայի հարյուրավոր միլիոն աշխատավորների վրա, տիրում ե նրանց ամբողջ հարստությանը և նրանցից քամում ե ամենավերջին հյութերը։ Մինչև ատամները զինված իմպերիալիստական պետությունները իրենց դրեդնոուտների, տանկերի, ոդանավերի միջոցով ղեկավարում են գաղութային և կիսագաղութային ժողովուրդներին և շատ դաժանորեն են պատժում նրանց՝ սարկությունից ազատվելու ամեն մի փորձը։ Այսպես, միայն տուրքերը չմուծելու համար, Անգլիացիներն ամբողջ գյուղեր հրդեհեցին Հնդկաստանում և ոդանավերից գնդակահարեցին բազմաթիվ հնդիկ գյուղացիների։

Այնպիսի մի փոքրիկ յերկիր, վորպիսին, որինակի համար, Անգլիան ե, վորտեղ ապրում են 50 միլիոնից եվ պակաս անգլիացիներ, տիրում ե Հնդկաստանի, Յեգիպտոսի, Հարավային Աֆրիկայի 430 միլիոն ժողովուրդներին։ Միայն Հնդկաստանում 300 միլիոն հնդիկ, վորպես ստրուկներ, աշխատում են անգլիական բուրժուազիայի ոգտի համար։ Յուրաքանչյուր անգլիացուն ընկնում ե վոչ-անգլիացի 9 ստրուկ։

Իմպերիալիզմը չի կարող գոյություն ունենալ, յեթե չշահագործի գաղութային և կախում ունեցող յերկրները և չճնշի

նրանց։ Պարազիտային շահագործումը գաղութային և կիսագաղութային յերկրների, ուր իմպերիալիստական պետությունները ներմուծում են իրենց կապիտալները և վորտեղից արտահանում են հում նյութ ու դուրս քաշում հսկայական շահույթներ, հանդիսանում ե իմպերիալիզմի տնտեսական կարևորագույն հենարաններից մեկը, առանց վորի իմպերիալիզմի գոյությունն անկարելի յե և անյերևակայելի։ Այդ շահագործումն անընդհատ ուժեղացվում ե։ Նա անխուսափելիորեն առաջ ե բերում իմպերիալիզմի շահագործումից քայքայվող, ճնշված ժողովուրդների ավելի և ավելի աճող ընդդիմադրությունը։ Գաղութային և կիսագաղութային յերկրների ժողովուրդներին իմպերիալիզմի շահագործումից և ճնշումից ազատելու միակ ճանապարհը հանդիսանում ե հեղափոխական պայքարը իմպերիալիզմի դեմ։ Այդ ուղիով արդեն ընթանում են Չինաստանի, Ինդոնեզիայի, Մարոկկոյի բազմամիլիոն մասսաները, նրանով սկսում են ընթանալ անգլիական իմպերիալիզմի կրունկի տակ ճզմված Հնդկաստանի ժողովուրդները։

Կոմինտերնը հսկայական նշանակություն ե տալիս գաղութային և կիսագաղութային ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական պայքարին, ղեկավարվելով այն հայացքներով, վոր Լենինը զարգացրեց 1920 թվին՝ Կոմինտերնի II կոնգրեսում։

Իմպերիալիզմի դեմ ուղղված ազգային հեղափոխական շարժումը հանդիսանում ե միջազգային սոցիալիստական հեղափոխության բաղադրիչ մասը։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակը պահանջում ե յեվրոպական և ամերիկական պրոլետարիատի հեղափոխական պայքարի մերձեցումը, դաշինքը՝ իմպերիալիզմի ճնշման տակ տնքացող և հազիվ շունչ քաշող Արևելքի ժողովուրդների ազգային ազատագրական շարժման հետ։ Միայն ընդհանուր ֆրոնտը իմպերիալիզմի դեմ, միայն Յեվրոպայի և Ամերիկայի պրոլետարիատի ու Ասիայի և Աֆրիկայի աշխատավորական մասսաների միասնական պայքարը կապահովի նրանց վերջնական հաղթանակը և ազատագրումը։ Ճնշող ազգերի պրոլետարիատը պարտավոր ե վճռական կերպով ոգնել ճնշվող ազգերի ազատագրական շարժմանը «յուր հայրենիքի» իմպերիալիզմի դեմ, պաշտպանելով յուրաքանչյուր

ազգի իրավունքը՝ անջատվելու և պետականորեն ինքնուրույն գոյություն ունենալու։ Այսպես, օրինակի համար, անգլիական պրոլետարիատի հեղափոխական պարտքը պետք է լինի՝ օգնել Չինաստանի և Հնդկաստանի ժողովուրդների այն պայքարին, վորը մղվում է հանուն անգլիական իմպերիալիզմի ճնշումից ազատվելու, հանուն Հնդկաստանի և Չինաստանի լիակատար անկախության։ Կոմինտերնը պետք է ամեն կերպ և յուր ամբողջ ուժերով օգնի ազգային-հեղափոխական շարժմանը՝ դա ղեկավարելով, այդ շարժումը տանելով իմպերիալիզմի լուծը տապալելու, խորտակելու, ազատագրված յերկրներում խորհրդային կարգեր հիմնելու վճռողական պայքարի ուղղությամբ։

Թեև գաղութային յերկրներում վերջերս արագ կերպով զարգանում է արդյունաբերությունը և աճում է հեղափոխական հսկայական եներգիա ունեցող յերիտասարդ պրոլետարիատը, բայց այնտեղ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը բաղկացած է գյուղացիությունից։ Ոգնության գալով և ղեկավարելով Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, Կոմինտերնը դրանով իրականացնում է *պրոլետարիատի մերձեցումը, դաշինքը գյուղացիության հետ՝ համաշխարհային մասշտաբով*։

Լենինը ցույց է տալիս և ասում, վոր յետամնաց յերկրները կարող են միանգամից անցնել խորհրդային կարգերին ու սոցիալիզմին, թողնելով կապիտալիստական զարգացման ետապը, վոր կապված է մասսաների ամենածանրագույն տառապանքների ու թշվառության հետ։

Հոկտեմբերյան հեղափոխության օրերից սկսած՝ խորհրդային միությունը, վորը իրենից ներկայացնում է միահամուռ ուժերով սոցիալիստական հասարակություն կառուցող բազմատասնյակ ազատ ժողովուրդների ամուր և սերտ միություն, փարոս է հանդիսանում ճնշված ազգերի համար, նրանց ցույց տալով ազատվելու ամենաճիշտ և ամենահուսալի ճանապարհը և ուժերը ներածին չափ օգնելով Արևելքի ժողովուրդների ազգային-հեղափոխական պայքարին։

Ճնշված ժողովուրդները ԽՍՀՄ կենդանի օրինակի վրա համոզվում են, վոր միայն խորհրդային կարգն է ընդունակ ազատել նրանց, ապահովել ազգային հավասարությունը և ազատ ժողովուրդների յեղբայրական համագործակցությունը։ ԽՍՀՄ այդ-

պիսի ազդեցությամբ է մեծ մասամբ բացատրվում այն հսկայական թափն ու ծավալը, վոր ընդունում է գաղութային և կիսագաղութային յերկրների ժողովուրդների պայքարն իմպերիալիզմի դեմ։ Վերջին տարիների ընթացքում մենք տեսանք Մարոկկոյի և Սիրիայի ժողովուրդների հեղափոխական պայքարը ֆրանսիական իմպերիալիզմի դեմ, Հոլլանդիայի բուրժուազիայի դեմ ուղղված ապստամբությունն Ինդոնեզիայում, բուռն խռովությունները անգլիական տիրակալության դեմ՝ նրա իմպերիայի բոլոր մասերում։ Այդ պայքարին մասնակցում են աշխատավորների ամենալայն մասսաները։

Չինական հեղափոխության նշանակությունը. — Առանձնապես հսկա ու վիթխարի ծավալ է ընդունում չինական հեղափոխությունը, վորը չինական պրոլետարիատի և գյուղացիության բազմամիլիոն մասսաներ է ընդգրկում հեղափոխական պայքարի հորձանքի մեջ և ցնցում իմպերիալիզմի բոլոր հիմքերը։

Չինաստանն իրենից ներկայացնում է մի հսկայական յերկիր, վորի ազգաբնակչության թիվը հասնում է մոտավորապես 400 միլիոնի։ Այդ հսկա յերկիրը թեև թղթի վրա պետականորեն անկախ է, սակայն իրականում ամբողջապես կախում ունի յապոնական, անգլիական և ամերիկական իմպերիալիզմից։ Նրա կարևորագույն տնտեսական բոլոր ձեռնարկությունները, այն է՝ բանկերը, յերկաթուղիները, տեքստիլ ձեռնարկությունների մեծ մասը, գտնվում են օտարյերկրացիների ձեռքում։ Վերջիններիս է վերապահված նաև մի շարք տուրքերի գանձումը, մաքսային հարկերը և այլն։ Այդ բոլոր ձեռնարկություններն իմպերիալիստներին ահագին շահույթներ են տալիս։

Օտարյերկրյա իմպերիալիստներն իրենց հաշվում են Չինաստանի տերը և չինացիներին բոլորովին հաշվի չեն առնում։ Դեռ 2—3 տարի առաջ էր, վոր չինական քաղաքների շատ այգիների դռներին անգլիացիների ձեռքով կախված էյին ցուցանակներ, վորոնց վրա գրված էր՝ «Շների և չինացիների մուտքն արգելված է»։ Ամենամեծ քաղաքներում ամենալավ և ամենաընդարձակ վայրերը՝ այսպես կոչված «կոնցեսիաները» խլել են օտարյերկրացիները։ Կոնցեսիաներում ապրում են հարյուր հազարավոր չինացիներ, բայց այդ վայրերի լիակատար տերերը հանդիսանում են մի բուռն յեվրոպացիներ և յապոնա-

ցիներ։ Ոտարյերկրյա իմպերիալիստներն իրենց տիրապետությունը Չինաստանում պաշտպանում են զինված ուժով. Կանտոնում, Շանհայում, Մանջուրիայում, յերկաթուղիների վրա, մի խոսքով՝ ամենուրեք ցրված են նրանց խմբերը, հածանավերը, սուզանավերը և այլն։

Չինաստանի աշխատավորները տնքում են կրկնապատիկ ճնշման տակ, մի կողմից՝ ոտարյերկրյա իմպերիալիստների ճնշումը, մյուս կողմից՝ իրենց «հայրենի» կապիտալիստների և կալվածատերերի ծանր լուծը։ Այդ բոլորն էլ անխնա կերպով շահագործում են չին աշխատավոր մասսաներին։ Աշխարհիս վրա վոչ մի տեղ բանվոր դասակարգը և գյուղացիությունը չեն ապրում այնպիսի սարսափելի աղքատության մեջ, ինչպես Չինաստանում։ Չինաստանի բանվորներն որական աշխատում են 15—16 ժամ։ Չկա բանվորների աշխատանքի վոչ մի պաշտպանություն, վոչ մի որենք։ Չին բանվորն ամբողջ տարվա ընթացքում չի ստանում և վոչ մի հանգստություն։ Շատ ֆաբրիկաներում կանայք և յերեխաները 12-ժամյա բանվորական որվա համար ստանում են 10-ական կոպեկ։ Որական 30—50 կոպ. աշխատավարձը համարվում է շատ բարձր։ Շնորհիվ աշխատանքի այդպիսի պայմանների, մահացումը չին պրոլետարիատի մեջ չափազանց մեծ է։

Ավելի ևս վատ է չին գյուղացիության դրությունը։ Սակավահողությունն այնքան մեծ է, վոր մի քանի միլիոն գյուղացիական տնտեսություններ ունեն յուրաքանչյուրը միայն 1/64 դեսյատին հող։ Կալվածատերերից հողը կապալով վերցնելու սարկացնող պայմանները, գյուղացիությանն ուղղակի քերթող չին գեներալների և միլիտարիստների տուրքային ծանր ու ճնշող լուծը — այս բոլորը չինական գյուղացիությանը հասցնում են՝ դեռ աշխարհում վոչ մի տեղ չտեսնված ամենասարսափելի քայքայման և չքավորության։

Այդ պատճառով էլ չինական հեղափոխության առաջ կանգնած է յերկու տեսակ խնդիր՝ տապալել ոտարյերկրյա կապիտալիզմի լուծը, ձեռք բերելով Չինաստանի լիակատար ազգային անկախություն և Չինաստանը մաքրել ճորտատիրական, ֆեոդալական հարաբերությունների մնա-

ցորդներից՝ կալվածատերերի հողերը տալով գյուղացիներին։ Այդ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության հաղթանակը թույլ կտար չին պրոլետարիատին և գյուղացիությանը՝ սահմանել խորհրդային կարգեր և ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը պրոլետարական հեղափոխության վերածելու, պրոլետարական դիկտատուրային և սոցիալիստական շինարարությանն անցնելու համար։

Սակայն այդ հաղթանակը հնարավոր է միայն վորպես բանվոր դասակարգի և գյուղացիության հաղթանակ, վորպես հետևանք նրանց լարված պայքարի՝ յերկու ֆրոնտում — ընդդեմ ոտարյերկրյա իմպերիալիզմի և չին բուրժուազիայի ու կալվածատերերի։

Ներկայումս չինական հեղափոխությունը կրել է ժամանակավոր պարտություն։ Չինական բուրժուազիան, առաջին շրջանում մասնակցելով իմպերիալիստների դեմ մղվող պայքարին, վախեցավ բանվորա-գյուղացիական շարժման թափից ու ծավալից, համաձայնվելով ոտարյերկրյա իմպերիալիզմի հետ՝ անցավ հակահեղափոխության բանակը և սկսեց անխնա կռվել բանվորների ու գյուղացիների դեմ։ Առայժմ նրանք տոնում են տասնյակ հազարներով գնդակահարված և կախված կոմունիստների, բանվորների, գյուղացիների արյան գնով գնած իրենց հաղթանակը։ Սակայն դրանով գործը չի կարող վերջանալ։ Չինական բուրժուազիան ընդունակ չե վոչ ազատել Չինաստանն ոտարյերկրյա իմպերիալիզմի լծից, վոչ լուծել ագրարային հարցն հօգուտ գյուղացիների և վոչ էլ բարելավել բանվորների դրությունը։ Այդ խնդիրները կարող է լուծել միայն բանվորա-գյուղացիական հաղթական հեղափոխությունը։ Անկման շրջանը տեղի յե տալիս նոր վերելքի շրջանին։ Կոմինտերնի և Չինաստանի կոմկուսի ղեկավարության տակ պայքարի մեծ փորձ ստացող Չինաստանի բանվորները և գյուղացիները նորից պայքարի բեմ են դուրս գալու։ Ամենամոտիկ ապագան բերելու յե յուր հետ հեղափոխության ալիքի նոր վերելք Չինաստանում։

2. ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԲՈԼՇԵՎԻԶԱՑԻԱՆ

Մենք արդեն տեսանք, որ Արևմտյան Յեվրոպայի կոմունիստական կուսակցությունները հենվում են բոլշևիկյան փորձի վրա։ Այդ փորձը ոչ միայն շատ բանում թեթևացնում է նրանց ամբողջ աշխատանքը, այլ և օգնում է նրանց կռվել՝ ամեն տեսակի թեքումների, տատանումների դեմ, օպորտունիստների՝ կուսակցության մեջ ամրանալու ամեն մի փորձի դեմ։ Այն հանգամանքը, որ բոլշևիզմի փորձը կոմկուսներին օգնում է պահպանել գաղափարական մաքրություն և հեղափոխական ռազմունակություն, ունի առանձնապես կարևոր նշանակություն։ Կապիտալիստական յերկրների կոմկուսների մեծամասնությունը ծնունդ է առել պատերազմից հետո։ Նրանց քաղաքական փորձը տակավին մեծ չէ։ Այնինչ այդ յերիտասարդ կուսակցությունները պետք է աշխատեն ու պայքարեն ամենաբարդ պայմաններում և կացության մեջ։ Բուրժուազիան ձգնում է կոմկուսները ջախջախել ոչ միայն դատարանների և բանտերի միջոցով, այլ և քայքայել, զրկել հեղափոխական ուժից և պայթեցնել ներսից։ Բուրժուական ազդեցությունը հեշտությամբ կարող է ներս մտնել կոմկուսների շարքերը՝ յեթե նախորոք արմատից չկտրել օպորտունիզմի յերևան գալու ամեն մի նշան, յեթե միահամուռ և հաստատուն կերպով չդիմադրել կոմկուսներում առաջ յեկող ամեն մի թեքման։ Իսկ կոմկուսների մեջ նման թեքումների առաջացման համար հող կա, որովհետև Արևմուտքում կոմկուսների շատ անդամներ մի ժամանակ ներկա սոցիալ-դեմոկրատների հետ միասին գտնվում եյին մի կուսակցության մեջ, և ոչ բոլորն են, որ ամբողջապես վերացրել են իրենց միջից սոցիալ-դեմոկրատական գաղափարների և տրամադրությունների մնացորդները, իսկ շատերն էլ բավականաչափ կայունություն, ամրություն, համառություն չունեցող, քաղաքականապես խակ տարրեր են հանդիսանում։ Ահա թե ինչու կոմկուսներում հաճախ առաջ են գալիս աջ և ձախ թեքումներ, որոնց դեմ անհրաժեշտ է պայքարել։

Թե ինչպիսի լուրջ վտանգ են ներկայացնում այդ թեքումները, կարելի յե տեսնել գերմանական կոմկուսի օրինակի վրա։ 1923 թվին, յերբ Գերմանիայում պրոլետարական հեղափոխության հաղթանակի համար պայմանները դասավորվել եյին ամբող-

ջապես և միանգամայն բարենպաստ կերպով, գերմանական կոմկուսը չօգտագործեց այդ կացությունը, շնորհիվ յուր ղեկավարների վերխուշկայի հայտնաբերած աջ թեքման։ Սաքսոնիայում կոմունիստները, միացյալ ֆրոնտ կազմելով ձախ-սոցիալ դեմոկրատների հետ, մտան նրանց հետ միասին մի կառավարության մեջ։ Յեվ փոխանակ կառավարության մեջ իրենց մտնելը օգտագործելու — բանվոր դասակարգին զինելու և վճռողական պայքար պատրաստելու — կոմունիստները զբաղվեցին հաշտ ու խաղաղ համագործակցությամբ սոցիալ-դեմոկրատների հետ, թույլ տվին բուրժուազիային հավաքել յուր ուժերը և վերջապես, սպասելով, հասան նրան, որ այդ կառավարությունը ցրիվ տվեցին բուրժուական զորքերը։ Այսպես, միացյալ ֆրոնտի այն խեղաթյուրումը, որ թույլ տրվեց Սաքսոնիայում, իրականում կոմկուսակցությանը լիովին յենթարկել տվեց սոցիալ-դեմոկրատներին, կապեց կոմկուսակցության ձեռքն ու ոտքը և հեշտացրեց հեղափոխության ջախջախումը։ Աջ թեքումը կարող է յերևան գալ ամենաբազմազան ձևերով։ Այդ թեքումն ըստ եյության իրենից ներկայացնում է օպորտունիզմի արտահայտությունը կոմկուսակցության մեջ, յուր տեսակի սոցիալ-դեմոկրատական մի զգոտոց՝ կուսակցության ներսում։

Սակայն յեթե աջ թեքումը կոմկուսին յենթարկում է սոցիալ-դեմոկրատական ազդեցությանը և թուլացնում ու աշխատում է մեռցնել կոմկուսի մեջ հեղափոխական ոգին, ապա ոչ պակաս վտանգավոր է և ձախ թեքումը։ Ձախ թեքումն, արտաքուստ հեղափոխական թվացող ֆրազների տակ յերևան է բերում այն, որ ինքը չի ցանկանում և անկարող է տանել առօրյա ծանր, հեղափոխական աշխատանքը, որը պահանջում է խոշոր կայունություն, հաստատակամություն, դիսցիպլինա։ Այսպես, օրինակ, ձախ թեքման ներկայացուցիչները հրաժարվում են տանել ծանր աշխատանք՝ պրոֆմիությունները իրենց ազդեցության տակ առնելու համար. նրանք հայտարարում են, որ կոմունիստների համար ուղղակի ամոթ և խայտառակություն է աշխատել այդպիսի դավաճան դեղին կազմակերպություններում։ Իրականում՝ այդ պոզիցիան կուսակցությունը կտրում է մասսայից և ռեֆորմիստներին դյուրություն է տալիս մասսային պահել իրենց ազդեցության տակ։ Յեվ աջ և ձախ թեքումները շեղում են կոմկուսներին ուղիղ ճա-

նապարհից, թուլացնում են նրանց ուժերը, քայքայում են նրանց շարքերը։ Կոմկուսները հեշտությամբ կարող են հաղթահարել այդ թեքումները, յեթե նրանք ճիշտ կերպով յուրացնեն լենինյան ուսմունքը և բոլշևիզմի փորձը։ Հենց դրանումն է կայանում կոմկուսներին բոլշևիզացիայի յենթարկելու իմաստն ու միտքը,—բոլշևիզացիայի, վորը կոմկուսներին պետք է դարձնի իսկական բոլշևիկյան կուսակցություններ։

Սակայն ինչ է նշանակում իսկական բոլշևիկյան կուսակցություն։ Բոլշևիզացիայի հարցը յուր ամբողջ հասակով բոլոր կոմկուսների առաջ դնող Կոմինտերնի V կոնգրեսը* մատնանշում է հետևյալ հատկությունները, վորոնց անպայմանորեն պետք է ունենա բոլշևիկյան կուսակցությունը։

«ա) Կուսակցությունը պետք է լինի իսկական մասսայական, այսինքն՝ և՛ լինելով լեգալ և՛ ճնալով անլեգալ, նա պետք է գիտենա պահել ամենասերտ, ամենաանխզելի կապ բանվորական մասսաների հետ և նրանց ծառայի վորպես նրանց կարիքն ու հույսերն արտահայտող։

«բ) Նա պետք է ընդունակ լինի մանյովրներ անելու. կուսակցությունը թշնամու դեմ պետք է գիտենա դիմել ստրատեգիական բոլոր մանյովրներին. այսինքն նա պետք է գիտենա վոչ միայն հարձակվել, այլ և անհրաժեշտ դեպքերում նահանջել կարգով, միշտ պահելով յուր հեղափոխական դեմքը։

«գ) Նա պետք է լինի եյապես հեղափոխական, մարքսիստական, ամեն տեսակ պայմաններում անշեղորեն դեպի գործը դիմող։

«դ) Նա պետք է լինի՝ ֆրակցիաներ, հոսանքներ ու խմբավորումներ չհանդուրժող և միատարր, կուռ, կենտրոնացված կուսակցություն։ Վերջապես կուսակցությունը պետք է բուրժուական բանակներում անընդհատ տանի համառ աշխատանք, կոմունիզմի կողմը գրավելով զինվորական մասսաները»։

Սրանք են այն պահանջները, վորոնց պետք է բավարարի բոլշևիկյան կուսակցությունը։ Կոմինտերնը ձգտում է նրան, վորպեսզի յուրաքանչյուր կոմկուս դաստիարակվի յուր մեջ այդ բոլոր հատկությունները և ամբողջապես վերածվի բոլշևիկյան

* Կարդա մեր հրատարակած գրքույկը՝ «Կոմինտերնի VI Կոնգրեսը» — Վասիլյեվի (լույս է տեսնում այս գրքի հետ)։

կուսակցության։ Այն ժամանակ նրան սարսափելի չի լինի վոչ մի թեքում, վոչ մի դժվարություն, վորը կարող է պատահել ճանապարհին։

Կոմկուսների բոլշևիզացիան վերջերս ունենում է մեծ հաջողություններ։ Դրա շնորհիվ Կոմինտերնը հեշտությամբ է հաղթահարում յուր սեկցիաներում ծագող թեքումները։ Բավական է հիշել այն հուժկու դիմադրությունը, վոր ստացավ տրոցկիստական ոպպոզիցիան արևմտյան կոմկուսներում։ Տրոցկիստական բլոկը Կոմինտերնում դարձել է մի հավաքատեղի՝ կոմունիզմին թշնամի և Կոմինտերնը ներսից պայթեցնել աշխատող քաղաքական ամեն տեսակի տարրերի համար։ Դուրս գալով ձախ դիմակի տակ, տրոցկիստական ոպպոզիցիան միացրեց բանվորական շարժման բոլոր վատ տարրերը—հավասար չափով և՛ ձախ և՛ աջ թեքումները ներկայացնող, միացավ ձախ սոցիալ-դեմոկրատիային, փաստորեն դարձավ նրա թևերից մեկը։

Տրոցկիստական ոպպոզիցիան Կոմինտերնում պաշտպանություն չգտավ և գլխովին ջարդվեց բոլոր կոմկուսներում, վորոնք դրանով ապացուցեցին իրենց քաղաքական հասունությունը և կայունությունը։ Կոմինտերնը դատապարտեց տրոցկիստական ոպպոզիցիան և ընդունեց, վոր տրոցկիստների դաշինքը սոցիալ-դեմոկրատիայի հետ և նրա բացարձակ հակահեղափոխական դիրքը, վոր ամբողջովին թշնամական է պրոլետարական դիկտատուրային, նրա պառակտիչ մեթոդները կոմունիստական կուսակցություններում հասցրին այն բանին, վոր տրոցկիստական ոպպոզիցիայի հարողները այլևս չեն կարող մնալ Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ։

Արևմտյան կոմկուսների ցույց տված այս կուռ դիմադրությունը տրոցկիստական բլոկին, հանդիսանում է ամենալավ գրավականը՝ աջ և ձախ թեքումների դեմ Կոմինտերնի մղած պայքարի հաջողության, հանդիսանում է ամենալավ գրավականը՝ այդ պայքարում լենինյան գծի հաղթանակի։ Հետագայում շարունակվող բոլշևիզացիայի ամենօրյա աշխատանքը Կոմինտերնին դարձնելու յե լենինյան իդեյաներով համակված և ոպպորտունիզմի թափանցման համար անմատչելի մի զորեղ, միասնական բոլշևիկյան կուսակցություն։

3. ԿԻՄ-Ը ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՌԵԶԵՐՎՆ Է

Կոմինտերնի ամենամոտիկ կողմնակիցը հանդիսանում է Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալը, վորի գլխավոր խնդիրն է — Կոմինտերնի համար բոլշևիկյան ռեզերվներ նախապատրաստել ու դաստիարակել և բանվորական ու գյուղացիական յերիտասարդության բազմամիլիոն մասսաներին պրոլետարական հեղափոխության կողմը գրավել։

Համախմբելով և միացնելով յերիտասարդական կոմունիստական բոլոր կազմակերպությունները — ԿԻՄ-ը, ի տարբերություն II Ինտերնացիոնալի սպասավորի, այն է Սոցիալիստական Յերիտասարդության Ինտերնացիոնալի, յուր ազդեցությամբ ընդգրկում է վոչ միայն ամբողջ Յեվրոպան, այլ և ամբողջ յերկրագունդը։ Յերբ Ավստրալիայում ևս կազմակերպվեց կոմունիստական յերիտասարդական միություն, այլևս չկա վոչ մի աշխարհամաս, վորտեղ գոյություն չունենա կոմունիստական յերիտասարդական կազմակերպություն։ Սակայն ԿԻՄ-ում միացված անդամների թիվը մեծ չէ։ ԿԻՄ-ը 1927 թվի վերջին, չհաշված ՀամԼԿՅԵՄ-ը, յուր բոլոր սեկցիաներում ուներ միայն 93.000 անդամ։ Նման դրությունը բացատրվում է մի շարք պատճառներով, վորոնցից ամենագլխավորները հետևյալներն են.

Ամենից առաջ, շատ յերկրներում մեր միությունները, կատաղի կերպով հետապնդվելով սպիտակ տեռորից, աշխատում են թագստում, պոդպոլիայում։ Այնպիսի յերկրներում, ինչպիսիք են՝ Իտալիան, Լեհաստանը, Լատվիան և Բուլղարիան, կոմսոմոլին լոկ պատկանելը պատժվում է բանտով, իսկ Չինաստանում՝ մահով։ Յեվ զարմանալի չէ, վոր 17 անլեգալ կազմակերպություններում մի կես տարվա ընթացքում անդամների թիվը 54 հազարից պակասել է մինչև 26 հազար։ Չինաստանի հերոսական կոմսոմոլում 35 — 40 հազար անդամից մնացել է միայն 10 հազար։ Տասնյակ հազարավոր կոմսոմոլիստներ, գազանային տանջանքների յենթարկվելով, սպանվեցին։

Սակայն կոմսոմոլի քանակական կազմը խոշոր չէ և այնպիսի յերկրներում, վորտեղ աշխատանքը գնում է վոչ այդպիսի դժվարին պայմաններում։ Առանձնապես ցայտուն կերպով է դա աչքի ընկնում, յերբ համեմատում ենք կոմսոմոլի և կոմկուսի անդամների թվերը։ Գերմանական միությունը յուր շարքերում

ունի 19 հազար անդամ, իսկ կոմկուսը՝ 125 հազար, ֆրանսիական միությունը՝ 10 հազար, իսկ կուսակցությունը՝ 56 հազար, Չեխո-Սլովակիայում, այն ժամանակ (1925 թ.), յերբ կուսակցությունն ուներ 138 հազար անդամ, կոմսոմոլը — միայն 13 հազար։ Վերջին տարիների ընթացքում անդամների թվի չնչին աճումն այդ միություններում ցույց է տալիս, վոր նրանց սակավաթվությունը գլխավորապես մասսայական աշխատանքի թերությունների և կոմսոմոլի մեջ մտնող բանվորական յերիտասարդության շերտերին հաստատապես նվաճել չիմանալու, չկարողանալու հետևանքն է։

Սակայն չպետք է մոռանալ այն խոշոր դժվարությունները, վորոնց մեջ մեր միությունները պետք է ուժեղացնեն և ծավալեն իրենց աշխատանքը կապիտալիստական յերկրներում։ Բուրժուազիան հրաշալի կերպով հասկանում է թե ինչ նշանակություն ունի յերիտասարդությունը։ Բուրժուազիան յուր տրամադրության տակ յեղած բոլոր միջոցներով պայքարում է յերիտասարդության համար և աշխատում է նրանից կապիտալիստական հասարակակարգի կողմնակիցներ դաստիարակել։ Կապիտալիստական յերկրներում դպրոցը, յեկեղեցին, մամուլը, թատրոնը, կինոն և այլն հանդիսանում են բուրժուական ազդեցության զորեղ տարածողները պրոլետարական և գյուղացիական յերիտասարդության շրջանում։ Բուրժուազիան յերիտասարդությունը նվաճելու համար ստեղծում է ամենաբազմազան տասնյակ կազմակերպություններ, այն է՝ քաղաքական, կուլտուրական, սպորտային, կրոնական և այլն։ Միայն կաթոլիկական (կրոնական) յերիտասարդական միությունները մինչև 3 միլիոն անդամ ունեն։ Ֆաշիստական յերիտասարդական կազմակերպությունները, բուրժուազիան վորոնց առանձին սիրով է ուժեղացնում և աճեցնում, միացնում են իրենց շարքերում հարյուր հազարավոր անդամներ։

Այդ կազմակերպություններին ոգնության է գալիս բուրժուազիայի սոցիալ-քաղաքական ամբողջ ուժը, պետական ապարատի ամբողջ ճնշումը, — ապարատ, վորն արգելում է մեր միությունների աշխատանքը և նրանց գլխին թափում բուրժուական «արդարադատության» բոլոր միջոցները, սկսած բանտից մինչև կախաղանները։

Այնուհետև, ֆաշիստական և բուրժուական ուրիշ կազմակերպություններին ոգնության է յելնում Սոցիալիստական Յե-

րիտասարդական Ինտերնացիոնալը, վորը ձգնում է քայքայել և պառակտում ցանել բանվորական յերիտասարդության մեջ, աշխատում է բանվորական յերիտասարդության ակտիվությունը քաղաքական կյանքից և դասակարգային պայքարից ուղղել դեպի կուլտուրական աշխատանքի խաղաղ հունը։ ՍԻՄ-ը (Սոցիալիստական Յերիտ. Ինտերնացիոնալ) II Ինտերնացիոնալից և Պրոֆմիությունների Ամստերդամի Ինտերնացիոնալից ստանում է լիակատար ոգնություն։

ԿԻՄ-ին թշնամի այդ բոլոր կազմակերպությունների միջոցները շատ ավելի հարուստ են, քան մեր միությունների միջոցները։ Նրանց աշխատանքի պայմաններն անհամեմատ ավելի բարենպաստ են։ ԿԻՄ-ը յերիտասարդության նվաճման համար ստիպված է աշխատել ամենադժվարին և առաջին հայացքից համարյա ամենաանհույս պայմաններում, ունենալով յուր դեմ կապիտալիստական աշխարհի ամբողջ ուժը, ամբողջ հզորությունը։

Յեվ այնուամենայնիվ, ԿԻՄ-ի առաջ կանգնած վոչ մի դժվարության վրա ուշադրություն չդարձնելով, մենք կարող ենք լիակատար վստահությամբ հաստատել, վոր ապագան այդ պայքարում մեզ է պատկանում և վոր պրոլետարական յերիտասարդությունը պայքարելու յե միայն և միմիայն Կոմինտերնի դրոշի տակ։

Կապիտալիզմի պայմաններում բանվորական յերիտասարդության դրությունն այնպես է, վոր յերկաթե անհրաժեշտությամբ այդ յերիտասարդությանը մղում է հեղափոխության կողմը։ Կապիտալիստական յերկրներում բանվորական յերիտասարդության աշխատանքի պայմաններն անչափ ծանր են։ Յերեխաների և յերիտասարդության աշխատանքի շահագործմանը չկա վոչ մի սահմանափակում։ Բանվորական յերիտասարդության աշխատավարձը չափազանց ցածր է և, վորպես ընդհանուր կանոն, քիչ է ապրուստի մինիմումից, այսինքն չի ապահովում նույնիսկ կիսաքաղց գոյությունը։ Մեծ մասամբ յերիտասարդության բանվորական որն ավելի յերկար է չափահաս բանվորների որից և պակաս չէ 9 — 10 ժամից, իսկ յերբեմն հասնում է 12 — 14 ժամի (մանր ձեռնարկություններում)։ Հիվանդության կամ անգործության դեպքում յերիտասարդ բանվորը վոչ մի տեղից ոգնություն չի ստանում (վորովհետև նա տակավին իբր թե գտնվում է ծնողների խնամքի տակ)։

Այնինչ, վորքան ուժեղ է զարգանում կապիտալիզմը, այնքան ավելի խոշոր նշանակություն է ստանում բանվոր յերիտասարդության աշխատանքը։ Կապիտալիստական ռացիոնալիզացիան հասցնում է նրան, վոր մեքենան վորակյալ բանվորին դուրս է մղում արտադրությունից։ Աշխատանքն այնքան է պարզացվում, վոր չափահաս բանվորի աշխատանքը մեծ հաջողությամբ փոխարինվում է անչափահասի աշխատանքով։ Կապիտալիստի համար շատ ոգտակար և ձեռնտու յե լայնացնել և ուժեղացնել պատանու և յերիտասարդի աշխատանքի կիրառումը, վորովհետև դա շատ եժան է։ Բոլոր կապիտալիստական յերկրներում յերեխաների և անչափահասների աշխատանքը ստանում է ամենալայն տարածում։ Այսպես, որինակ, միայն Գերմանիայում մինչև 18 տարեկանները կազմում են մոտ 4 միլիոն բանվոր, Անգլիայում—մինչև 3 միլիոն։ Տնտեսական ճնշման ծանրության տակ ճզմված, կապիտալիստների կողմից ավելի և ավելի ուժեղացող շահագործման յենթարկվելով, պրոլետարական յերիտասարդությունը տարերային կերպով բարձրանում է կապիտալիզմի դեմ պայքարելու համար։

Այդ պատճառով էլ վերջին տարիներում բանվորական յերիտասարդության քաղաքական ակտիվությունը, գնալով, ավելի և ավելի յե աճում։ Վորովհետև բուրժուազիան ձգտում է կապիտալիստական ռացիոնալիզացիայի ամբողջ ծանրությունը գցել բանվորական յերիտասարդության ուսերի վրա, վորովհետև տնտեսական ճնշումը և բանվորական յերիտասարդության քաղաքական իրավազրկությունը չեն թուլացնում, այլ ընդհակառակը հետզհետե ավելի և ավելի ուժեղացնում են, ապա բանվորական յերիտասարդության հեղափոխականացումը շարունակվելու յե և դրան չի կարողանալու խանգարել բուրժուազիայի և սոցիալ-դեմոկրատիայի հարուցած և վոչ մի խոչընդոտ։

Այդ հիման վրա վերջին ժամանակներս նկատվում է ԿԻՄ-ի քաղաքական ազդեցության անընդհատ աճում պրոլետարական յերիտասարդության մասսաների վրա։ Դասակարգային ծավալվող պայքարի մեջ ԿԻՄ-ը հանդիսանում է այն մարտական կազմակերպությունը, վորը յուր յետևից է տանում բանվորական յերիտասարդությանը։ Անգլիայում 1926 թվի գործադուլների ժամանակ կոմսոմոլը ղեկավարում էր լեռնային արդյունաբերության մեջ աշխատող յերիտասարդությանը և ամուր

կերպով կապված էր նրա մասսաների հետ։ Գերմանիայում Կոմսոմոլը հաջողությամբ ղեկավարում է բանվորական յերիտասարդության տնտեսական պայքարը։ Վերջին ժամանակներս նրան հաջողվել է ռեֆորմիստական պրոֆմիություններից խլել մի քանի տասնյակ յերիտասարդական սեկցիաներ։ Ամերիկայում տեքստիլ և լեռնային արդյունաբերության մեջ աշխատող բանվորների խոշոր գործադուլների ժամանակ կոմսոմոլիստները ձեռք բերին ահագին ազդեցություն բանվորների վրա և դարձան մասսաների իսկական ղեկավարներ։ Ֆրանսիայում պարլամենտի ընտրության կամպանիան ցույց տվեց կոմսոմոլի ազդեցության ուժեղ աճումը մասսաների վրա։ Լեհաստանում, չնայած դժվարին պայմաններին, գտնվելով պոդպոլիայում, կոմսոմոլն ամուր և ուժեղ կերպով կապված է բանվորական յերիտասարդության հետ։ Սակայն ԿԻՄ-ի քաղաքական ազդեցության աճման հետ միասին առայժմ հարկավոր չափով չի աճում նրա քանակը։ Այդ պատճառով էլ այս ամենամոտիկ շրջանում ԿԻՄ-ի գլխավոր խնդիրն է՝ ունեցած քաղաքական ազդեցության հետ միաժամանակ ավելացնել իր նաև քանակը, պրոլետարական յերիտասարդության լայն մասսաներին քաշելով կոմսոմոլի շարքերը։

Կապիտալիստական յերկրների մեր միությունները պետք է սովորեն իրենց կողմը հաստատապես գրավել բանվորական յերիտասարդությանը և դրան համապատասխան վերակառուցել իրենց ամբողջ աշխատանքը։ Դրա համար անհրաժեշտ է առաջին հերթին լավացնել և ուժեղացնել մեր միությունների կազմակերպչական աշխատանքը, ֆաբրիկ-գործարանային բջիջների կառուցումը և ամրացումը, — բջիջների, վորոնք մոտեցնելու յեն կոմսոմոլը բանվորական մասսային և հնարավորություն են տալու անմիջականորեն ղեկավարել այդ մասսայի տնտեսական-քաղաքական պայքարը։

Վերջապես, մեր միությունները պետք է սերտորեն կապվեն այնպիսի կազմակերպությունների հետ, վորպիսիք են՝ պրոֆմիությունների կից յերիտասարդական սեկցիաները, յերիտասարդական բաժինները սպորտային միություններում և այլն. և կապվելով այդ կազմակերպությունների հետ, նրանք պետք է աշխատեն նրանց գրավել իրենց կողմը, նրանց դարձնել իրենց համար հենարան և ոժանդակող կազմակերպություններ։

Հենվելով Կոմինտերնի փորձի վրա, ընդհուպ մոտենալով բանվորական յերիտասարդության առորյա կարիքներին և ամենորյա պայքարին, նվաճելով պրոֆմիությունների յերիտասարդական սեկցիաները, ոգտագործելով միասնական ճակատի գործելակերպը, ԿԻՄ-ը պետք է յուր առաջնպատակ դնի՝ բանվորական յերիտասարդության մասսաները դուրս բերել դեղին և բուրժուական կազմակերպությունների ազդեցության տակից և նրանց դարձնել յուր հենարանը։ Առաջիկա շրջանում ԿԻՄ-ի ամենակարևորագույն խնդիրը հանդիսանալու յե մասսաներին ներգրավելու համար մղվող պայքարը։ Պրոլետարական յերիտասարդությանը ներգրավելով և նրան մասնակից դարձնելով տնտեսական և պատերազմի վտանգի դեմ մղվող պայքարին, մերկացնելով դեղին կազմակերպությունների մատնիչ և դավաճան դերը, յուր ամբողջ աշխատանքով ապացուցելով, վոր յերիտասարդության միակ և իսկական պրոլետարական հեղափոխական կազմակերպությունները հանդիսանում են կոմյերիտ-կազմակերպությունները, ԿԻՄ-ը վերջիվերջո պրոլետարական յերիտասարդության վճռողական մասսաներին կոմունիզմի կողմն է գրավելու։

4. ԽՍՀՄ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Համաշխարհային կապիտալիզմի կայունությունն արմատից խախտող կարևորագույն հակասությունը կազմում է — աշխարհի բաժանումը՝ կապիտալիզմի յերկրների և սոցիալիզմ կառուցող յերկրների։ Ամբողջ աշխարհի բանվորները հանձինս Խորհրդային Միության ունեն իրենց սեփական պետությունը — միջազգային պրոլետարիատի հայրենիքը, համաշխարհային հեղափոխության ամրոցը և բազան։ ԽՍՀՄ շուրջը խմբվում են հեղափոխական բոլոր ուժերը, նրա դեմ համախմբվում ու միանում են կապիտալիզմի բոլոր ուժերը։ Կապիտալիստական աշխարհը տենդային արագությամբ նոր արշավանք է պատրաստում ԽՍՀՄ դեմ, յերազելով սրբել ու ջնջել յերկրի յերեսից պրոլետարական պետությունը, վորը միակն է աշխարհում։ Համաշխարհային բուրժուազիայի ատելության պատճառները դեպի Խորհրդային Միությունը լիովին հասկանալի

յեն։ Ցարական Ռուսաստանում նա ուներ հսկայական հարստություններ. մեր արդյունաբերական կարևորագույն շրջաններում, այն է՝ Դոնբասում, Ուրալում, Բագվում, Սիբիրում, մի խոսքով ամեն տեղ, ուր կային ածուխ, հանքեր, նավթ, վոսկի, ռուս բանվորի եժան աշխատանք,—այնտեղ լիակատար տերեր եյին հանդիսանում ֆրանսիական, բելգիական, անգլիական կապիտալիստները։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո համաշխարհային բուրժուազիան պետք եր ընդմիշտ բաժանվեր այդ հարստություններից։ Հոկտեմբերյան հեղափոխությունը լուծարքի յենթարկեց և ցարական պարտքերը։ Այդ գործում համաշխարհային բուրժուազիան միայն մեկ միլիարդ ռուբլի չե, վոր կորցրել ե։ Բավական են միայն այս պատմական փաստերը, վորպեսզի բացատրել, թե ինչու կապիտալիստական աշխարհը հանդիսանում ե խորհրդային հանրապետության անհաշտ թշնամին նրա գոյության հենց առաջին որից։ Սակայն համաշխարհային բուրժուազիայի համար ավելի խոշոր նշանակություն ունի ԽՍՀՄ խաղացած վիթխարի և հսկա հեղափոխական դերը։ ԽՍՀՄ հենց միայն գոյությունը համաշխարհային կապիտալիզմի համար ներկայացնում ե մահացու մի սպառնալիք, վորովհետև Խորհրդային Միությունը հանդիսանում ե պրոլետարական հեղափոխության այն ամենախոշոր, ամենավիթխարի ուժը, վոր բոլոր յերկրների բանվորներին առաջ ե մղում՝ իշխանությունը բուրժուազիայի ձեռքից խլելու։

«Հանդիսանալով պրոլետարական հեղափոխության և սոցիալիզմի կառուցման յերկիր,—ասում ե Կոմինտերնի ծրագիրը,—բանվոր դասակարգի հսկայական նվաճումների յերկիր, բանվորների և գյուղացիների դաշինքի յերկիր, ԽՍՀՄ անխուսափելիորեն դառնում ե բոլոր ճնշված դասակարգերի համաշխարհային շարժման բազա, միջազգային հեղափոխության ոջախ, համաշխարհային պատմության խոշորագույն ֆակտոր (գործոն)։ Համաշխարհային պրոլետարիատը ԽՍՀՄ մեջ առաջին անգամ գտնում ե իսկապես յուր հայրենիքը, իսկ գաղութային շարժումների համար ԽՍՀՄ խոշորագույն ձգողության կենտրոն ե դառնում»։

Խորհրդային Միությունը հզոր ոգնություն ե ցույց տալիս միջազգային պրոլետարիատի և գաղութների ճնշված ժողովուրդների հեղափոխական պայքարին։ Բավական ե հիշել այն ոգնությունը, վոր ցույց տվին ռուս բանվորները և գյուղացիները անգլիական հանքափորներին 1926 թ., այն կարեկցությունը և ոգնությունը, վոր նրանց մեջ առաջ բերեց չինական հեղափոխությունը։ Սակայն շատ ավելի խոշոր ազդեցություն են ունենում համաշխարհային հեղափոխության վրա մեր սոցիալիստական շինարարության հաջողությունները։ ԽՍՀՄ հանդիսանում ե կենդանի որինակ այն բանի, վոր բանվոր դասակարգը կարող ե վոչ միայն խորտակել կապիտալիզմը, այլ և հաղթական կերպով կառուցել սոցիալիզմ։ Սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը Արևմտյան Յեվրոպայի բանվորների վրա անցյալ տարիներում գլխավորապես հիմնվում եր նրա վրա, վոր, մատնանշելով խորհրդային յերկրներում գոյություն ունեցող տնտեսական քայքայումը, սոցիալ-դեմոկրատներն ասում եյին բանվոր դասակարգին—ահա տեսնում եք ինչ դրության մեջ ընկան ռուսական բանվորները—նրանք խլեցին իշխանությունը և տառապում են սովից, ցրտից, քայքայումից. քանդել նրանք կարողացան, իսկ կառուցել—վոչ. և քանի վոր նրանք մեզ այդպիսի որինակ ցույց տվին, ապա արժե՞ արդյոք ձգտել իշխանությունը խլել և այդպիսով վատացնել մեր դրությունը։

Յեվ այդ ագիտացիան Արևմտյան Յեվրոպայի բանվորներին ստիպեց մտածել ու այդպիսով կապեց ու կաշկանդեց նրանց հեղափոխական թափը։ Սակայն ռուսական պրոլետարիատի հենց առաջին տնտեսական հաջողությունները, վորոնց նա հասավ միանգամից՝ հենց վոր ստացավ խաղաղ աշխատանքի հնարավորություն, խորտակեցին մենշևիկյան չարամիտ հեքիաթները այն մասին, վոր իբր թե ԽՍՀՄ բանվորները գիտեն միայն քարուքանդ անել, իսկ կառուցել—վոչ։ Միջազգային պրոլետարիատն ամենամեծ ուշադրությամբ հետևել ե և հետևում ե մեր սոցիալիստական շինարարության հաջողություններին—չե՞ վոր մեր՝ դեպի առաջ կատարած յուրաքանչյուր քայլը համոզում ե նրան մեր ուղիի ճշտության մեջ, մղում ե նրան հետևել մեր որինակին։ Մեր շինարարության՝ ամբողջ աշխարհի պրոլետարիատի վրա գործած այդ ազդեցության մասին Լենինն ասում ե հետևյալը.

«Այժմ գլխավոր ներգործություն միջազգային հեղափոխության վրա, մենք ցույց ենք տալիս մեր տնտեսական քաղաքականությամբ։ Բոլորը նայում են Ռուսաստանի խորհրդային հանրապետության վրա, աշխարհի բոլոր յերկրների բոլոր աշխատավորները առանց վորևէ բացառության և առանց վորևէ չափազանցության... Յեթե լուծենք այդ խնդիրը, այն ժամանակ ամենայն վստահությամբ և վերջնականապես կհաղթանակենք միջազգային մասշտաբով»։ Այն ժամանակից, յերբ Լենինն այդ ասել է, պրոլետարիատը ԽՍՀՄ մեջ մեծամեծ հաջողությունների յե հասել և ցույց տվել, թե բանվոր դասակարգը ինչպես ընդունակ է, բարենպաստ պայմաններում, անընդգրկելի ստեղծագործական ուժեր ցուցաբերելու և ծավալելու։ Այդ հաջողություններն ամենաուժեղ ազդեցություն են ցույց տվել և շարունակում են ամենաուժեղ ազդեցություն ցույց տալ համաշխարհային պրոլետարիատի միջավայրում հեղափոխական տրամադրությունների արթնացման վրա։ Անգլիական, գերմանական, ֆրանսիական բանվորների տասնյակ պատգամավորություններ յեկել են ԽՍՀՄ, իրենց սեփական աչքերով համոզվել են մեր հաղթանակներում և վերադարձել են իրենց յերկրները վորպես մեր ամենաջերմ կողմնակիցներ։ Յեվ յուրաքանչյուր նոր տարի, յուրաքանչյուր նոր հաջողություն ավելացնում է միջազգային պրոլետարիատի համակրանքը դեպի ԽՍՀ Միությունը և նրա հետագա հեղափոխականացումը։ Այսպես, սոցիալիզմի կառուցման մեր ամենօրյա աշխատանքը խորհրդային յերկրում, անխզելիորեն կապվում է համաշխարհային հեղափոխական շարժման հետ և դառնում է համաշխարհային պրոլետարական հեղափոխության բաղադրիչ մասը։

Կոմինտերնի VI Կոնգրեսն, առանձին կոչով դիմելով ԽՍՀՄ բանվորներին, գյուղացիներին, կարմիր բանակայիններին և կարմիր նավատորմիղայիններին, միջազգային պրոլետարիատի անունից հայտարարեց. «Ձեր նվաճումներն ամբողջ աշխարհի պրոլետարիատի և աշխատավորության համար հանդիսանում են ձեր ստեղծած կարգերի հսկայական գերազանցության կենդանի որինակ և պարզ դաս։ Ամբողջ աշխարհի բանվորները համե-

մատում են իրենց կյանքը ԽՍՀ Միության աշխատավորության կյանքի հետ և տեսնում են, թե ինչպես տարեց-տարի խորանում է տարբերությունը դրանց միջև։

«Ձեր տնտեսական հզորության աճումը, պրոլետարական դիկտատուրայի դիրքերի ամրացումը, այն ոգնությունը, վորին հանդիպում է ձեր գործն ուրիշ յերկրների պրոլետարիատի և աշխատավորության կողմից, կրկնապատկում են կապիտալիստական աշխարհի ատելությունն ու կատաղությունը։

«Այդ պատճառով էլ միջազգային ռեակցիան պատրաստում է յուր ուժերը՝ ԽՍՀՄ վրա զինված հարձակում գործելու համար։ Իմպերիալիստական և կապիտալիստական բոլոր ուժերի կոալիցիան (միությունը) ավելի և ավելի յե միացվում դժոխային մի ողակի մեջ՝ պրոլետարական դիկտատուրայի շուրջը»։

ԽՍՀ Միության՝ ամբողջ աշխարհի պրոլետարական մասսաների վրա որեցոր ընդարձակվող հենց այդ հեղափոխական ազդեցության մեջ է կապիտալիստական աշխարհի և ԽՍՀ Միության հարաբերությունների վատացման և դադարի ժամանակամիջոցի կրճատման պատճառը, դադարի, վորի մեջ ներկայումս ապրում ենք։

Որեցոր աճում է պատերազմի սպառնալիքը ԽՍՀՄ դեմ։ Անգլիայի կատաղի ճիգն ու ջանքը, վոր ձգտում է կապիտալիստական պետություններից հակախորհրդային միասնական ֆրոնտ ստեղծելու, իրենց ռազմական ուժերն ուժեղացնող Լեհաստանի, Ռումինիայի, Լատվիայի և Ֆինլանդիայի տենդային պատերազմական պատրաստությունները, միջազգային սոցիալ-դեմոկրատիայի՝ ԽՍՀՄ մասին հնարած ստերի, զրպարտությունների և բամբասանքների ուժեղացումը, կապիտալիստների փորձերը, վոր ձգտում են ամեն տեսակ վնասատուների միջոցով (Շախտիի գործը) մեր սոցիալիստական շինարարությունը խանգարելու,—ահա սրանք են այն կարևորագույն նշանները, վորոնք վկայում են պատերազմի վտանգի մոտեցման և դադարի ժամանակամիջոցի կրճատման մասին։

Պատերազմի այդ վտանգը պետք ե առաջ բերի մեր բոլոր ուժերի լարումը՝ մեր յերկրի պաշտպանության գործը ամրացնելու համար։ ԽՍՀՄ պրոլետարների և գյուղացիների հեղափոխական պարտքն ե համաշխարհային հեղափոխության առաջ՝ ԽՍՀՄ դարձնել անմատչելի և անառիկ բերդ, այնպիսի բերդ, վորի վրա փշրվի միջազգային իմպերիալիզմի գրոհը։ Այդ պայքարում մենք մենակ չենք լինի։ Վերևում բերված կոչի մեջ Կոմինտերնի VI կոնգրեսը, դիմելով ԽՍՀՄ բանվորներին և գյուղացիներին, ասում ե. «Դուք ունենալու յեք միլիոնավոր դաշնակիցներ կապիտալիստների թիկունքում, ԽՍՀՄ պաշտպանելու համար յելնելու յեն ձեր ընկերներն ու յեղբայրները, վորոնք անխոնջ յեռանդով և ամենամեծ անձնազոհությամբ կապիտալիզմի դեմ տանելու յեն մահացու պայքար։ Ձեր կապիտալիստ թշնամիների մեծ գործարաններում, տրանսպորտի, ռազմանավերի վրա և բանակներում հազարավոր պրոլետարներ և գյուղացիներ պաշտպանելու յեն Խորհրդային Միության կարմիր դրոշը, միջազգային պրոլետարիատի դրոշը»։

Հանցագործ պատերազմը ԽՍՀՄ դեմ անխուսափելիորեն հասցնելու յե միջազգային հեղափոխության բոլոր ուժերի վոտքի կանգնելուն և կապիտալիզմի խորտակման։

Սոցիալ-դեմոկրատները հավատացնում են պրոլետարիատին, իբր կապիտալիզմը այնքան ե ամրացել, վոր հեղափոխությունը դարձել ե անհնարին և վոր բանվոր դասակարգին մնում ե յենթարկվել կապիտալիզմին և մեկ-յերկու հարյուր տարով մոռանալ հեղափոխության մասին։ Սակայն արժե միայն հիշել վերջին տարիների կարևորագույն անցուդարձերը, վորպեսզի կապիտալիզմի ամբողջ անկայունությունն ու խախուտ լինելը պարզ կերպով կանգնի մեր առաջ։ 1926 թվին Անգլիային մինչև հիմքերը ցնցում են ընդհանուր գործադուլը և ածխահատների մեծ բանթողը։ 1927 թվին Վեննայում բռնկում ե պրոլետարական ապստամբություն։ Չինական մեծ հեղափոխությունը պայքարի մեջ ե քաշում տասնյակ և հարյուրավոր միլիոն աշխատավորներ։ Գաղութային բոլոր յերկրներում տեղի յե ունենում խորը հեղափոխական խմորում։ Չնայած նրան, վոր սոցիալ-դեմոկրատիայի

ազդեցությունը մասսաների վրա տակավին չի վոչնչացված, բայց այնուամենայնիվ աճում ե պրոլետարական համակրանքը դեպի ԽՍՀՄ, ամրանում և կոփվում են կապիտալիստական յերկրների կոմունիստական կուսակցությունները, աճում ե Կոմինտերնի ազդեցությունը բանվոր դասակարգի վրա։

Պարլամենտական վերջին ընտրությունները Ֆրանսիայում, Գերմանիայում, Լեհաստանում իրենց հետ բերին կոմկուսների թեկնածուներին տված ձայների ահագին ավելացում։ Միլիոնավոր բանվորներ, չնայած ընտրություններում թագավորող վոստիկանական հետապնդումների և ճնշումների սաստկության, քվեարկում եյին հոգուտ կոմունիստների, հոգուտ Կոմինտերնի, հոգուտ ԽՍՀ Միության։

Համաշխարհային կապիտալիզմը չորս կողմից վողողվում ե հեղափոխության ալիքներով։ Ամրանում և հասունանում են պրոլետարական հեղափոխության ուժերը։ Առաջիկայում տեղի յեն ունենալու դասակարգային վիթխարի բախումներ և ճակատամարտեր, վորոնք վճռելու յեն կապիտալիզմի բախտը։ Կոմինտերնը անվախ կերպով գնում ե այդ ճակատամարտերին դիմավորելու նույն կոչով, վորով ութսուն տարի սրանից առաջ պայքարի յելավ յուր նախորդներից առաջինը — Մարքսի ստեղծած Կոմունիստների Միությունը.

«Թող տիրող դասակարգերը դողան կոմունիստական հեղափոխության առաջ։ Պրոլետարները նրա մեջ կարող են կորցնել միայն իրենց շղթաները։ Իսկ ձեռք կբերեն ամբողջ աշխարհը։ Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1924 թ. հունվ. 1-ին — 1928 թ. հունվ. 1-ին



ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ



Բանվորներ — Բատրակներ — Գյուղացիներ — Ծառայողներ — Արհեստավորներ և տնայնագործներ



ՀԱՄ. ԿՈՄ. ԿՈՒՍ. (Բ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՍԽԵՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

III ՊՐԱԿ

Էջ

1. Համ. Կոմկուսը (բ) բանվոր դասակարգի առաջավոր ջոկատն է 3
2. Համ. Կոմկուսի (բ) կանոնադրության հիմունքները . . 34
3. Համ. Լենինյան Կոմյերիտմիություն 66
4. Համաշխարհային հեղափոխության ուղիները 93
5. Համաշխարհային հեղափոխության ուղիները (շարունակություն) 112

II ՊՐԱԿ

1. Կուսակցության տնտեսական քաղաքականության հիմքերը:
2. Կուսակցության անելիքները արդյունաբերության բնագավառում:
3. Կուսակցության անելիքները գյուղական տնտեսության բնագավառում:
4. Կուլտուրական հեղափոխություն:
5. Սոցիալիզմի շինարարների նոր կադրերի պատրաստումը:

I ՊՐԱԿ

1. ԽՍՀՄ յեվ կապիտալիստական աշխարհը:
2. Կապիտալիստական հասարակակարգը:
3. Իմպերիալիզմը կապիտալիստական հասարակակարգի վերջին աստիճանն է:
4. Պրոլետարական հեղափոխությունը յեվ պրոլետարիատի դիկտատուրան:
5. Կոմունիզմը—պրոլետարիատի վերջնական նպատակն է:

ՀՀ Ազգային գրադարան
NL0194537

11149

45 ч.

УЧЕБНИК
для городских комсомольских политшкол
вып. III

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10